ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ե՞ՐԲ Է ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀՌՉԱԿՎԵԼ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ

Ընդամենը շուրջ մեկ հնգամյակ է անցել այն օրից, երբ հայ ժողովուրդը մեծ հանդիսավորությամբ Հայրենիքում և Սփյուռքում նշեց Քրիստոնեության պետական կրոն հռչակվելու 1700-ամյակը: Թվում է, թե բոլոր հարցերը ճշտված են և 301 թվականին Մեծ Հայքի թագավորությունն, անտարակույս, ընդունել է նոր վարդապետությունը, որն այնքան անհրաժեշտ էր ավատատիրական հասարակարգ թևակոխած մեր Հայրենիքին: Այսուհանդերձ, պատմագիտության մեջ հայտնված իրարամերժ տեսակետները, որոնք բոլորն էլ զարմանալիորեն հենվում են սկզբնաղբյուրների միևնույն հաղորդումների և տեղեկությունների վրա, ստիպում են մտածել, որ այս խնդիրը պատմագիտության մեջ ցայսօր իր լուծումը չի ստացել և անգամ մեր օրերում շարունակում է մնալ գիտական բանավեճերի առարկա: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ մենք ևս երկար ժամանակ եղել ենք a priori 301 թվականի կողմնակից և երբեք չենք անդրադարձել այդ խնդրին, սակայն 1999 թվին Վիեննայում կայացած «Կովկասի քրիստոնեացումը» գիտաժողովի ժամանակ մենք արժանացել ենք պրոֆ.դոկտոր Վերներ Զայբտի քննադատությանը, որ իբր չգիտենք անգամ, թե քրիստոնեությունը 301 թվին չէր կարող հռչակվել պետական կրոն Հայաստանում, հանգամանք, որը չենք թաքցնում, խորապես վիրավորեց մեր արժանապատվությունը և մեզ հարկադրեց անդրադառնալու Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակելու տարեթվին և, ի զարմանս մեզ համոզվելու, որ այն ոչ մի դեպքում չէր կարող տեղի ունենալ 301 թվականին: Ուսումնասիրության ընթացքում, որին ձեռնարկելու համար մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում պրոֆ.,դոկտոր Վ.Զայբտին՝ այդ խնդրի վրա մեր ուշադրությունն ակամա հրավիրելու համար, միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ հարգարժան բյուզանդագետի կողմից պաշտպանված 314 կամ 315 թվականը նույնպես քննություն չի բռնում: Այժմ, երբ մեր ուսումնասիրությունն ավարտված է և, գոնե մեր կարծիքով, միանգամայն փաստարկված, կամենում ենք գիտական շրջանակներին և ընթերցող լայն հասարակայնությանը ներկայացնել մեր քննության արդյունքները:

Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակումը, որչափ մեզ հայտնի է, առաջին անգամ 301-ով է թվագրել Ասողիկը, որն՝ անդրադառնալով հայոց տոմարի կարգադրմանը, գրել է, որ Մեժեժ (իմա՛ Մժեժ- Բ.Հ.) Գնունու յոթերորդ տարում հայրապետական աթոռ բարձրացած Բագրևանդ գավառի Աշտարակք գյուղից Տեր Ներսեսն իր աթոռակալության չորրորդ և Մեժեժի իշխանության տասներորդ տարում Դվնում ժողով է գումարում և կարգում հայոց թվականը «... ի ԺԴ- ն Յուստինիանոսի կայսեր, որ զսուրբն Սոփիա շինեաց, և ԻԴ-ն Խոսրովայ, որդւոյ Կաւատայ Պարսից արքայի: Յորում ամի սուրբն Յեզիտբուզիտ կատարեցաւ ի Քրիստոս: Եւ Հայք յաղղմ ամի և յայդմ ժամանակի ի բաց կացին ի Յունաց հաղորդութենէ: Եւ էր Յունաց թուականն յԴ՝ յէ ամէն Փիլիպպոսի կայսեր:

Ժողովի ամենայն ժամանակն ի ծննդենէ փրկչին մինչև ցժողովն Դունայ և ցթուականն Հայոց ամք ՇՕԳ և ի լուսաւորութենէ սրբոյն Գրիգորի, որ է սկիզբն աստուածածանօթութեան աշխարհիս Հայոց ամք ՄՕԲ»[1]:

Արդ, ի՞նչ կարելի է եզրակացնել բերված հաղորդումից: Պարզվում է, որ Քրիստոսի ծննդից մինչև Դվնի ժողովն անցել է 553 տարի, իսկ Գրիգոր Լուսավորչի կողմից իրականացված հայոց դարձից՝ 252 տարի, հետևաբար քրիստոնեությունը, եթե մենք Քրիստոսի ծնունդը դնում ենք մ.թ. 1 թվականին, պետական կրոն է հռչակվել 301 թվին: Դերևս մի պահ վերանանք այն իրողությունից, որ Քրիստոսի ծնունդը դնում են միանգամայն այլ թվականի, սակայն արձանագրենք, որ այս հաղորդումը ժամանակագրական մի քանի տվյալներ էլ ունի, որոնք բացատրության կարիք են զգում: Ասողիկի երկի հրատարակիչ Ստ. Մալխասյանը ժամանակին տվել է իր մեկնաբանությունները, որոնք մենք միանգամայն տեղին ենք համարում ներկայացնելու ընթերցողին: Անդրադառնալով «Եւ էր Յունաց թուականն յԴ (304)՝- յէ(7) ամէն Փիլիպպոսի կայսեր» տեղեկությանը, նա իրավացիորեն ցույց է տալիս, որ երկրորդ թիվը վրիպակ է և գրչի տգիտության արդյունք, քանի որ Փիլիպպոս կայսրն իշխել է 244-249 թթ., այսինքն 5 կամ ծայրահեղ դեպքում 6 տարի, հետաբար՝ « յէ ամէ» արտահայտությունը պետք է կարդալ «յե ամէ» , շփոթ, որ հաճախ է հանդիպում հայկական ձեռագրերում է և Ե տառերի նմանության պատճառով: Հեղինակը նաև համաձայն չէ Մ. Էմինի սրբագրությանը, որով հիշյալ հատվածը ստացել էր «307-րդ ի Փիլիպպոսի կայսերէ» տեսքը և իբր դրանով թվականն արդարև զուգադիպում է 553 թվին: Ստ.Մալխասյանը փաստարկված ցույց է տալիս, որ Մ. Էմինի սրբագրությունը միայն էլ ավելի է խաթարում բնագիրը, քանի որ 243-ին գումարելով 307 ստացվում է ոչ թե 553, այլ 550: Ըստ որում, միաժամանակ անբացատրելի է մնում «թուականն Յունաց 304» արտահայտությունը, որը Մ.Էմինի սրբագրությունից հետո ընդհանրապես անիմաստ է դառնում: Շարունակելով իր

միտքը զարգացնել, փորձառու հայագետը տալիս է տվյալ արտահայտության իր բացատրությունը: Հայտնի է, որ Հունաց, սակայն իրականում Հռոմեական թվականը հաշվվում է Հռոմի հիմնադրումից, որն ըստ Վարրոնյան (Վառոնյան) հաշվարկի համապատասխանել է մ.թ.ա. 753 թվականին: Մ.թ. 247 թվականին, ըստ այդ հաշվարկի Փիլիպպոս կայսեր իշխանության չորրորդ տարում լրանում էր Հունաց թվականի 1000 տարին և այն համարվեց «Առաջին հազարամեակ», հետևաբար 248 թվին սկսվում էր երկրորդ հազարամյակը կամ 1001 թվականը: Սակայն հայ պատմագիրները չէին հաշվում 1001, 1002, ... 1100 և այլն,այլ տարեթվերը ներկայացնում էին 1, 2, ...100 և հետագա տարիներով, ավելացնելով, որ հաշվարկը կատարվում է Փիլիպպոս կայսեր հինգերորդ տարվանից:[2] Այսպիսով գումարելով 304 և 247 թվականները, ստանում ենք փրկչական թվականով մեր տոմարի հաստատման 551 տարին կամ Քրիստոսի ծննդից հետո 553 թվականը:[3] Այժմ կարելի է անդրադառնալ նաև Քրիստոսի ծննդյան թվականի խնդրին, քանի որ այն սովորաբար դնում են մ.թ.ա. 2 թվականին:

Հակառակ թվացյալ ներդաշնակությանը, այնուամենայնիվ, սույն հաղորդման մեջ կան տեղեկություններ, որոնք հակասության մեջ են վերը բերված թվականներին: Այսպես, Հուստինիանոս Ա կայսեր, որը կառուցեց սբ. Սոփիայի տաճարը, 14-րդ տարին 541 թվականն է, իսկ Խոսրովի 24-րդ տարին՝ 554 կամ 555 թվականը: Եվ, եթե Խոսրովի 24-րդ տարին կամ 554 թվականը համապատասխանում է Դվինի ժողովի հրավիրման տարեթվին, ապա մյուսի ԺԴ-ն ԻԴ սրբագրելու դեպքում էլ տալիս է ոչ թե ժողովի,այլ տոմարի տարին՝ այսինքն 551 թվականը: Սակայն այս խնդիրներին անդրադառնալը ոչ մի իմաստ չունի, քանի որ չեն առնչվում հայոց դարձի թվականին:

Ժամանակագրական առումով քրիստոնեության պետական կրոն հռչակելու տարեթվին հաջորդն անդրադարձել է Վենետիկյան Մխիթարյան Միքայել Չամչյանը, որը՝ թվականը ճշտելիս, հենվում է Պատմահոր երկու արժեքավոր հաղորդումների վրա: Մովսես Խորենացին՝ հիշատակելով Տրդատ Մեծի գահակալությունը, գրում է. «Քանզի ոչ է պատմութիւն ճշմարիտ առանց ժամանակագրութեան, վասն որոյ և մանրախուզիւ քննեալ՝ գտաք զթագաւորելն Տրդատայ յերրորդ ամի Դիոկղետիանոսի,...»[4], իսկ անդրադառնալով Գրիգոր Լուսավորչի ձեռնադրությանը, նշում է, որ «Յեօթն և ի տասներորդի ամ թագաւորութեանն Տրդատայ գտաք նստեալ յաթոռ սրբոյ առաքելոյն Թադէոսի զհայրն մեր Գրիգորիոս և ըստ Աւետարանի ծնող»:[5] Հիմք ունենալով Տրդատ Գ-ի՝ Դիոկղետիանոսի երրորդ տարում թագավորելու փաստը, Մ. Չամչյանը հայոց Տրդատ թագավորի գահակալությունը թվագրում է 286-ով, Հռիփսիմյանց կույսերի նահատակությունը և

Գրիգոր Լուսավորչի Խոր Վիրապից դուրս գալը 301-ով, Գրիգոր Լուսավորչի և հայ մեծամեծների ուղևորությունը Կեսարիա և եպիսկոպոսապետ ձեռնադրելը՝ 302-ով, թագավորի, նախարարների, զորքի ու ժողովրդի մկրտությունը՝ 302-ով և Վաղարշապատի սբ.Էջմիածնի շինությունը՝ 303-ով:[6]

Հայոց դարձի թվականին անդրադարձել է Հայոց եկեղեցու պատմության մեծ երախտավոր Մ. Օրմանյանը, որի համար կրկին հիմք են ծառայել Պատմահոր վերաբերյալ հաղորդումները: Սակայն նա՝ ի տարբերություն Մ.Չամչյանի, Տրդատ Գ-ի գահակալության սկիզբը դնում է 287 թվին, բնականաբար, նույն տարեթվով նաև Գրիգոր Լուսավորչի Խոր Վիրապում բանտարկվելը: Հռիփսիմյանց կույսերի նահատակությունը նա, այնուամենայնիվ, դնում է 301-ին, Գրիգոր Լուսավորչի Խոր Վիրապից դուրս գալը Տրդատի գահակալության 13-րդ տարում, որը հեղինակի կարծիքով տեղի է ունեցել նույն 301 թվին: Շարունակելով իր տեսակետները զարգացնել, Մ. Օրմանյանը գտնում է, որ Գրիգոր Լուսավորչի բժշկությունները կատարվել են 301 թվի նոյեմբերի 26-ին և հաջորդ 302 թվականի հունվարի 25-ին, նրա ձեռնադրությունը՝ 302 թվականի առաջին ամիսներին, քանի որ մեկ տարի անց Հռոմեական կայսրությունում սկսվեցին քրիստոնյաների հալածանքները Դիոկղետիանոս կայսեր կողմից, իսկ Տրդատ Գ-ի մկրտությունը 303 թ. հունվարի 6-ին:[7]

Դժվար չէ տեսնել, որ՝ չնայած որոշ տարբերություններին, երկու հեղինակների մոտեցումներն ընդհանուր առմամբ իրար նման են: Սակայն 20-րդ դարի 30-50-ական թվականներին ծնունդ առան նոր տեսակետներ ու հարցադրումներ, որոնք բոլորովին նորովի էին մոտենում Հայոց դարձի թվագրմանը: Հայ պատմագիտության մեծավաստակ երախտավոր Ն. Ադոնցի կարծիքով քրիստոնեությունը պետական կրոն էր հռչակվել 288 թվին:[8] Ստ.Մալխասյանը այն դնում է 279 թվին, Հ. Ն. Ակինյանը՝ 219-ին, Ե. Քասունին՝ 294-ին, իսկ Հ. Մանանդյանը, նրան հետևող Հ.Պ.Անանյանը և ,,История Древного мира,, աշխատության հեղինակները՝[9] 314-315-ին: Առաջարկված տեսակետները քննության է առել Հ.Պ.Անանյանը, որը թվականների առատությունն ամենից առաջ արդյունք է համարում սկզբնաղբյուրների անբավարար տեղեկությունների[10]: Ըստ հեղինակի,Հայոց դարձի գլխավոր աղբյուրը՝ Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց»-ն, ըստ էության, բառիս իսկական իմաստով ժամանակագրություն չունի: Հնարավոր չէ այդ աշխատությամբ պարզել ոչ միայն 3-րդ դարի առաջին կեսի քիչ թե շատ վստահելի ժամանակագրությունը, այլև Տրդատ Գ-ի ծնունդը, նրա «Յունաց» կողմերում գտնվելու ժամանակահատվածը, գահակալության սկիզբը, Գրիգոր Լուսավորչի Խոր Վիրապից դուրս գալու տարին, ձեռնադրության ու Հայոց դարձի տարեթվերը[11]:

Մ.Լ.Շոմոնի կարծիքով «Ամեն դեպքում այդ տարօրինակ դարձը կարող էր տեղի ունենալ Դիոկղետիանոսի հրաժարականից բազում տարիներ անց»[12], այսինքն 305 թվի մայիսից շատ հետո: Տառացիորեն վերջերս Հայոց դարձի թվագրման նոր տարբերակով հանդես եկավ երիտասարդ ուսումնասիրող Ռ. Մանասերյանը, որի կարծիքով այդ կարող էր տեղի ունենալ ամենայն հավանականությամբ 304-306թթ. միջոցին:[13] 2001 թվին Հայոց դարձի թվականին նվիրված հոդվածով հանդես եկավ Գ. Բրուտյանը, որը փորձում է հիշյալ տարեթիվը պարզել հայ մի քանի հեղինակների նյութերի համաձայն:Հեղինակը գալիս է այն եզրակացության, որ եթե Աթանաս Տարոնացին Հայոց դարձը դրել է 299 կամ 300 թվին, ապա Անանիա Շիրակացին այն թվագրում է Դիոկղետիանոս կայսեր գահակալության ամբողջ շրջանով՝ 284-305թթ., Ստեփանոս Ասողիկը՝ 299 կամ 300 թվո՞վ, Հովհաննես Կոզեռնը՝ 276-ով, Հովհաննես Սարկավագը՝ 298-ով, Սամվել Անեցին՝ 303-ով և Հակոբ Ղրիմեցին՝ ամենայն հավանականությամբ՝ 298-ով:[14] Եվ եթե Ռ. Մանասերյանը նոր ուժեղ կռվաններ չի բերում, անգամ չի էլ նկատել որոշ ուշագրավ հաղորդումներ, սակայն նրա տրամաբանանկան կառույցը բավականին ամուր է, ապա Գ. Բրուտյանի դեպքում, եթե նման քննությունը, գոնե, մեր կարծիքով, կարող է օգտակար լինել հիշյալ հեղինակների ժամանակագրական համակարգն ուսումնասիրելու համար, ապա ինչքան էլ մեկնաբանենք կամ լուսաբանենք հիշյալ հեղինակների երկերում մեզ հասած տոմարական տվյալները, վերջիններս կամ նորություն չեն պարունակում կամ էլ բացահայտ աղավաղված են: Վերցնենք, օրինակի համար, Ասողիկի երկը, որն ամբողջությամբ, եթե չհաշվենք աննշան տարբերությունները, հետևում է Պատմահոր աշխատությանը: Հասկանալի է, որ նրա հաղորդումները զուրկ են ինքնուրույնությունից, ուստի՝ փորձել դրանց հիման վրա պարզել Հայոց դարձի թվականը, պարզապես անիմաստ է: Վերջապես կատարված քննությունը կորցնում է իր ամեն տեսակի այժմեականությունը, եթե նկատի ունենանք, որ Աթանագինեսը, որի մասունքները Հայաստան բերեց Գրիգոր Լուսավորիչը, նահատակվել է 303 թվի հուլիսի 17-ին:

Չխորանալով այլևս Գ.Բրուտյանի քննության մանրամասների մեջ, որոնք բոլորովին չեն նպաստում Հայոց դարձի թվականի ճշգրտմանը, փորձենք համառոտակի անդրադառնալ վերն արտահայտված կարծիքներին, քննության առնենք խնդիրն իր ամբողջության մեջ և աշխատենք ճշտել Հայոց դարձի թվականը՝ հնարավորության շրջանակներում հետազոտության մեջ ներգրավելով նոր նյութեր, որոնք զարմանալիորեն ցայսօր չեն արժանացել ուսումնասիրողների հավուր պատշաճի ուշադրությանը: Ասենք, որ խնդրիս մեջ պարզություն են մտցնում Պատմահոր վերը բերված հաղորդումները Տրդատի գահակալության սկզբի և

Գրիգոր Լուսավորչի ձեռնադրության տարեթվերի մասին, որոնք՝ հաշվի առնելով ևս մի քանի իրողություններ, միանգամայն խոսուն են դառնում Ագաթանգեղոսի երկի տվյալների հիման վրա:

Պատմահոր հաղորդումների համաձայն՝ հիմք ընդունելով Տրդատ Գ արքայի գահակալության սկիզբը 286 կամ 287 թվին, կարելի է Գրիգոր Լուսավորչի ձեռնադրությունը դնել 302, 303 և անգամ 304 թվականներին: Այսուհանդերձ, ինչպես ճիշտ նկատում է Ռ. Մանասերյանը, մտածելու տեղիք է տալիս մի շատ կարևոր հանգամանք, թե որքանո՞վ են վավերական Պատմահոր հաղորդումները, որովհետև հայտնի չէ, թե դրանք քաղված են մի ինչ-որ հին և վստահելի աղբյուրից, թե հեղինակի ինքնուրույն քննության արգասիքն են:[15] Համենայն դեպս, այն հանգամանքը, որ Խորենացու երկի քաջագիտակներից մեկը՝ Ստ.Մալխասյանը եկել է այն եզրակացության, թե Պատմահոր մոտ Դիոկղետանիոսի գահակալության սկիզբն ընկնում է 260-ին, ուստի Տրդատ Գ-ի գահակալության սկիզբը և Հայոց դարձը պետք է թվագրել համապատասխանաբար 263 և 279 տարեթվերով,[16] խորհելու տեղիք է տալիս: Անգամ այն տեղեկությունը, թե Գրիգոր Լուսավորիչը ձեռնադրվել է Տրդատի 17-րդ տարում, որ՝ ուսումնասիրողների մեծ մասի կարծիքով պետք է վավերական լինի, կարող է որոշակի տարեթվի վերածվել միայն այն դեպքում, եթե վերջնականապես ճշտվի Տրդատ Գ-ի գահակալության սկիզբը: Այսուհանդերձ, ինչպես առաջիկայում կհամոզվենք, ձեռնադրության համար բերված Տրդատի 17-րդ տարվա տեղեկությունը մեծապես արժանի է ուշադրության, քանի որ հանդիպում է ոչ միայն Խորենացու, այլև մի քանի այլ հեղինակների երկերում:

Պայտմահայրը Տրդատ Գ-ի գահակալությունը դրել է Դիոկղետիանոսի երրորդ տարում, սակայն Ուխտանեսի հաղորդմամբ , նա թագավորել է հռոմեական Պռոբոս կայսեր օրոք, տեղեկություն, որ նա քաղել է Զենոբ պատմիչի պատմությունից, ինչպես նաև Կայսերաց գրքից:[17] Սակայն, ինչպես ճիշտ նշում է Հ. Պ. Անանյանը, Ուխտանեսի օգտագործած Զենոբի պատմության ձեռագիրը հազիվ թե նույնական է մեզ ծանոթ Զենոբ Գլակի երկի հետ, որովհետև մեզ հասած ձեռագրերում այս տեղեկությունը բացակայում է:[18] Հասկանալի է, որ ուսումնասիրողները չէին կարող անցնել նշված տեղեկության կողքով, որը և պատճառ է դարձել, որ որոշ հետազոտողներ Տրդատ Գ-ի թագավորության սկիզբը թվագրեն Պրոբոս կայսեր (276-282) երրորդ տարով, այսինքն՝ 278-ով, որի արդյունքում Հայոց դարձը, ինչպես կարծել է Ե. Քասունին, եղել է 291 թվականին:[19] Տրդատ Գ-ի այսպես կոչված առաջին գահակալության տարեթվին մի փոքր այլ կերպ է մոտեցել Ս.Երեմյանը, որը՝ հետևելով Մ. Օրմանյանին,[20] այն դնում է 274-ին և գտնում, որ 276-ին Տրդատ Գ-ն պարսիկների ռազմական ճնշման ներքո ստիպված է լինում թողնել Հայոց

թագավորությունը:[21] Ս. Երեմյանը հիշյալ թվականը փորձում է հիմնավորել նաև Պատմահոր այն տեղեկությամբ, թե Տրդատ Գ-ն թագավորել է 56 տարի:[22] Եվ եթե նա մահացել է 330թ., ինչպես իրավացիորեն ենթադրում են ուսումնասիրողների մեծ մասը, ապա նրա թագավորության առաջին տարին պետք է համապատասխաներ 274 թվականին:[23]

Առաջացած քաոսն էլ ավելի է խորացնում Սեբեոսի երկի Գ գլխում պահպանված այն տեղեկությունը, թե «Յամին ԼԲ-երորդի Արտաշրի, հնգետասաներորդի Դիոկղետիանոսի, կայսերակերպ շքեղութեամբ Տրդատիոս ելանէ ախոյեան ընդդէմ արքային Գդաց: Եւ անդէն ձերբակալ արարեալ զախոյեանն անարի զթագաւորն Գդաց՝ ածեալ կացուցանէ յանդիման կայսերն Դիոկղետիանոսի. եւ անդէն ի նմին ամի թագաւորեցուցանէ Դիոկղետիանոս զՏրդատ ի վերայ աշխարհիս Հայոց: Գումարէ ի ձեռս սորա զաւրս բազումս եւ արձակէ յիրական իշխանութիւն աշխարհիս Հայոց: Որ տիրէ ամենայն քաջութեամբ և բարեպաշտութեամբ ամս Հ: Եւ է այսպէս. Արտաշիր՝ ԼԲ. Դիոկղետիանոս՝ ԺԵ: Տրդատէս զառաջինն»:[24] Առայժմ մի կողմ թողնենք Տրդատ Գ-ի առաջին և պարսից Արտաշիր թագավորի իշխանության 32-րդ տարվա համապատասխանության խնդիրը, որը ջուր վերցնող հարց է և տվյալ դեպքում ոչնչով չի օժանդակում մեր քննությանը, և նշենք, որ Դիոկղետիանոս կայսեր 15-րդ տարին համապատասխանում է 298 թվին, իսկ այդ դեպքում Գրիգոր Լուսավորչի ձեռնադրությունը, կամա թե ակամա, ստիպված ենք թվագրել 314 կամ 315 տարեթվերով, ինչին հանգել են Հ. Մանանդյանը, Հ. Պ. Անանյանը և ուրիշներ:

Հ. Պ. Անանյանը քննության է առել արտահայտված կարծիքների մեծ մասը՝ ցույց տալով յուրաքանչյուրի առաջքաշման կռվանները և խոցելի կամ ուժեղ կողմերը:[25] Ելնելով խնդրի շահեկանությունից, մենք այժմ համառոտակի կանդրադառնանք հիշյալ և մյուս տեսակետների ու կարծիքների ոչ միայն հիմնավորման հարցին, բերված փաստարկներին, այլև կփորձենք համակողմանի քննությամբ պարզել դրանց ընդունելի կամ ոչ ընդունելի լինելը:

Այլևս չանդրադառնալով Մ. Չամչանի և Մ. Օրմանյանի հաշվարկներին, որոնց հիմքում ընկած էր Տրդատի գահակալությունը Դիոկղետիանոս կայսեր իշխանության երրորդ տարով և Գրիգոր Լուսավորչի ձեռնադրությունը Տրդատ արքայի աթոռակալության տասնյոթերորդ տարով թվագրելը, անցնենք բավական կուռ թվացող Ստ. Մալխասյանի առաջարկած 279 թվականին: Հիմք ունենալով Մովսես Խորենացու վերոբերյալ հաղորդումները, ճանաչված հայագետը ընթացել է քննության մեկ այլ ճանապարհով: Նրա հաշվարկների համաձայն, որոնք խարսխված են Պատմահոր ժամանակագրական աղյուսակների վրա, Տրդատ Գ-ի գահակալությունից մինչև Հայ Արշակունիների թագավորության անկումը կազմել է

165, իսկ Գրիգոր Լուսավորչի ձեռնադրությունից մինչև Սահակ կաթողիկոսի մահը կաթողիկոսների աթոռակալության ընդհանուր տևողությունը՝ 160 տարի, ուստի՝ ելնելով այն իրողությունից, որ Հայ Արշակունիների հարստությունն ընկել է 428 թվին, իսկ Սահակ Պարթև կաթողիկոսը մահացել է 438 (իրականում՝ 439-ին- Հ.Բ.) թվականին, Տրդատ Մեծի գահակալության սկիզբը դնում է 263 թվին՝ (428-165=263), իսկ Գրիգոր Լուսավորչի ձեռնադրությունը 279-ին (438-160=279):[26] Հեղինակը 263 թվականն ստանում է նաև մեկ այլ ճանապարհով: Հաշվարկն սկսելով պարթևական Արտավան Ե թագավորի սպանությունից, որ՝ ըստ նրա, ճշգրիտ ժամանակագրությամբ տեղի է ունեցել 226-ին, դրան հավելելով հայոց Խոսրով թագավորի Արտաշիր Պապականի դեմ մղած կռիվների 10 տարին, այսինքն մինչև նրա սպանվելը Անակի կողմից, Հայաստանում պարսկական տիրապետության 26 տարիները Արտաշիրի և մեկ տարին Շապուհ Ա-ի օրոք (286+10+26+1) նա կրկին ստանում է 263 թվականը: Անկախ այն հանգամանքից, թե որքան հաջող են կատարված հաշվարկները, պարզ է մի բան, որ, ինչպես նշում է Հ. Պ. Անանյանը, նման մոտեցումը ոչ մի կերպ չի համադրվում Պատմահոր այն տեղեկությանը, թե Տրդատ Մեծը սկսել է թագավորել Դիոկղետիանոսի իշխանության երրորդ տարվանից:[27] Ճիշտ է, Ստ. Մալխասյանը փորձում է այդ անհարթությունը վերացնել հռոմեական և բյուզանդական կայսրերի ժամանակագրության Պատմահոր կողմից իրականից 23-26 տարով ետ տանելով, սակայն խնդիրը դրանով չի լուծվում: Ի պատիվ հեղինակի պետք է ասել, որ նա Դիոկղետիանոսի գահակալության սկիզբ համարվող 260 թվականը ստանում է նաև Սեբեոսի Անանունի ցանկերից: Վերջինիս համաձայն «Յամին երեք տասաներորդի կենարարին եւ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի թագաւորէ Դիոկղետիանոս»:[28] Ցույց տալով, որ Կենարարին կոչված թվականը իրականում Հունաց կոչվող տոմարն է, որի հազարամյակը լրանում է 247թ., նա 247 թվին գումարում է 13 և ստանում Դիոկղետիանոսի գահակալության համար 260 թվականը: Ինչպես ճիշտ գրում է Հ. Պ. Անանյանը, հայերը սխալմամբ կարծում էին, որ Դիոկղետիանոսը իշխել է Հունաց թվականի 13-րդ տարում, որը և շփոթության մեջ է գցել հանճարեղ Պատմահորը:[29] Բարձր գնահատելով հանդերձ Ստ.Մալխասյանի կատարած հաշվարկները, մտքի սրությունը, այնուամենայնիվ, Մխիթարյան միաբանը նշում է, որ՝ օգտագործելով հանդերձ Խորենացու տեղեկությունները, չի կարելի լոկ նրան վստահել և անտեսել այլ պատմագիրների ժամանակագրական տվյալները, քանի որ՝ ընդունելով Տրդատի գահակալության սկիզբը 263-ին և Գրիգոր Լուսավորչի ձեռնադրությունը 279-ին, ստիպված ենք Արիստակեսի հայրապետությունը դնել 308-315 թվերին:[30] Սակայն այդ դեպքում նա

չէր կարողանա մասնակցել Նիկիայի 325թ. ժողովին, իրողություն, որ հավաստում են ոչ միայն հայկական, այլև օտար աղբյուրները:[31]

Անշուշտ, միայն այս հանգամանքը բավական է, որպեսզի Ստ.Մալխասյանի առաջարկած վարկածը մենք մերժենք անվերապահորեն: Սակայն, խնդիրը ցավոք, միայն դրանով չի ավարտվում, որովհետև Ստ. Մալխասյանի հաշվարկները ևս մի խոցելի կողմ ունեն, որը միանգամայն փոխում է եզրակացությունների բնույթը: Սկսենք այն հանգամանքից, որ Տրդատի գահակալությունից մինչև Հայ Արշակունիների թագավորության անկումը ոչ թե 165 տարի է, ինչպես կարծում է Ստ. Մալխասյանը, այլ ընդամենը 163 կամ մոտավորապես 163 տարի:[32] Այդ իրողությունը ցույց տալու համար Ստ. Մալխասյանի պես կրկին բարձրացնենք Պատմահոր ժամանակագրական տվյալները: Ըստ Մովսես Խորենացու դրանք ներկայացնում են ներքոհիշյալ պատկերը. Տրդատ Մեծ - 56, Խոսրով Կոտակ - 9, Տիրան - 11, Արշակ Բ - 30, Պապ - 7, Վարազդատ - 4, Արշակ Գ և Վաղարշակ - 8, Խոսրով Վերջին-5, Վռամշապուհ - 21, Խոսրով Վերջին երկրորդ անգամ- 1, Շապուհ պարսից արքայորդի - 4, անիշխանության շրջան - 3, Արտաշես կամ Արտաշիր - 6, այսինքն ընդամենը 165 տարի: Հայ կաթողիկոսների ժամանակագրական ցանկն ունի հետևյալ պատկերը. Գրիգոր Լուսավորիչ - 30, Արիստակես - 7,Վրթանես - 15, Հուսիկ-6, Ներսես Մեծ - 34, Սահակ (Շահակ) - 4, Զավեն - 4, Ասպուրակես - 5, Սահակ Պարթև - 51, այսինքն ընդամենը 160 տարի:[33] Դժվար չէ սակայն տեսնել, որ ճանաչված հայագետը թույլ է տվել առաջին հայացքից աննշան, բայց իրականում մի լուրջ սխալ, որի պատճառն այն է, որ նա Մեծ Հայքի թագավորության փաստական բաժանումից հետո երկուսուկես տարի իշխած Արշակ Գ-ի ժամանակը հաշվարկել է միաժամանակ իշխած Խոսրով Գ-ի տարիների հետ մեկտեղ՝ փոխանակ այն հաշվարկից դուրս թողնելու: Հետևաբար՝ ըստ Մովսես Խորենացու, Դիոկղետիանոսի գահակալության սկիզբն ընկնում է ոչ թե 260-ին, այլ 262-ին, քանի որ այդ հաշվարկով Տրդատի գահակալությունն ընկնում է ոչ թե 263-ին, այլ 265-ին: Այս կարծես թե աննշան սխալը, որ թվում է, թե ոչնչով չպետք է ազդի ընդհանուր տրամաբանական եզրակացության վրա, իրականում իր մեջ շատ կարևոր գաղտնիք է պարունակում, որին կանդրադառնանք ստորև:

Ն. Ադոնցի տեսակետին մենք չենք անդրադառնում, քանի որ այն մեր քննությանը առանձնապես նպաստ չի բերում: Ուստի առավել կարևոր ենք համարում անդրադառնալ Երվանդ Քասունու տեսակետին,[34] որի համաձայն Հայոց դարձը կատարվել է 291, իսկ Գրիգոր Լուսավորչի ձեռնադրությունը՝ 294 թվին: Սփյուռքահայ ուսումնասիրողի եզրակացությունները հիմնված են Ուխտանեսի այն հաղորդման վրա, որի համաձայն Տրդատին թագադրել է Պրոբոս կայսրը: Հենվելով

Ագաթանգեղոսի տվյալների վրա և Խոսրով Մեծի մահը դնելով 251 թվին, երբ Շապուհ Ա-ն՝ հաղթելով Փիլիպպոս կայսրին, Միջագետքն ու Հայաստանը ռազմակալեց, հեղինակն այնուհետև հետևում է Պատմահոր ժամանակագրությանը և՝ 251-ին հավելելով վերջինիս հիշատակած օտար իշխանության 27 տարին, Տրդատի գահակալության սկիզբը դնում է 278-ին: Այս մոտեցման դեպքում, անտարակույս, Ուխտանեսի հաղորդումը Տրդատի Պրոբոսի կողմից թագադրվելու մասին, կարծես թե, հիմնավորում է ստանում, քանի որ Պրոբոսն իշխել է 276-282թթ.: Անշուշտ, այս մոտեցման դեպքում Գրիգոր Լուսավորչի ձեռնադրությունը կարող է ընկնել 294-ին կամ ծայրահեղ դեպքում 295-ին: Հ.Պ. Անանյանը Ե. Քասունու ուսումնասիրությունը շատ ավելի կատարյալ է համարում, իսկ լուծումներն էլ բանական, գտնելով, որ նա չի սահմանափակվում միայն Խորենացիով, այլ ըստ ամենայնի օգտագործում է թե՛ Պատմահոր և թե՛ Ագաթանգեղոսի ու Ուխտանեսի տվյալները՝ այդ առումով էապես տարբերվելով Ստ. Մալխասյանից:[35] Այս հաշվարկների դեպքում, իրոք, հնարավոր է դառնում Արիստակեսի մասնակցությունը Նիկիայի ժողովին, սակայն Հ. Պ. Անանյանը, այնուամենայնիվ գտնում է, որ այդ դեպքում էլ բացատրություն չի ստանում Սեբեոսի տեղեկությունը Տրդատ Գ-ի՝ Դիոկղետիանոսի 15-րդ տարում գահ բարձրանալու մասին:[36] Հարկ ենք համարում նշել, որ Տրդատ Գ-ի՝ Դիոկղետիանոս կայսեր 15-րդ տարում գահակալելու մասին տեղեկությունը, որին այնքան կարևորություն է տալիս Հ.Պ. Անանյանը, և որն առաջին հայացքից կարծես թե շատ ուժեղ կռվան է, ինչպես շուտով կտեսնենք, իրականում խնդրի լուծման մեջ էական դերակատարություն չունի, քանի որ կան մի շարք հանգամանքներ, որոնք հեղինակը հաշվի չի առել կամ էլ եզրակացությունները կառուցել է բավականին խախուտ հիմքի վրա: Նախ և առաջ, ապացուցման կարիք ունի Խոսրով Մեծի սպանությունը 251-ով թվագրելը և, վերջապես, հեղինակը բոլորովին հաշվի չի առել մի այնպիսի իրողություն, ինչպիսին Կեսարիայում ձեռնադրված Գրիգոր Լուսավորչի կողմից Աթանագինեսի մասունքները Հայաստան բերելն է:[37] Ինչպես վերը նշեցինք, Աթանագինեսը նահատակվեց 303 թվականի հուլիսի 17-ին, հետևաբար, ինչ ձևով էլ խնդրին մոտենանք, Գրիգոր Լուսավորչի ձեռնադրությունը չէր կարող տեղի ունենալ 303 թվից առաջ: Ուստի այս ամբողջ կառույցը, որքան էլ որ այն արտաքնապես տրամաբանական ու բանական լինի, չի համապատասխանում պատմական ճշմարտությանը և ընդունելի չէ:[38]

Մխիթարյան միաբան Հ. Ն. Ակինյանի կողմից Հայոց դարձի թվագրումը այնքան անտրամաբանական է, որ կարծես թե քննարկման կարիք էլ չունի: Ինչպես արդեն նշեցինք, նա Հայոց դարձը դնում է 219 թվին,[39] որն անհարիր է մեզ հասած բոլոր սկզնաղբյուրների տեղեկություններին: Լոկ նշենք, որ Մխիթարյան միաբանի

տեսակետին առավել քան հանգամանալից անդրադարձել է Հ.Պ. Անանյանը արձանագրելով, որ հեղինակը նման եզրակացության է հանգել երկու պատճառով: Փավստոս Բուզանդը՝ նկարագրելով պարսից Ներսեհ թագավորի (293-302) պատերազմը Հունաց, այսինքն հռոմեական կայսեր դեմ, սխալմամբ այն վերագրել է Խոսրով Բ Կոտակի որդի Տիրանի ժամանակներին:[40] Ուսումնասիրողները վաղուց ցույց են տվել,որ հունա- հռոմեական սկզբնաղբյուրների լույսով աներկբա է այդ անցքերի կատարվելը 3-րդ դարի վերջերին, Մծբինի 298թ. պայմանագրի կնքման նախօրյակին: Սակայն Փավստոս Բուզանդի մոտ հետագա իրադարձությունները անմիջականորեն աղերսվում են Արշակ Բ-ի գահակալության հետ, որը նոր երանգ է հաղորդել հիշյալ անցքերին՝ միաժամանակ շփոթության մեջ գցելով մխիթարյան հայագետին: Արդյունքում նա մեջտեղ է բերել Հայ Արշակունի գահակալների միանգամայն նոր ժամանակագրություն, համաձայն որի Խոսրովի որդի Տիրանը իշխել է 298-284, Տրդատի որդի Խոսրովը՝ 284-272, Արտավազդը, որի պատկանելիությունը Արշակունիներին խիստ հարցականի տակ է և գահ է բարձրացել Սասանյանների օժանդակությամբ՝ 272-253, Խոսրով Ա-ի որդի Տրդատ Բ-ն՝ 252-217թթ., իսկ Խոսրով Ա-ն մահացել է 216–ին Միջագետքում՝ բանտարկության մեջ: Հ.Ն. Ակինյանը Արշակ Բ-ի գահակալությունը դնում է 298-338, Տիրան Բ-ինը՝ 339-349, Արշակ Գ-ինը՝ 349-368, Պապ թագավորինը՝ 368-374թթ.: Կամենալով իր ժամանակագրությանը տալ կուռ կառուցվածք, նա իր արքայացանկում մուծել է երկու նոր անուններ, որը ոչնչով արդարացված չէ: Արքայացանկին համապատասխան նա կազմել է կաթողիկոսների ժամանակագրությունը, որի համաձայն Գրիգոր Լուսավորիչը հովվապետել է 219-249, Մերուժանը (?)՝ 250-257, Վրթանեսը՝ 257-272, Գրիգորիսը՝ 272-289, Հուսիկը՝ 289-294, Փառներսեհը՝ 294-298, Արիստակեսը՝ 298-338, Ներսեսը՝ 338-372, Չոնակը՝ (Սահակ Նախաթոռ) տարիներ չի ստացել,Հուսիկ Բ-ն՝ 373-374թթ.: Սուր քննադատության ենթարկելով Ագաթանգեղոսին և նրա ժամանակագրությունը պակասավոր գտնելով, հանգամանք, որ, գոնե մեր կարծիքով, անհեթեթ է և դրան անդրադառնալը պարզապես անիմաստ, հեղինակը հանգում է այն եզրակացության, որ Ագաթանգեղոսի երկը որպես աղբյուր բոլորովին անպետք է, իսկ Փավստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոց»-ը միայն Ս. Գրիգորի Հայաստանի մեջ կատարած առաքելական վաստակն է: Ուստի նա փորձում է դարձի պատմությունը գտնել Գեղասիոս Կիզիկեցու և Ռուփինոսի մոտ, որոնց աղբյուրն իբր եղել է ազգությամբ հայ կամ վրացի իշխան Բակուրը: Գեղասիոս Կիզիկեցու և Ռուփինոսի հաղորդումներին անդրադառնալը բոլորովին անիմաստ է, որովհետև արդյունքում ստիպված կլինենք պարզապես կրկնել Հ. Պ. Անանյանի քննությունը: Վենետիկյան հայագետը առավել

քան հիմնավոր ցույց է տվել Հ. Ն. Ակինյանի ստեղծած կառույցի խախուտությունը:[41] Ուստի միայն իմաստ ունի անդրադառնալ Հ. Աստուրյանի այն տեսակետին, թե Փավստոս Բուզանդի մոտ Տիրան թագավորի ժամանակներում հիշված Ներսեհ պարսից արքան ոչ թե Շապուհ Ա-ի որդի Ներսեհն է, այլ Շապուհ Բ-ի օրոք Հայաստան ուղարկված Ներսես զորավարը, որին հիշում են Ամմիանոսը և Զոսիմոսը:[42] Շարունակելով իր միտքը զարգացնել, Հ.Աստուրյանը հանգում է այն եզրակացության, որ Ներսես Զորավարը, հավանաբար, արքայազն է եղել և մի ինչ-որ երկրամասի արքայիկ, որի պատճառով էլ Փավստոսի երկում թագավոր է համարվում: Հ.Պ.Անանյանն էլ դժվարությամբ համաձայնելով Հ.Աստուրյանի առաջ քաշած տեսակետին ամբողջությամբ, քանի որ Փավստոսի նկարագրության մանրամասները խստիվ համապատասխանում են հունա-հռոմեական պատմագիրների 298-ի պատերազմի պարագաներին, այնուամենայնիվ գտնում է, որ հայոց պատմիչն իր աշխատության նշված գլխում նկարագրում է 350 թվականի մոտերքը եղած պատերազմի իրադարձությունները, սակայն պատերազմի նկարագրության հիմքում դնում է ժողովրդական վեպից փոխառած պարսից արքայից արքա Ներսեհի մղած պատերազմը, որտեղ նա խայտառակ պարտություն է կրել հռոմեա-հայկական զորքերից, պատճառ դառնալով,որ պատերազմի մանրամասները հավերժանային ժողովրդական ստեղծագործության մեջ:[43] Հեղինակը հակված է կարծելու, որ Փավստոս Բուզանդը Տիրանի առնչությամբ նկատի է ունեցել իրոք 350 թվականի դեպքերը, որովհետև շարադրանքից պարզվում է, որ հայ պատվիրակները՝ Բյուզանդիա գնալով և կայսրից օգնություն խնդրելիս, հիշում են Կոստանդիանոս և Տրդատ Գ-ի միջև կնքված դաշինքը: Հետևաբար, օգտագործելով հանդերձ 298թ. պատերազմի նկարագրության որոշակի դրվագներ, եթե պատմիչը աչքի առաջ ունենար 298թ. դեպքերը, ապա ոչ մի դեպքում չէր հիշի Կոստանդիանոս կայսեր անունը:[44] Ի մի բերելով իր եզրակացությունները, Հ. Պ. Անանյանն ի վերջո հանգում է այն մտքին, որ Փավստոս Բուզանդը իրար է խառնել երկու տարբեր ժամանակների դեպքերը՝ ծնելով խառնակ և հակասական ժամանակագրություն, ուստի և նրա աշխատությունը որևէ ձևով չի կարող հիմք ծառայել հայոց թագավորների և կաթողիկոսների ժամանակագրությունը հեղաշրջելու համար:[45] Ասվածն, անշուշտ, ճիշտ է, սակայն չմոռանանք, որ հիշյալ խնդիրը միանգամայն յուրօրինակ բացատրություններ է ստանում Սեբեոսի հաղորդումների լույսով, որին առաջիկայում դեռ կանդրադառնանք:

Հ. Պ. Անանյանն առանձնակի ուշադրություն է դարձնում Հ. Մանանդյանի տեսակետին, որը նա՝ հանգամանալից քննությունից հետո, կիսում է: Այնուամենայնիվ, եթե ճիշտը խոստովանենք, այն ավելի վաղ առաջ էր քաշվել

Ալեքսանդր Աննինսկու կողմից դեռևս 1899 թվին:[46] Մեծանուն հայագետը՝ քննության առնելով 3-րդ դարի և 4-րդ դարի սկզբի պատմությունը, այլ խոսքով Տրդատ Բ-ից մինչև Տրդատ Գ-ի գահակալության շրջանը, ընդհանուր առմամբ ընդունել է Ա. Աննինսկու տեսակետները՝ գալով այն եզրակացության, որ Հայոց դարձի թվականը կարելի է ճշտել Սեբեոսի «Պատմութեան» մեջ հանդիպող Անանունի եռաշարք ժամանակագրական աղյուսակների տվյալների միջոցով: Անանունի մի տեղեկության համաձայն Խոսրով Քաջն սպանվել է Դիոկղետիանոս կայսեր չորրորդ տարում, իսկ նրա որդին՝ Տրդատը, գահ է բարձրացել Դիոկղետիանոսի տասնհինգերորդ տարում:[47] Եվ քանի որ Դիոկղետիանոսի տասնհինգերորդ տարին համապատասխանում է 298 կամ 299 թվին, իսկ Գրիգոր Լուսավորիչն էլ, համաձայն Պատմահոր, հայրապետական աթոռ է բարձրացել Տրդատ Գ-ի տասնյոթերորդ տարում, ապա Գրիգոր Պարթևի ձեռնադրության թիվն էլ ընկնում է 315 թվին: Ըստ որում, ելնելով իր իսկ կռահումից, Հ.Մանանդյանը գտնում էր, որ Տրդատ Գ-ն կարող էր քրիստոնեությունը պետական կրոն հռչակած լինել միայն Միլանի 313 թվի էդիկտից հետո, որով այն կայսրության տարածքում դարձել էր մյուս կրոններին իրավահավասար: Նման եզրակացության շարժառիթը պարզ է, քանի որ Մեծ Հայքի թագավորությունը՝ գտնվելով Հռոմի քաղաքական ազդեցության ոլորտում և սերտորեն կապված լինելով կայսրությանը այլևայլ կապերով, հազիվ թե կարող էր խուսափել նրա թելադրանքից այնպիսի մի կարևոր հարցում, ինչպիսին քրիստոնեությունն պետական կրոն հռչակելն էր:[48]

Հ.Պողոս Անանյանը՝ քննարկելով Հ. Մանանդյանի առաջ քաշած տեսակետը, իրավացիորեն ընդգծում է, որ վերջին հաշվով Հայոց դարձի թվականը, ինչ ձևով էլ որ այն հետազոտենք, անմիջականորեն կախված է Տրդատ Գ-ի գահակալության սկզբի հստակեցումից: Եվ քանի որ անվանի հայագետի եզրակացությամբ Տրդատ Գ-ի գահակալությունը պետք է դնել 298-ին, տարեթիվ, որ էապես տարբերվում է նախորդ ուսումնասիրողների առաջարկներից, Հ. Պ. Անանյանը նպատակահարմար է գտնում անդրադառնալու Հ. Մանանդյանի կողմից Հայոց պատմության 3-րդ դարի շրջանի ընկալմանը:[49] Իսկ քանի որ Հ. Մանանդյանի ընկալումով են բացատրվում 3-րդ դարի մանվածապատ շատ իրադարձություններ, իսկ շատ հարցեր էլ պարզապես պատասխան չեն ստանում կամ էլ սխալ են մեկնաբանվում, մենք ևս գտնում ենք, որ նրա առաջ քաշած ժամանակագրությունը կարիք ունի մանրամասն քննության, որին սակայն մենք կանդրադառնանք մի այլ աշխատության մեջ :

Որչափ մեզ հայտնի է, Հայոց դարձի թվականին արմատական կարգով ամենավերջինն անդրադարձել է Ռ.Մանասերյանը:[50] Անդրադառնալով քրիստոնեության պետական կրոն հռչակմանը, նա գրում է. «Հարկ է կանգ առնել

արդեն ավանդական դարձած և, մեր համոզմամբ, իրականում փակուղային մոտեցման վրա, որը քրիստոնեության ընդունումը Հայաստանում կապում է Հռոմի կայսրերի կրոնական քաղաքականության հետ, կոնկրետ կախման մեջ է դնում 313թ. այսպես կոչված Միլանյան հրովարտակից»:[51] Դժվար չէ տեսնել, որ հեղինակը կտրականապես մերժում է Հ.Մանանդյանի և նրա հայացքները կիսող Հ. Պողոս Անանյանի տեսակետը: Ռ. Մանասերյանը իրավացիորեն գտնում է, որ Հայոց դարձին անդրադարձած ուսումնասիրողները «միանգամայն աչքաթող են անում նման կարևոր քայլի համար Հայաստանում ինքնուրույն ներքին պատճառների հասունացումը, հեռու են նրանց մասին հարցադրումից և, այսպիսով, անտեսում են հայոց թագավորի կողմից սեփական քաղաքականության անցկացումը»:[52] Զարգացնելով իր միտքը, նա նշում է, որ տարբեր էին Հռոմի կայսեր և հայոց թագավորի ձեռնարկած քայլերը, որոնցից առաջինը թույլատրում էր քրիստոնեական պաշտամունքը, ճանաչում էր նրա գոյության իրավունքը՝ չսահմանափակելով հեթանոսությունը և անձնապես հեթանոս մնալով, իսկ երկրորդը անվերապահորեն արգելում է հեթանոսությունը, քրիստոնեությունը հռչակում է պետական կրոն և ինքն էլ դառնում է քրիստոնյա: Ռ. Մանասերյանը մեջտեղ է բերում մի նոր կարևոր կռվան ևս , այն է Հայաստանի քրիստոնեացման նշանակությունը հայոց թագավորի ու ընդհանրապես արքայատոհմի և Հռոմի կայսեր ավանդաբար ոչ իրավահավասար փոխհարաբերությունների զարգացման համար:[53] Չի կարելի չհամաձայնել հեղինակի հետ, որ 313թ. քրիստոնյաներին հովանավորող Կոստանդինոսը (իմա՛ Կոստանդիանոս- Հ. Բ.), անձամբ շարունակում էր պաշտել Արեգակին, Հռոմեական կայսրության արևելյան մասում (Հունաստան, Փոքր Ասիա, Սիրիա, Եգիպտոս) կառավարած կայսրերը՝ Գալերիոսը (305-311) և Մաքսիմինոս Դայան (միահեծան՝ 311-313) ջերմեռանդ հեթանոսներ էին, 313թ. Մաքսիմինոս Դայային Ադրիանուպոլսի մոտ ջախջախած և Արևելքի կայսր դարձած Լիկինիոսը (313-324) համոզված հեթանոս էր, Տրդատի անմիջական հարևանը և 315 թվին շարունակում էր պաշտել Յուպիտերին:[54] Լիկինիոսի օրոք պետական պաշտամունքի վերածվեց Sol Conservator-ի՝ Արեգակ փրկչի երկրպագությունը, իսկ 320 թվից, Կոստանդիանոսի հետ հարաբերությունների լարմանը համընթաց նա հրաժարվեց քրիստոնյաների նկատմամբ ունեցած հանդուրժողական վերաբերմունքից:[55] Հռոմեական կայսրության արևելյան մասում քրիստոնյաների դեմ հալածանքները դադարեցին Կոստանդիանոսի կողմից նրա պարտության կրելուց հետո, սակայն վերջինիս Անտիոքում հատած սոլիդները, այնուամենայնիվ, ձոնված են եղել Արեգակին:[56]

Ռ. Մանասերյանը Գալերիոս, Մաքսիմինոս Դայա և Լիկինիոս կայսրերի հեթանոսությունը և Տրդատ Գ-ի կողմից քրիստոնեության պետական կրոն հռչակումը

դիտարկում է հայոց արքայի և հռոմեական կայսեր միջև հաստատված ավանդական հարաբերությունների զարգացման տեսանկյունից: Նրա կարծիքով, «Քրիստոնեության ընդունումը խզում էր նշանակում արքայի՝ այսուհետև քրիստոնյա արքայի, հեթանոս կայսեր հետ (անկախ այն բանից, թե կայսրը հանդուրժողական էր, թե՞ հալածական քրիստոնյաների նկատմամբ): Ժխտվեցին հռոմեական կայսրից հայոց թագավորի կախվածությունը, Հայաստանի նկատմամբ կայսրության գերակայության կրոնագաղափարական հիմքերը: Քրիստոնյա արքան հռոմեական կայսրին չէր կարող ճանաչել իբրև վեհագույն աստվածային ատյան, որն ի զորու էր նրան թագավոր դարձնել, շնորհել նրան թագավորական արժանավորություն: Հայաստանում Արշակունիների տոհմի հեղինակությունը վերահաստատելու խնդիրը Տրդատից պահանջում էր վերացնել կայսերահպատակի, կայսերակարգի իր վիճակը և անմիջապես մտնել նոր և ամենակալ աստծո իշխանության ներքո: Ի տարբերություն նախկին, այսուհետև մերժվող աստվածների՝ Միհրի, Վահագնի, նոր աստվածը բացառում էր կայսեր ճանաչումը իբրև գերագույն աստվածության, տվյալ դեպքում՝ իբրև Արեգակի արտահայտման մարմնավորում»:[57] Հետևաբար, ըստ հեղինակի, քրիստոնեության ընդունմամբ թագավորական իշխանությունը Հայաստանում վերականգնեց իր աստվածակարգ, աստվածատուր հաստատության բնույթը:[58] Տեսական առումով, ինչ խոսք, ասվածը խիստ տրամաբանական է, սակայն կյանքը մնում է կյանք: Կայսեր և հայոց թագավորի հարաբերություններում առաջինի նշված դիրքը ոչ այնքան արդյունք էր հեթանոսության ընձեռած հնարավորության, որքան կայսրության ուժի և հզորության: Համենայն դեպս, Պապի կամ Վարազդատի գահակալությունը, որքան էլ նրանք իրենց իշխանությունը աստվածատուր համարեին, էապես պայմանավորված էր կայսրության օժանդակությամբ, ուստի հեղինակի այն միտքը, որ «քրիստոնեության ընդունմամբ, կայսեր աստվածային բնույթի մերժմամբ գաղափարաբանական հիմք էր ստեղծվում արքայական իշխանությունը ժառանգականի վերածելու համար»,[59] հազիվ թե կարելի է ընդունելի համարել: Այն իրողությունը, որ Վաղարշ Բ-ից սկսած թագավորական իշխանությունը Մեծ Հայքում փոխանցվում էր հորից որդի, հավաստում է, որ առանց քրիստոնեական գաղափարախոսական հիմքի էլ այն արդեն վերածվել էր ժառանգականի: Եվ վերջապես մի կարևոր իրողություն ևս: Արշակունիների ժառանգական իշխանությանը Հայաստանում ոչ այնքան խանգարում էր կայսրությունը կամ անձամբ կայսրը, որքան Պարթևական թագավորական արքունիքը, որին բացարձակապես ձեռք չէր տալիս Մեծ Հայքում ժառանգական արքայատոհմի, թեկուզև Արշակունիներից սերող, իշխանության հաստատումը: Ընդհակառակը, ամեն անգամ նոր գահակալ ուղարկելով Մեծ Հայք,

պարթևական արքաները հնարավորություն էին ունենում իրենց ազդեցության ոլորտում պահելու Հայոց թագավորությունը, որն Արշակունիների հարստության համակարգում շնորհիվ իր մեծության և բազմամարդության զբաղեցնում էր երկրորդ տեղը, իսկ հայոց թագավորը համարվում էր անգամ Պարթև Արշակունիների թագավորության երկրորդը:

Մենք անհրաժեշտության դեպքում Ռ. Մանասերյանի իրոք որ կարևորություն ունեցող մի շարք հարցադրումներին դեռ կանդրադառնանք, ուստի այժմ լոկ քննարկենք, թե ինչպե՞ս է հեղինակը որոշում Հայոց դարձի թվականը: Ընդունելով, որ մեզ հասած սկզբնաղբյուրները ժամանակագրական ուղղակի և անվիճելի ցուցումներ չեն պարունակում, ինչին իհարկե մենք բոլորովին համաձայն չենք, նա գտնում է, որ հաստատորեն հնարավոր է ուրվագծել այդ իրադարձության ժամանակագրական ընդհանուր շրջանակը՝ 298-311թթ., այսինքն Մեծ Հայքում Տրդատի իշխանության հաստատվելու պահից մինչև Մաքսիմինոս Դայայի դեմ նրա տարած հաղթանակի տարին, երբ, ըստ հեղինակի, հայոց թագավորն արդեն բավական ջերմեռանդ քրիստոնյա էր:[60] Նրա տեսակետով, «փաստի ժամանակի՝ տարեթվի որոշումը դրա ճշգրիտ տեղավորում է նշանակում միջազգային կոնկրետ իրադարձությունների համատեքստում»,[61] որը միանգամայն ընդունելի դրույթ է: Ռ. Մանասերյանը կատարում է մի շարք ուշագրավ դիտարկումներ, որոնք չի կարող անտեսել հիշյալ հարցի քննությանն անդրադարձող ամեն մի ուսումնասիրող: Այսպես, նա միանգամայն անընդունելի է համարում հայոց դարձը 315-ով թվագրելը, որովհետև նման եզրակացությունը հակասում է Եվսեբիոս Կեսարացու այն տեղեկությանը, թե 311թ. աշնանը կամ 312թ. գարնանը Մաքսիմինոս Դայա կայսրը պատերազմել է քրիստոնեություն ընդունած հռոմեացիների դաշնակից հայերի դեմ և չարաչար պարտվել է:[62] 287թիվը որպես Տրդատ Գ-ի գահակալության մեկնակետ ընդունելով, բայց ոչ Հայոց թագավորության վրա իշխանության իրագործում, հեղինակի կարծիքով Տրդատ Գ-ն թագավորել է մի քանի անգամ. առաջին անգամ 282-ին, որին 17 տարի գումարելով կարելի է ստանալ 299-300թթ., այսինքն Հայոց դարձի առաջարկվող թվականներից մեկը: Սակայն այս տարեթիվը չի համապատասխանում պատմիչների տվյալներին, որովհետև պարզվում է, որ՝ հակառակ սկզբնաղբյուրների, Տրդատի հակաքրիստոնյա քայլերը կատարվել են ինքնուրույնաբար՝ կապված չլինելով Դիոկղետիանոս կայսեր հալածանքների քաղաքականության հետ:[63] 287 թվականը համարելով Տրդատի երկրորդ թագադրման տարի, հեղինակը Հայոց դարձի հավանական թվական է համարում 304-ը, որը Տրդատ Գ-ի գահակալության տասյոթերորդ և Գրիգոր Լուսավորչի ձեռնադրման տարին է: Հայտնի է, որ Դիոկղետիանոսյան հալածանքներն սկսվեցին

303 թվին և շարունակվեցին մինչև նրա իշխանությունից հեռանալը 305 թվին, հետևաբար 304 թվականն ընկնում է հալածանքների ժամանակահատվածի մեջտեղը:[64] Շարունակելով իր միտքը զարգացնել,նա գալիս է այն եզրակացության, որ կայսրությունում քրիստոնյաների դեմ հալածանքների շրջանում (303-305թթ.) Տրդատի հնարավոր հակաքրիստոնեական միջոցառումները պետք է վկայեին նրա իր հովանավորներ Դիոկղետիանոսից և Գալերիոսից այդ ժամանակ ունեցած կախվածության զգալի աստիճանը և, իհարկե, անուղղակիորեն՝ սասանյանամետ հայ ավագանու ընդդիմության ուժը: Սակայն, այսուհանդերձ, նա անկարելի է համարում լիովին բացառել Տրդատի կողմից հակահռոմեական, հակակայսերական քայլի դիմելու հնարավորությունը հենց 304-305թթ. ժամանակահատվածում, առավել ևս, որ հայոց թագավորի հալածանքներին, եթե ելնենք Ագաթանգեղոսի տվյալներից, զոհ են գնացել ընդամենը 37 մարդ: Ի մի բերելով իր քննության արդյունքները, հեղինակը գրում է, որ «Կարելի է կարծել, որ 304 թվականը, տեղ թողնելով հարցերի և լրացուցիչ փաստարկումների համար, կարող է գիտության մեջ գոյություն ունենալ որպես դարձի ոչ բացառվող տարեթվերից մեկը»:[65] Այնուամենայնիվ, շատ էլ վստահ չլինելով իր առաջարկած թվականի վերջնական լինելուն, նա՝ քննության առնելով կայսրությունում Դիոկղետիանոս կայսեր իշխանությունից հեռանալու հետևանքով ձևավորված կացությունը, Հայոց դարձի ժամանակը հնարավոր է համարում սահմանագծել 304-306թթ.:[66]

Ամփոփենք: Ռ. Մանասերյանի առաջարկած տարբերակը, որ անկասկած տրամաբանական լավ և բավականաչափ կուռ կառույց է, ունի ինչ-ինչ խոցելի կողմեր և փաստական առումով հիմնավորվածության լուրջ կարիք : Հեղինակը հույս ունի, որ նոր տվյալների չբացառվող հայտնագործությունը, ինչպես նաև ժամանակագրական հետագա պրպտումները հնարավորություն կտան առավել ճշգրիտ արտահայտվել Հայոց դարձի տարեթվի առթիվ:[67]

Իրականությունն այն է, որ՝ չնայած նոր հայտնագործությունների ու տվյալների տեսական հնարավորությանը, դատելով վերջին երկու հարյուրամյակների ընթացքում նման հայտնագործությունների գործնականում բացակայությունից, առաջիկայում մեր աղբյուրագիտական բազան հազիվ թե լուրջ տեղաշարժեր ապրի: Ավելին, նոր տվյալների հայտնաբերման անհրաժեշտության մասին խոսելը, թերևս, շատ էլ տեղին չէ, որովհետև, որքան մենք կարող ենք դատել մեր ուսումնասիրության արդյունքներից, եղած տեղեկությունները առավել քան բավարար են թե՛ հարցի քննության և թե՛ Հայոց դարձի թվականը ճշգրտելու համար: Հայ պատմիչների տեղեկությունները, որոնք, չգիտես ինչու՞, ուսումնասիրողների կողմից շատ հաճախ հայտնվում են կասկածելիների ցուցակում, գոնե մեր կարծիքով, հունա-հռոմեական

հեղինակների հաղորդումներին զուգակցված, հնարավորություն են տալիս պատասխան տալ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու խնդրին: Այդ պահանջում է մեզ հասած սկզբնաղբյուրների համակողմանի քննություն, մասնավորապես շատ հաղորդումների և տվյալների միանգամայն նորովի բացատրություններ ու մեկնաբանություններ: Համենայն դեպս, Սեբեոսի երկը, որում պահպանված Անանունի ժամանակագրական ցանկերը հիմնական կռվանն են դարձել Հ. Մանանդյան համար ապացուցելու, թե Հայոց դարձը եղել է 315 թվականին, պարունակում են այնպիսի տվյալներ, որոնք ոչ միայն համահունչ են Պատմահոր հաղորդումներին կամ Ագաթանգեղոսի բերած փաստական ու ժամանակագրական տվյալներին, այլև պարզապես բացառում են նրա՝ առաջին հայացքից խիստ կուռ, տեսակետը: Ընթերցողի դատին հանձնելով մեր քննության արդյունքները, առաջարկելով Հայոց դարձի ճշգրտված թվականը, մենք բնավ էլ այն կարծիքին չենք, որ այն բացառում է, մասնավորապես 3-րդ դարի ժամանակագրության նորովի մեկնաբանությունները, սակայն մի բան հստակ է մեզ համար. Հայոց դարձի տարեթիվը վերջնականապես ճշգրտված է: Անշուշտ հայ ժողովրդի հարյուրամյակների պատմության մեջ բոլորովին էլ էական չէ, թե Հայոց դարձը տեղի է ունեցել 301-ին, 304-ին կամ 315-ին: Անգամ 315 թվականի դեպքում Մեծ Հայքի թագավորությունը շարունակում է մնալ քրիստոնեությունը պետական կրոն հռչակած առաջին երկիրը: Հետևաբար խնդիրը ամենից առաջ զուտ գիտական է, որը, եթե անգամ մենք էլ չբարձրացնենք, մեր օրերում, թե ապագայում անպայման կգտնվի մեկը, որ սկզբնաղբյուրների համառ ճնշման ներքո ստիպված կլինի ուսումնասիրել և պարզել Հայոց դարձի տարեթիվը:

Հայոց դարձի թվականի հստակեցման համար ամենակարևոր հանգամանքը, ինչպես նշել են գործնականում բոլոր ուսումնասիրողները, Տրդատ Գ Մեծի գահակալության տարեթվի ճշգրտումն է, որը և հնարավորություն կտա պարզելու, թե որքանով են ճիշտ Ագաթանգեղոսի, Պատմահոր և մյուս հեղինակների երկերում պահպանված ժամանակագրական տվյալները, քանի որ մինչ օրս էլ նշանակալից թիվ են կազմում այն հետազոտողները, որոնց համար Գրիգոր Լուսավորչի Խոր Վիրապում գտնվելու 15 կամ Տրդատ Մեծի գահակալության 17-րդ տարում ձեռնադրվելու ժամանակագրական տվյալները համարում են ձևական և ոչինչ չասող: Հենց սկզբից նշենք, որ մեր քննությունը լոկ հաստատում է հիշյալ տվյալների վավերականությունը, որոնք սկսում են ամբողջ ձայնով խոսել և տեղավորվել ժամանակի քաղաքական պատմության հենքի մեջ հենց որ պարզվում է Տրդատ Գ-ի գահակալության տարին:

Ինչպես վերը նշեցինք, Ստ.Մալխասյանը պարզել էր,որ ըստ Պատմահոր ժամանակագրության Դիոկղետիանոսի գահակալությունն ընկնում է 260 թվականին, իսկ Տրդատ Գ Մեծինը՝ 263 թվին: Ըստ որում ժամանակագրական հաշվարկները կատարելիս նա մոռացել էր հաշվի առնել, որ Արշակ Գ և Խոսրով Վերջին թագավորները միաժամանակ իշխել են երկու և կես տարի, հետևաբար՝ կես տարին կլորացնելու դեպքում, Տրդատ Գ Մեծի գահակալությունը կընկնի ոչ թե 263-ին, այլ 265-ին: Ստացվում է, որ հայոց թագավորը իշխել է ոչ թե Դիոկղետիանոս կայսեր երրորդ տարում, ինչպես հավաստում են Մովսես Խորենացու երկի բոլոր ձեռագրերը, այլ հինգերորդ տարում: Հասկանալի է, որ, եթե հինգերորդ տարին համապատասխանում է պատմական ճշմարտությանը, ապա արմատապես փոխվում է 3-րդ դարի վերջի և 4-րդ դարի սկզբի մինչ օրս կարծես թե քաղաքացիություն ստացած ժամանակագրությունը: A priori կարելի է մտածել, որ Պատմահոր «Քանզի ոչ է պատմութիւն ճշմարիտ առանց ժամանակագրութեան, վասն որոյ և մանրախուզիւ քննեալ՝ գտաք զթագաւորելն Տրդատայ յերրորդ ամի Դիոկղետիանոսի»[68] տեղեկության մեջ տեղ է գտել շփոթ և «յերրորդ»-ը պետք է լիներ «յե-րորդ», այսինքն հինգերորդ և այդ դեպքում հիշյալ հատվածն իր բովանդակությամբ կհամապատասխանի Պատմահոր երկի ժամանակագրական համակարգի տրամաբանությանը: Սակայն միաժամանակ չպետք է կասկածել, որ նման սրբագրումը, որ առայժմ ավելի շատ հայտարարություն է ներկայացնում, քան գիտական փաստարկ, լոկ առաջ կբերի հարցիս պատմաբանների բուռն ընդդիմությունը: Բարեբախտաբար, իրականության մեջ պատմությունը՝ ասվածը որպես գիտական ենթադրություն հիմնավորելու համար, բավարար փաստեր է պահպանել: Այսպես, Ուխտանեսի «Պատմութիւն Հայոց»-ի մեջ երկու անգամ խոսվում է Տրդատի գահակալության սկզբի մասին: Աշխատության Կէ գլխում ասված է. «Իսկ ապա ի գալն Տրդատայ ի Հայք յսկզբան թագաւորութեան իւրոյ, յորժամ թագաւորեաց <u>յերորդ</u> ամի Դիոկղետիանոսի կայսեր Հռովմայեցւոց»[69], իսկ ՀՁ գլխում գրված է. «Գրեցաք ի մերումս պատմութեան միանգամ և երկիցս յաղագս Տրդատայ թագավորելոյն, թէ ե՞րբ և յորու՞մ ժամանակս եղև: Բայց ոչ միաբանէին ընդ միմեանս Զենոբ և Մովսէս վասն նորա. զի Զենոբ ի Պռոպայ ասէ թագաւորեալ Տրդատայ. և թագաւորեալ յորժամ զԳթացն արար ձերբակալ զթագաւորն. և նա երախտահատոյց լեալ Տրդատայ՝ թագ եդեալ թագաւորեցոյց զնա, և առաքեաց զօրօք իւրովք ի Հայս: Իսկ Մովսէս ի Դիոկղետիանոսէ՝ ասէ թագաւորեալ. վկայէ և այսմ գիրք Կայսերայն: Բայց Մովսէս ստուգաբանեալ՝ ասէ այսպէս: Քանզի ոչ է վկայութիւնն ճշմարիտ ասէ՝ առանց ժամանակագրութեան, վասնորոյ մանրախուզիւ քննեալ գտաք զթագաւորելն Տրդատայ <u>յերորդ</u> ամի Դիոկղետիանոսի կայսեր՝ և գալ

այսր հանդերձ մեծաւ զօրու: Դարձեալ այլ ստուգաբանեն. նախ քան զայս սկսեալ ի ժամանակէն Պռոբայ մինչև ի թագաւորելն Դիոկղետիանոսի՝ Յունաց թագաւորէ՝ ասէ՝ Պռոբոս, և խաղաղութիւն արարեալ ընդ Արտաշրի՝ բաժանէ զաշխարհս մեր սահմանադրութեամբ փոս գործելով: Եւ դարձեալ զմահն յայտ առնէ, թէ ի պատերազմելն Պռոբայ ընդ Գոթս՝ յարեան ի վերայ նորայ զօրքն իւր և սպանին զնա: Եւ թագաւորեաց զկնի նորա Կարոս Կասինաւ հանդերձ և Նոմերիանոսիւ. եւ պատերազմեալ ընդ արքային Պարսից յեզր Եփրատու՝ մեռաւ Կարոս. և Կառինոս ի Կուռնակայ սպանաւ յանապատին: Ընդ նոյն աւուրս և Նոմերիանոս լինի սպանեալ ի Թրակէ. և փոխանորդեալ զթագաւորութիւնն Դիոկղետիանոս . և այսպէս կարճ ի կարճոյ զկնի միմեանց զմահն նոցա և ի միջոցի այժմ զրուցաց առաջի և զկնի նոցա պատմէ և զքաջութիւն Տրդատայ»:[70] Պրոբոսի հետ կապված խնդիրներին մենք դեռ կանդրադառնանք, սակայն այժմ լոկ նշենք, որ Ուխտանեսի՝ իր իսկ խոստովանությամբ, Տրդատ Մեծի՝ Դիոկղետիանոս կայսեր երրորդ տարում գահակալելու տեղեկությունը վերցրել է Պատմահոր երկից և, եթե ի նկատի ունենանք, որ նա օգտվել է շատ ավելի անաղարտ օրինակից, քան մեզ հասածն է՝ ենթարկված դարերի ընթացքում զանազան խմբագրությունների, ապա մնում է արձանագրել, որ Ուխտանեսի մոտ երկու անգամ հանդիպող «յերորդ» արտահայտությունը բնավ էլ անիմաստ ու պատահական չէ: Եթե այն հանդիպեր ընդամենը մեկ անգամ, ապա կարելի էր ենթադրել, որ եղածը ընդամենը ուղղագրական սխալ է: Սակայն երկու անգամ «յերորդ» ձևի առկայությունը, որ հասկանալի է, թե իր վավերացումն ունի Ուխտանեսի ձեռագրերում, ցույց է տալիս, որ այստեղ ուղղագրական կանոնի խախտման մասին խոսք անգամ լինել չի կարող : Անտարակույս Մովսես Խորենացու երկում գրված է եղել «յե-րորդ ամի», այսինքն հինգերորդ տարում, սակայն հետագայում գրիչները այն ընկալելով որպես «յերրորդ ամի»-ի սխալ գրություն, «յե-րորդ»-ը սկզբում դարձրել են «յերորդ», ինչպես հանդիպում է Ուխտանեսի երկում, իսկ այնուհետև՝ «յերրորդ»: Եվ եթե Ուխտանեսի երկն անուղղակի ձևով պահպանած չլիներ «յերորդ» գրությունը, մեզ համար շատ դժվար կլիներ որևէ ձևով հիմնավորել մեր ենթադրությունը:

Սակայն մեր ենթադրությունը հաստատող ամենաարժեքավոր կռվանը, որքան էլ հետազոտողների համար զարմանալի լինի, պահպանել է Սեբեոսի «Պատմութիւն»-ը: Անանունի ժամանակագրական տվյալների մեջ կա հետևյալ տեղեկությունը.«Յամի ԻԷ- երորդի Կոստանդիանոսի կայսեր, ի Զ ամի Տիրանայ արքայի Հայոց՝ թագաւորէ Ներսեհ որդի Շապհոյ ի վերայ Պարսից ամս Թ: Կոստանդիանոս՝ ԻԷ: Տիրան՝ Զ: Ներսեհ՝ զառաջինն»:[71] Ինչպես, հաճախ, այս դեպքում էլ համաժամանակյա (սինխրոն) աղյուսակի հռոմեական շարքի ներկայացուցիչ Կոստանդիանոսի

տվյալները չեն համապատասխանում մյուս երկուսին, սակայն վերջիններս արտակարգ արժեքավոր են և հետաքրքիր: Հայտնի է, որ Սասանյանների արքայատոհմում թագավորել է ընդամենը մեկ Նարսե կամ Ներսեհ 293-302 թվականներին, հետևաբար Անանունի ցանկում հիշատակված Ներսեհը, որն իշխել է 9 տարի, չի կարող շփոթվել որևէ մեկ այլ գահակալի հետ: Այդ դեպքում նրանից 6 տարի առաջ Մեծ Հայքի թագավորությունում պետք է գահ բարձրանար Տիրանը: Այդ համապատասխանում է 288 թվականին, հետևաբար այն հանգամանքը, որ Պատմահոր երկում Տրդատ Գ-ի գահակալությունը պետք է դրված լինի Դիոկղետիանոսի ոչ թե 3-րդ, այլ 5-րդ տարում, ստանում է նոր հիմնավորում: Մնում է անշուշտ Տիրան անվան խնդիրը, որին սակայն մենք դեռ կանդրադառնանք:

Անանունի մեկ այլ տեղեկությամբ «Յամի ԺԲ-երորդի Տիրանայ արքայի Հայոց թագաւորեն Կոստանդիաս և Կոստաս, որդիք Կոստանդի Բարեպաշտի՝ ամս ԺԴ: Տիրան ամս ԺԲ: Ներսեհ՝ է: Կոստանդիոս և Կոստաս՝ զառաջինն»:[72] Մյուս տեղեկությամբ «Յամին ԺԲ. երորդի Տիրանա, և է-երորդ ամի Ներսէհի արքային պարսից, և Ա ամի Կոստանդի և Կոստասայ, որդւոց Կոստանդիանոսի Բարեպաշտի Հռովմայ՝ եկն ի վերայ նորա ի Բասեան գաւառի ի գեաւղն Յոսխայ, մինչ դարձուցանել նմա զՏիրան արքայ ամենայն գերութեամբն հանդերձ, և զորդի նորա Արշակ թագաւորեցուցանել և արձակել ի Հայս: Ներսեհ՝ զութերորդն: Կոստանդիաս և Կոստաս՝ զԲ: Արշակ՝ զառաջինն»:[73] Առաջին իսկ հայացքից պարզ է , որ թե մեկ և թե մյուս տեղեկության մեջ դեպքերը կատարվում են Տիրան արքայի 12-րդ տարում, որը համապատասխանում է Ներսեհի թագավորության 7-րդ տարուն: Ինչպես նախորդ դեպքում, այնպես էլ այս հաղորդումներում Կոստանդիասի և Կոստասի մասին ժամանակագրական տվյալները հաշվի չեն առնվում, քանի որ որոշակի տարբերություններ ունեն համաժամանակյա մյուս տվյալներից: Եվ եթե, ինչպես վերը պարզեցինք, Տիրանի գահակալության տարին 288–ն է, ապա Տիրանի իշխանության 12-րդ տարին համապատասխանում է 300 թվականին»: Նույնը կարելի է ասել նաև Ներսեհի համար, որ 293 թվին գահ բարձրացած Ներսեհի 7-րդ տարին նույնպես համապատասխանում է 300 կամ էլ, ծայրահեղ դեպքում՝ 299 թվին: Սակայն չպետք է մոռանալ, որ այս հաշվարկները մենք կատարում ենք՝ ելնելով ուսումնասիրողների կողմից պարզված այն իրողությունից, որ Ներսեհն իշխել է 293-302թթ.: Պատմահոր երկում Դիոկղետիանոսի իշխանության 5-րդ տարին 3-րդ տարվա վերածվելն, անշուշտ, կատարվել է շատ վաղուց, ուստի եթե մի պահ Տիրանի գահակալության սկիզբը դնենք 286 թվին, ապա Տիրանի գահակալության 12-րդ տարին կհամապատասխանի 298 կամ էլ, իրողություն, որ ավելի հավանական է, 297 թվին: Այդ դեպքում Ներսեհի իշխանության 7-րդ տարին կհամապատասխանի

298 կամ ինչպես նախորդ դեպքում 297 թվին: Անտարակույս հիշյալ երկու թվերից նախապատվությունը պետք է տալ երկրորդին, քանի որ՝ ամեն ինչից դատելով, հենց այդ թվականին էլ տեղի ունեցավ Ոսխայի ճակատամարտը[74], որը վկայված է եթե ոչ անվանապես, ապա գործնականում հունա-հռոմեական աղբյուրներում: Վերը բերված Անանունի վերջին հաղորդման մեջ, ինչպես տեսանք, հենց Տիրանի 12-րդ և Ներսեհի 7-րդ տարում է տեղի ունեցել Ոսխայի ճակատամարտը, այսինքն՝ ըստ վերը կատարված հաշվարկի, 297 թվին: Սակայն կան երկու հանգամանք, որոնց բացատրությունից չենք կարող խուսափել: Առաջինը Տիրան անունն է, որը փաստորեն համընկնում է Տրդատին բոլոր պարամետրերով և երկրորդը, որ Փավստոս Բուզանդը ճակատամարտը դնում է Խոսրով Կոտակի որդի Տիրանի ձերբակալությունից հետո, և վերջապես նույն Անանունի տեղեկությունն է Տրդատ Մեծի՝ Դիոկղետիանոս կայսեր 15-րդ տարում թագադրվելու մասին:

Հարցիս շահեկանությունից ելնելով, քննությունն սկսենք երրորդ հաղորդումից, որտեղ ասված է. «Յամին ԼԲ-երորդի Արտաշրի, հնգետասաներորդի Դիոկղետիանոսի, կայսերակերպ շքեղութեամբ Տրդատիոս ելանէ ախոյեան ընդդէմ արքային Գդաց: Եւ անդէն ձերբակալ արարեալ զախոյեանն անարի զթագաւորն Գդաց՝ ածեալ կացուցանէ յանդիման կայսերն Դիոկղետիանոսի. և անդէն ի նմին ամի թագաւորեցուցանէ Դիոկղետիանոս զՏրդատ ի վերայ աշխարհիս Հայոց: Գումարէ ի ձեռս սորա զաւրս բազումս արձակէ յիւրական իշխանութիւն աշխարհին Հայոց: Որ տիրէ ամենայն քաջութեամբ և բարեպաշտութեամբ ամս Հ: Եւ է այսպէս. Արտաշիր՝ ՀԲ: Դիոկղետիանոս՝ ԺԷ: Տրդատէս՝ զառաջինն»:[75] Հարցը կարծես էլ ավելի է բարդանում, երբ ծանոթանում ենք Անանունի ևս մեկ հաղորդմանը, ըստ որի «Յամի Ի-երորդի առաջներորդի Արտաշրի Պարսից արքային ի չորրորդում ամի Դիոկղետիանոսի կայսեր՝ մեռանի Քաջն Խոսրով ի վատանուն Անակայ: Եւ տիրէ ի վերայ աշխարհիս Հայոց Արտաշիր արքայ Պարսից ամս ԺԱ: Դիոկղետիանոս՝ զչորրորդն»:[76] Ամեն ինչ խառնված է իրար: Ստացվում է, որ Տրդատ Գ-ի հայր Խոսրով Քաջը սպանվել է Անակի կողմից, ոչ ավել ոչ պակաս, Դիոկղետիանոս կայսեր 4-րդ տարում կամ 287-288 թվականին, որին ուղիղ 11 տարի անց հաջորդել է Տրդատ Գ-ն Դիոկղետիանոսի 15-րդ տարում կամ 298-299 թվականին: Ըստ որում Խոսրով Քաջի սպանությունից հետո մինչև Տրդատի գահ բարձրանալը կազմում է ընդամենը 11 տարի: Այս տեղեկությունը, որ պարզապես անհարիր է Անանունի վերը բերված տվյալներին, երբ 286 / 288 թվականից Մեծ Հայքի թագավոր է հիշվում Տիրան արքան, մեր կարծիքով ունի հետևյալ բացատրությունը: Խնդիրն այն է, որ՝ համաձայն Անանունի տվյալների, հայոց պատմության մեջ տեղ է գտել ոչ թե Տիրան-Տրդատ շփոթը, այլ այն կարևոր իրողությունը, որ սկզբնաղբյուրներն ուղղակիորեն չեն արձանագրել, թե Տրդատ Գ

Մեծ արքան մինչև 298 թվականն անվանվել է Տիրան և Տրդատ անունը վերցրել է միայն 298 թվականի թագադրության ժամանակ: Այլ խոսքով, 288 թվականից թագավորած Տիրանը նույն Տրդատն է և, որ ոչ պակաս կարևոր է, 3-րդ դարի վերջի Տիրան-Ներսեհ պարսից թագավոր զույգը շփոթվել է 4-րդ դարում թագավորած Տիրան արքա և Հայաստան ներխուժած Ներսեհ զորավար զույգի հետ:

Անշուշտ, կարելի է հեշտությամբ մերժել այս կամ այն պատմիչի հաղորդումը, ցույց տալ, որ Տիրանին վերագրվող մի շարք իրադարձություններ իրականում առնչվում են Տրդատ Մեծի իշխանության շրջանին, ինչը հայագիտությունը վաղուց պարզել է, սակայն, այնուամենայնիվ, այն հարցին, թե ինչու՞ են պատմիչները երկու թագավորների գործունեությունը իրար հետ շփոթել, երբ անունները տարբեր են, պատասխանը մեկն է. իրոք գոյություն են ունեցել Տիրան-Ներսեհ երկու զույգ, որի հետևանքով պատմիչները երկրորդ զույգին վերագրել են իրողություններ, որոնք տեղ են գտել առաջին զույգի օրոք: Ըստ որում, շատ կարևոր է իմանալ, որ Տիրան-Ներսեհ առաջին զույգն իրականում Տրդատ-Ներսեհ զույգն է: Անանունի ժամանակագրական հաղորդման առաջին մասում խոսքը հստակ գնում է Տիրան-Տրդատի և Ոսխայի ճակատամարտի մասին, որը ոչ մի կասկած չի հարուցում, սակայն այնքան ուժեղ է Փավստոս Բուզանդի ազդեցությունը,[77] որ Բասենի դաշտի Ոսխայի ճակատամարտից հետո պատմվում է Տիրանին գերությունից ազատելու և Արշակ Բ-ի գահ բարձրանալու մասին:

Կա մի հանգամանք ևս: Տրդատ-Տիրանը թագադրվել է մի քանի անգամ, սակայն բոլոր ուսումնասիրողները չէ, որ կարողացել են ընկալել այդ իրողությունը: Այսպես, այն փաստը, որ Տրդատը՝ համաձայն Անանունի, իշխել է Դիոկղետիանոսի 15-րդ տարում, այսինքն 298 թվին, ստիպել է Հ. Մանանդյանին ենթադրելու, թե Տրդատ Գ-ի գահակալությունն սկսվել է 298 թվից:[78] Անտարակույս է, որ Տրդատ Մեծը թագադրվել է 298 թվին, սակայն Պատմահոր, Անանունի և Ուխտանեսի տվյալները մեզ իրավունք են տալիս ենթադրելու, որ Տրդատ Գ-ն թագադրվել է առնվազն երեք անգամ, որոնցից առաջին երկուսը Տիրան անունով և միայն երրորդը՝ որպես Տրդատ: Առաջին անգամ Տիրան-Տրդատը թագավոր է հռչակվել հավանաբար 274 կամ 275 թվին: Նման ենթադրությունը հիմնված է Ուխտանեսի և Պատմահոր տեղեկությունների վրա: Ինչպես վերն ասվեց, համաձայն Ուխտանեսի, որն օգտվել է Զենոբի աշխատության մեզ չհասած տարբերակից, Տրդատ Մեծին գահ է բարձրացրել Պրոբոսը, որը հայոց թագավոր է հռչակել Տրդատին գոթերի թագավորին ձերբակալելու համար որպես վարձատրություն և զորքով ուղարկել է Հայաստան:[79] Ըստ Պատմահոր երկի տյալների, Տրդատ Մեծն իշխել է 56 տարի[80] , ուստի, եթե Պրոբոսը նրան գահ է բարձրացրել դեռևս զորավար եղած ժամանակ,

ապա Տրդատի գահակալությունը պետք է դնել 274 թվին, քանի որ ուսումնասիրողները հայոց թագավորի մահը սովորաբար դնում են 330-ին: Սակայն Պրոբոսը (Marcus Aurelius Probus [232-282] կարող էր Տրդատ Մեծին գահ բարձրացնել կայսր դառնալուց հետո: Պրոբոսը գահակալել է 276-282 թվականներին[81], հետևաբար, եթե Տրդատը գահ բարձրացվեր 276 թվին, ապա նրա մահը կընկնի 331 կամ 332 թվին, ըստ որում, դատելով բոլոր տվյալներից 332 թվականը բացառվում է: Համեմատության մեջ դնելով այս երկու հնարավորությունները, մենք գալիս ենք, այնուամենայնիվ, այն եզրակացության, որ Պրոբոսը կարող էր Տրդատին գահ բարձրացնել մինչև կայսր դառնալը Ավրելիանոս կայսեր օրոք 274 թվականին:

Տիրան-Տրդատը, հավանաբար, չնայած հռոմեական օգնական ուժերին չկարողացավ Հայաստանում կայուն հաստատվել և ստիպված եղավ վերադառնալ կայսրություն, սակայն անկախ այդ ամենից նա արդեն 274 թվից համարվում էր թագավոր և անգամ Մովսես Խորենացին, որ նրա գահակալության սկիզբը դնում է 288 թվականին, նրան հատկացնում է 56 տարվա իշխանություն, այսինքն 274 թվականից: Տրդատին հաջողվեց թագավորել Մեծ Հայքի թագավորության տարածքի մեծ մասում 288 թվականից,[82] ինչպես հավաստում է Մովսես Խորենացու երկը, և անտարակույս է, որ հենց այդ թվականից պետք է հաշվել Տրդատի փաստական աթոռակալման սկիզբը: 288-ին նա թագադրվում է Դիոկղետիանոս կայսեր օգնությամբ: Ներսեհ Սասանյանը, որ մինչ 288 թվականը իշխում էր Մեծ Հայքի թագավորությանը որպես Հայաստանի Մեծ թագավոր, ստիպված էր հռոմեացիների ճնշման տակ քաշվել թագավորության արևելյան շրջանները և ատամները կրճտացնելով հանդուրժել Տրդատ Մեծի թագավորությունը երկրի մեծագույն մասում: 293 թվին, երբ նա պատրաստվում էր տիրել Սասանյան գահին, թիկունքն ամրապնդելու նպատակով նա իր տիրույթները նույնպես հանձնեց Տրդատին՝ պահելով միայն Անդրտիգրիսյան կոչվող երկրամասերը: Սակայն նա բնավ էլ չէր հրաժարվել Մեծ Հայքի թագավորության նկատմամբ իր հավակնություններից և՝ քիչ թե շատ ամրապնդելով իր դիրքը Պարսկաստանում, նա մեծ պատերազմ սկսեց Հայոց թագավորության և Հռոմի դեմ՝ Մեծ Հայքին տիրանալու նպատակով: Պատերազմը սակայն ավարտվեց նրա խայտառակ պարտությամբ և Ներսեհը Ոսխայի ճակատամարտից հետո, երբ նրա բանակները ջախջախվեցին, իսկ կանանոցը գերի ընկավ, ստիպված եղավ Մծբինի պայմանագրով ճանաչել Տրդատ Մեծի իշխանությունը Մեծ Հայքի թագավորությունում: Եվ ինչպես հավաստում է Անանունը, դա տեղի ունեցավ կրկին Դիոկղետիանոսի օգնությամբ՝ նրա իշխանության 15-րդ տարում: Ի միջի այլոց, բացատրություն է ստանում նաև այն

իրողությունը, թե ինչու՞ Անանունը սխալմամբ Խոսրով Քաջի գահ բարձրանալը դնում է Դիոկղետիանոսի 4-րդ տարում: Խնդիրն այն է, որ Խոսրով Քաջը, այդ մասին առավել հանգամանորեն կխոսվի, երբ մենք անդրադառնանք 3-րդ դարի ժամանակագրությանը, նույնանում է Տրդատ Բ-ին, որն ըստ հունա-հռոմեական աղբյուրների երկար կռվել է պարսիկների դեմ, իսկ Ագաթանգեղոսը այդ կռիվների տևողությունը համարում է 11 տարի:[83] Համաձայն Ագաթանգեղոսի Տրդատ Գ-ն Խոսրով Քաջի որդին է, սակայն Անանունը շփոթելով Տրդատ Գ-ին Տրդատ Բ-ի հետ, երկրորդին վերագրվող 11 տարիների կռիվները հանում է 298 թվին երրորդ անգամ թագադրված Տրդատ Գ-ին նախորդած շրջանից և Խոսրով Մեծի իշխանության գալը դնում է Դիոկղետիանոս կայսեր չորրորդ տարում:

Կարծում ենք, որ կատարված քննությունն այլևս կասկածներ չի թողնում, որ Տրդատ Մեծի երկրորդ գահակալությունը տեղի է ունեցել ոչ թե Դիոկղետիանոս կայսեր երրորդ, այլ հինգերորդ տարում, այսինքն 288 թվականին: Այժմ, երբ մենք ունենք ելակետը, այն է Տրդատ Մեծի գահակալության սկիզբը, սկսում են ամբողջ ձայնով խոսել Ագաթանգեղոսի և Պատմահոր մյուս հաղորդումների ժամանակագրական տվյալները, որոնց հետ որոշ ուսումնասիրողներ, ցավոք, պարզապես հաշվի չեն նստել կամ չեն նստում:

Ագաթանգեղոսը ոչինչ չգիտի կամ գոնե ոչինչ չի ասում Տրդատ Մեծի առաջին թագադրման մասին: Նա Պատմահոր նման Տրդատի գահակալությունն սկսում է 288 թվից՝ Դիոկղետիանոսի օգնությամբ Մեծ Հայքում հաստատվելու պահից: Չանդրադառնալով այն անցքերին, թե ինչպես Տրդատը հաստատվեց իր հայրենի թագավորությունում, մեր քննությունն սկսենք այն պահից, երբ նա իր իշխանությունը հաստատեց Մեծ Հայքի թագավորության մեծ մասում, իսկ Ներսեհն ստիպված էր քաշվել թագավորության արևելյան շրջանները՝ շարունակելով իշխել այնտեղ «Հայաստանի Մեծ թագավոր» տիտղոսով: Քաղաքական այս իրադրությունը, բնականաբար, ձեռք չէր տալիս թե՛ մեկին և թե՛ մյուսին, սակայն երկուսն էլ ստիպված էին հաշտվել, թեկուզև ժամանակավոր, ստեղծված կացության հետ և սպասել առավել հաջող ժամանակների՝ ամբողջ երկրին տիրելու համար: Ըստ որում, եթե Տրդատ Գ-Տիրանը դրան պատրաստվում էր որպես երկրի օրինական տիրակալ, ապա Ներսեհը պատրաստ էր վերածվել Հայ Սասանյանի և հիմք դնել հայկական արքայատոհմի , քանի որ մինչև 293 թվականը նրա առաջ փակել էին դեպի պարսից գահ տիրելու ճանապարհը:

Համաձայն Ագաթանգեղոսի, «Յառաջին ամին Տրդատայ արքայութեանն Հայոց Մեծաց, խաղացին եկին հասին յԵկեղեաց գաւառ, ի գեւղն Երիզայ, ի մեհեանն Անահտական, զի անդ զոհս մատուսցեն, և իբրև կատարեցին զգործն

անարժանութեան՝ իջին բանակեցան առ ափն գետոյն զոր Գայլն ասեն»:[84] Այստեղ, չնայած թագավորի բոլոր հորդորներին, Գրիգոր Պարթևը կամ ապագա Գրիգոր Լուսավորիչը հրաժարվեց պսակներ և ծառերի թավ ոստեր դնել բագնի Անահտական պատկերին[85]: Ինչպես և պետք էր սպասել, Անահիտ աստծուն չպաշտելու համար Գրիգոր Պարթևը ենթարկվեց ահավոր տանջանքների[86] , իսկ թագավորն էլ՝ հույսը կորցնելով, թե նա կհրաժարվի քրիստոնեական դավանանքից, և իմանալով, որ նա Անակ Պարթևի՝ իր հորն սպանողի, որդին է, կարգադրեց նրան տանել Այրարատ և բանտարկել Արտաշատ քաղաքի բերդում գտնվող ներքին խոր վիրապում, որ այնտեղ էլ մեռնի: Ագաթանգեղոսը գրում է. «Եւ եղև նա յայնմ վիրապի ամս երեքտասան: Եւ ինքն իսկ թագաւորն խաղայր գնայր ի ձմեռոց յԱյրարատ գաւառ, ի Վաղարշապատ քաղաք, ի Հայոց աշխարհ յարևելս»:[87] Այս դեպքերի առնչությամբ ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ Տրդատը՝ զարմանալով, իրողություն, որ հարիր չէ պատմիչի նախկին հաղորդմանը, թե նա գիտեր Գրիգորի քրիստոնյա լինելու մասին, ասում է . «Այսչափ ամք են, զի տեսի ես զքեզ, և յամենայն զօրութենէ քումմէ ծառայեցէր դու ինձ միամտութեամբ. և ես գոհ էի զվաստակոց քոց և ունէի ի մտի կեցուցանել զքեզ. ընդէ՞ր ոչ առնէս զկամս իմ»:[88] Եվ դրան ի պատասխան Գրիգորը՝ հրաժարվելով թագավորի կամքը կատարել, ասում է, թե ինքը հնազանդ է իր մարմնավոր տիրոջը, սակայն «... զաստուծոյ զպատիւն և զպաշտօն ոչ ումեք վայել է տալ. զի նա միայն է արարիչ երկնից և հրեշտակաց, որ փառաւորիչք են մեծութեան նորա, և երկրի և մարդկան, որ ի նմանէ են ստեղծեալ. որոց պարտ է պաշտել զնա և առնել զկամս նորա. և այլ ամենայն որ է ի նոսա, որ ի ծովու և ի ցամաքի»:[89]

Եվ մինչ Գրիգորը բանտարկված էր, Տրդատն իր թագավորության ամբողջ ընթացքում «... աւերէր քանդէր զերկիրն Պարսից թագաւորութեանն և զաշխարհն Ասորեստանի, աւերէր և հարկանէր ի հարուածս անհնարինս: Վասն այսորիկ պատշաճեցան բանքս այս ի բանս կարգի առակաց, թէ «Իբրև զսէգն Տրդատ, որ սիգալովն աւերեաց զթումբս գետոց, և ցամաքեցոյց իսկ ի սիգալն իւրում զյորձանս ծովուց»: Վասն զի սէգ իսկ էր առ հանդերձս և այլ ուժով պնդութեան, հարստութեամբ, բուռն ոսկերօք և յաղթ մարմնով, քաջ և պատերազմող անհնարին, բարձր և լայն հասակաւ. որ զամենայն ժամանակս կենաց իւրոց պատերազմեալ և առնէր մարտիցն յաղթութիւն: Մեծ անուն պարծանաց քաջութեան անձին ստանայր, և զհոյակապ շքեղութիւն յաղթութեան ընդ ամենայն աշխարհ կացուցանէր. հարկանէր ի հարուածս զթշնամիսն, և խնդրէր զքէնս վրիժուց իւրոց հայրենեացն. առնոյր աւար բազում ի կողմանցն Ասորւոց, և թափէր կապուտ սաստիկ անհնարին ի նոցանէն: Արկանէր ի սուր զզօրս Պարսից, և թափէր կողոպուտ անհնարին. լիներ առաջնորդ

առն և ձիոյ զօրացն Յունաց, և մատնէր նոցա զբանակս նոցա, հանէր զզօրս Հոնաց սաստիկ յոյժ, և գերէր զկողմանս Պարսից»:[90] Այս տեղեկությունը, որ պահպանել է Ագաթանգեղոսի Գրիգորի վարքի խմբագրված և մեզ հասած տարբերակը, ամեն ինչից դատելով, վերաբերում է, եթե չհաշվենք Տրդատ Գ-ի հաղթ մարմին, քաջ ու պատերազմող լինելու մասին տվյալը, Խոսրով Մեծ-Տրդատ Բ-ին: Նրան է վերաբերում ոչ միայն Պարսից երկիրը և Ասորեստանի աշխարհը ավերելու ու քանդելու տեղեկությունը, այլև «Իբրև զսէգն Տրդատ, որ սիգալովն աւերեաց զթումբս գետոց, և ցամաքեցոյց իսկ ի սիգալն իւրում զյորձանոս ծովուց»-ը[91], «...խնդրէր զքէնս վրիժուց իւրոց հայրենեացն»-ը, «հանէր զզօրս Հոնաց սաստիկ յոյժ, և գերէր զկողմանս Պարսից»-ը: Ագաթանգեղոսի վարքի խմբագրման ընթացքում, հավանաբար, «ի կողմանցն Ասորեստանեայց» - ն աղավաղվել և վերածվել է « ի կողմանց Ասուրց»-ի, քանի որ Տրդատ Բ-ն և առավել ևս Տրդատ Գ-ն չէին կարող ավարի առնել Ասորվոց կողմերը, սակայն Խոսրով Մեծ Տրդատ Բ-ն իրոք ավարի է առել Ասորեստանի կողմերը:

Հարկ է ուշադրություն դարձնել այն պարագային, որ Գրիգորը՝ ըստ Ագաթանգեղոսի մի հաղորդման, բանտում մնում է տասներեք տարի և մի այրի կին ամեն օր մի նկանակ է նետում Խոր Վիրապ, որով նա կերակրվում է: Դրան կանդրադառնանք մի փոքր ուշ: Ինչ վերաբերում է թագավորին, ապա նա հրովարտակ է արձակում բոլոր մեծամեծներին, իշխաններին ու նախարարներին, գործակալներին ու իր իշխանության տակ գտնվող մարդկանց՝ ազատներին ու զինվորներին, որ հոգան աշխարհի շինությունը, պատվեն աստվածների բագինները նոր շինություններով ու զոհաբերություններով, նվերներով ու ընծաներով, ճոխ ու ջերմեռանդ պաշտամունքով, որ հանկարծ խաժամուժ մարդիկ իրենց տգիտության պատճառով հավատը չարհամարհեն:[92] Այս բոլոր տարիներին, երբ Գրիգորը տասներեք տարի բանտում էր, պատմիչի խոսքերով, հայոց թագավորը ոչ միայն սաստիկ խստությամբ պատերազմում էր պարսիկների դեմ, այլև արձակում է մեկ այլ հրովարտակ, որով՝ դիմելով նախարարներին, զորքին և շինականներին, հայտնում էր, որ «Դուք ինքնին գիտէք, զիարդ ի բնէ ի նախնեացն իսկ յաղթութիւն խաղաղութեան բազում էր շնորհեալ մեզ դիցն օգնականութեամբ, և կամ թէ որպէս զամենայն ազգս նուաճեալ էր, և ի հնազանդութեան ունէաք: Իսկ յորժամ զդիսն ոչ մարթացաք հաճել պաշտամամբն, զկամս նոցա քաղցրացուցանել ընդ մեզ՝ հանին մերժեցին ի ցասմանն իւրեանց զմեզ ի մեծ տերութենէն: Մանաւանդ վասն աղանդին քրիստոնէից պատուիրեալ ձեզ, զի հազար և բիւր դէպ է եթե գտցի ոք, զի նոքա անհնարին լինին խափան դիցն պաշտամանն, զայնպիսիսն թէ գտցեն և վաղվաղակի ի մէջ ածցեն՝ յարքունուստ պարգևք և պատիւք նոցա լիցին շնորհեալ որ զնոսայն

յայտնեսցեն: Ապա թէ ոք չյայտնեսցէ զայնպիսին, կամ թագուսցէ, և գտցի՝ այսպիսին ընդ մահապարտս համարեալ լիցի, և ի հրապարակ արքունի եկեալ մեռցի, և տուն նորա յարքունիս երթիցէ»:[93] Հրովարտակում նաև նշվում էր, որ ինքը չի խնայել անգամ իրեն ծառայություններ մատուցած իր սիրելի Գրիգորին[94]:

Վերը բերված տեղեկությունը, հարկ է խոստովանել, որ այնքան էլ հարիր չի Ագաթանգեղոսի երկի ընդհանուր բովանդակությանը: Եթե այդ եղել է, ինչպես բխում է հիշյալ երկից, մինչև Հռիփսիմյանց կույսերի Մեծ Հայք գալը, ապա բոլորովին հավանական չէ, քանի որ հետագա շարադրանքում ոչինչ չի ասվում հալածանքների և մահապատիժների մասին, իսկ եթե դա արվել էր արտաքին ճնշման պայմաններում, իրողություն, որը բացառվում է մինչև 303 թվից սկսված Դիոկղետիանոսյան հալածանքները, ապա մնում է ենթադրել, որ Ագաթանգեղոսի Գրիգորի վարքի խմբագրողները պարզապես հրովարտակի մասին տեղեկությունը ճիշտ տեղում չեն տեղադրել, որովհետև այն կարող էր ի հայտ գալ միայն 303 թվի փետրվարի 23-ից հետո և այն էլ հռոմեացիներին հանգստացնելու համար, թե Հայոց թագավորությունում նույնպես պայքարում են քրիստոնյաների դեմ: Եթե մեր ենթադրությունը ճիշտ է, ապա քրիստոնյաների դեմ հալածանքներ չեն եղել մինչև 303 թվականը, իսկ դրանից հետո էլ՝ հաշվի առնելով Հայոց թագավորությունում գոյություն ունեցող քրիստոնյաների պատկառելի թիվը, եպիսկոպոս ունենալը, նրանց կողմից եկեղեցիներ հիմնադրելը, իրողություններ, որ պարզապես հնարավոր չէր թաքցնել, կարևոր լույս են սփռում հրովարտակի ցուցադրական բնույթի վրա, քանի որ դրան հետևած Հռիփսիմյանց կույսերի նահատակությանը զոհ գնացին ընդամենը մի քանի տասնյակ մարդիկ:

Ագաթանգեղոսի պատմության համաձայն, այդ ժամանակներում Դիոկղետիանոս կայսրն իր համար կին է փնտրում և այդ նպատակով տերության տարբեր կողմերն է ուղարկում պատկերագործներ, այսինքն նկարիչներ, որոնք թեկնածուներին նկարում էին տախտակների վրա՝ ներկայացնելու համար կայսրին: Պատկերագործները՝ գալով Հռոմայեցվոց քաղաք, կուսանաց մի արգելավանքում, որի գլխավորի անունն էր Գայիանե, հանդիպում են թագակալ տոհմից սերող կույս Հռիփսիմեին, պատկերում են նրան և մատուցում նկարը կայսերը: Դիոկղետիանոսը որոշում է նրա հետ ամուսնանալ: Այդ բանը թույլ չտալու համար Գայիանեն, Հռիփսիմեն և մյուս կույսերը փախչում են Հայաստան, «յԱյրարատ գաւառ, ի Վաղարշապատ քաղաք, զոր և Նորաքաղաքն կոչեն, ի նիստս թագաւորացն Հայոց: Այնուհետև եկեալ մտանէին ի հնձանայարկս այգեստանւոյն, որ կան շինեալ ի հիւսիսոյ յարևելից կուսէ. և կերակրէին ընչիւք իւրեանց ի վաճառաց քաղաքին . և ոչ ինչ այլ ինչ գոյր թոշակ ընդ նոսա զոր ունէին, բայց մի ոմն ի նոցանէ ունէր արուեստ

ապակեգործութեան՝ առնել ուլունս ապակեղէնս, և տալ գինս ընդ կերակրոյ աւուրն պարենն ռոճկի»:[95]

Մինչ հռոմեացի կայսերը գտնվում էին Հայաստանում և, ինչպես հստակ երևում է Ագաթանգեղոսի երկի շարադրանքից, ոչ մի ձևով հալածանքների չէին ենթարկվում, Դիոկղետիանոս կայսրն ամեն ինչ անում է փախստականներին հայտնաբերելու համար: Փախստականներին հայտնաբերել նրան չհաջողվեց, սակայն կայսեր հետախույզները նրան հայտնեցին, որ Հռիփսիմյանց կույսերը փախել են Հայաստան: Այդ ժամանակ, ինչպես հավաստում է Ագաթանգեղոսը, Դիոկղետիանոս կայսրը նամակ է գրում իր «Սիրելի եղբայր աթոռակից» հայոց թագավորին և խնդրում գտնել փախստականներին: Ըստ որում, որքան էլ տարօրինակ լինի, Հռիփսիմեին սիրահարված լինելով հանդերձ, նա առաջարկում է Տրդատին Հռիփսիմեին հավանելու դեպքում իրեն պահել: Թագավորի հրամանով փնտրում են կույսերին և ի վերջո հայտնաբերում Վաղարշապատ մայրաքաղաքում:[96]

Ամենայն հավանականությամբ, Դիոկղետիանոսը նամակով պահանջում էր ոչ միայն գտնել փախստականներին, այլև հալածել քրիստոնյաներին, քանի որ, ինչպես Ագաթանգեղոսն է գրում. «Արդ՝ գտեալ լինէին (Հռիփսիմյանց կույսերը - Հ. Բ.) նոքա ի հնձանս շինուածոցն: Քանզի իբրև եկին հասին հրամանք հրովարտակացն ի մեծ թագաւորէն Յունաց առ Տրդատ արքայն Հայոց Մեծաց՝ ոչ սակաւ ինչ խռովութիւն եղև ի մէջ աշխարհին Հայոց. զի պահէին զամենայն անցս ճանապարհաց պողոտայիցն և զամենայն գակառացն. ի կողմանս կողմանս յուզախնդիրք ելեալ քննէին: Իսկ ուրումն տեսեալ՝ պատմեաց զնոցանէ»[97]:

Բերված տեղեկությունների լույսով միանգամայն հավաստի բացատրություն է ստանում այն փաստը, թե ինչու՞ պատմիչը մինչ այժմ խոսում է Գրիգոր Պարթևի 13-ամյա բանտարկության մասին, քանի որ ուսումնասիրողներին շփոթության մեջ է գցել այն իրողությունը, որ պատմիչը մի դեպքում խոսում է Գրիգոր Պարթևի 13-ամյա, իսկ այլ կապակցությամբ՝ 15-ամյա բանտարկության մասին: Խնդիրն այն է, որ՝ չնայած պատմիչն այդ մասին ուղղակի չի գրում, սահմանաբաժան գիծը Հռիփսիմյանց կույսերի Հայաստան գալն է, որը տեղի է ունեցել Գրիգոր Պարթևի բանտարկության 13-րդ տարում կամ 301 թվին: Այլ խոսքով, նրանց փախուստը, որ միանգամայն պատմական իրողություն է, տեղի է ունեցել մինչև Դիոկղետիանոս կայսեր կողմից կայսրության ամբողջ տարածքում քրիստոնյաների նկատմամբ հալածանքներ սկսելը: Կամեցել է արդյո՞ք Դիոկղետիանոս կայսրը ամուսնանալ Հռիփսիմեի հետ թե ոչ, հազիվ թե կարելի է պարզել, սակայն մի բան պարզ է, որ Հռիփսիմեի նկատմամբ մեծ սեր տածող կայսրը հազիվ թե համաձայն լիներ, որ եթե Հռիփսիմեի

գեղեցկությունը հաճո լինի հայոց թագավորին, ապա վերջինս կարող էր նրան իրեն պահել:[98]

Տրդատը կարգադրում է Հռիփսիմեին պալատ բերել և դրա համար ոսկիապատ գահավորակ ու գեղեցիկ հանդերձներ է ուղարկում: Սակայն Հռիփսիմեն հրաժարվում է գնալ, իսկ թագավորը կարգադրում է ուժով բերել: Տրդատը՝ տեսնելով նրա աննկարագրելի գեղեցկությունը, որոշում է նրան կնության առնել և ուժով տիրել, սակայն չնայած իր ամեհի ուժին չի կարողանում տիրանալ նրան: Կայսեր սերը մերժած Հռիփսիմեն բոլորովին մտադիր չէր տեղի տալ հայոց հեթանոս թագավորի սիրո կամ կրքի առաջ: Այդ ժամանակ փորձ արվեց Հռիփսիմեի վրա ազդել Գայիանեի միջոցով, սակայն վերջինս Հռիփսիմեին կոչ արեց ամուր մնալ Քրիստոսի հավատին: Դրա համար քարերով ջարդում են նրա ատամները, սակայն այդպես էլ չեն կարողանում հասնել իրենց նպատակին: Ավելին, Հռիփսիմեին զարմանալիորեն հաջողվում է բզկտված հագուստներով դուրս պրծնել պալատից և գնալ դեպի քաղաքի Արեգ դուռը՝ դեպի հնձանները, որտեղ նրանց վանքն էր: Լուր տալով իր ընկերուհիներին, նա շարժվում է քաղաքից դեպի հյուսիս « ի տեղի մի յարևելս կոյս, ի սարաւանդակ ի բարձրաւանդակ յաւազին տեղի մի, մօտ ի բուն պողոտայն, որ երթայր յԱրտաշատ քաղաք»:[99]Տրդատ թագավորի հրամանով նրան բռնում են ու տանջամահ անում, իսկ նրա հետ մեկտեղ սպանում ևս 33 հոգու: Թագավորն այսպիսով՝ չնայած իր ուժին ու հզորությանը, չնայած պատերազմներում ցուցաբերած իր քաջությանը և օլիմպիադաներում հռչակվելուն, Եփրատից այն կողմ Տաճկաց կողմերում մղած կռիվներին ու խիզախությանը, երբ վիրավոր վիճակում երիվարով անցնում էր գետը, հաղթահարվում էր քրիստոնյա աղջկա կողմից:[100] Այս ամենի պատճառով նա միայն խստացնում է հալածանքները նոր վարդապետության հետևորդների դեմ: Սպանում են նաև Գայիանեին՝ հանելով հարավային դռնով քաղաքից դուրս, դեպի Մեծամորի կամուրջը տանող պողոտայի կողմերում, մի ճահճախուտ վայրում, որտեղ սովորաբար սպանում էին մահապարտներին:[101] Նրա հետ սպանվում են ևս մի քանի կույսեր և նահատակների թիվը հասնում է 37-ի:[102] Պատմիչի խոսքերով, Հռիփսիմեն նահատակվում է իր 33 ընկերուհիների և ընկերների հետ հոռի ամսի 26-ին, իսկ Գայիանեն՝ 27-ին իր երկու ընկերուհիների հետ:[103] Թագավորը՝ վեց օր մեծապես տրտմելով Հռիփսիմեին կորցնելու համար, որսի է դուրս գալիս «ի դաշտն Փառական Շեմակաց»:[104]Պատմիչի խոսքերով, երբ մինչ նա պատրաստվում էր կառք նստել քաղաքից դուրս գալու համար, նրան աստծու կողմից՝ թեկուզև ուշացած, պատիժ է հասնում՝ դարձնելով արքային վայրի խոզերի նման:[105] Մի կողմ թողնելով այս հրաշապատումները, որոնք ինչպես դժվար չէ տեսնել, հորինվել են շատ ավելի ուշ, լոկ նշենք, որ պատմիչի խոսքերով Տրդատի

քույր Խոսրովիդուխտը երազում տեսնում է Աստծուն, որը նրան հայտնում է, թե միայն Արտաշատում բանտարկված Գրիգորը կարող է նրան բուժել: Երբ այդ մասին նա հայտնում է արքունիքում, բոլորը ծիծաղում են և ասում. «Եւ դու ուրեմն մոլեգնեցար. դև ուրեմն հարաւ ի քեզ: Զիա՞րդ է, զի այս հնգետասան ամ է, զի ընկեցին զնա յանհնարին խոր վիրապն, և դու ասես եթէ կենդանի է. արդ և ոսկերոտին իսկ ու՞ր իցեն. զի նոյն օրին, իբրև իջուցին զնա անդր՝ յօձիցն իսկ տեսլենէն նոյնժամայն սատակեալ իցէ»:[106] Սակայն տեսիլը կրկնվում է, իսկ Խոսրովիդուխտը պատմում է նախարարներին, որոնք ի վերջո Օտա անունով իրենցից մեկին ուղարկում են Արտաշատ, որը Գրիգոր Պարթևին հանում է Խոր վիրապից, լողացնում է, հանդերձավորում և բերում Վաղարշապատ: Վերջինս՝ տեղ հասնելով, հայտարարում է, որ ինքն էլ սովորական մարդ է, մահկանացու, ուստի պետք է դիմել արարչին, որն ստեղծել է երկինքը և երկիրը, արևը, լուսինը և աստղերը, ծովն ու ցամաքը, և նա կկարողանա արքային բուժել:[107] Այս ընթացքում Գրիգորը նահատակ կույսերի մարմինները հողին է հանձնում այնտեղ, ուր նրանք սպանվել էին և սկսում է քարոզել աստծո խոսքը՝ կոչ անելով հավատալ Քրիստոսին և հրաժարվել սուտ և սնոտի հեթանոսական քարեղեն, փայտեղեն, արծաթեղեն ու ոսկեղեն պղնձաձույլ աստվածներից:[108] Ագաթանգեղոսի մեզ հասած պատմության 259-715 պարագրաֆները մատուցում են նոր վարդապետությունը, որն ստեղծվել է Գրիգոր Լուսավորչի Վարքը խմբագրողների կողմից, և, անտարակույս, սկզբնական հունական բնագրում գոյություն չի ունեցել, ինչը կարելի է եզրակացնել Վարքի տարբեր լեզուներով թարգմանություններից: Պատմիչի հետագա շարադրանքից պարզվում է, որ Գրիգոր Լուսավորիչն անդադրում քարոզում է 65 օր, իսկ 66-րդ օրը թագավորը իշխաններով ու նախարարներով, կանանցով, երեխաներով և խառնիճաղանճ ամբոխով խնդրում են աստծու դատաստանից փրկություն: Այնժամ հայոց լուսավորիչը մատուռներ է կառուցում նահատակվածների գերեզմանին՝ երեք վկայարաններ, որոնցից մեկը քաղաքի հյուսիս-արևելյան կողմում, որտեղ սպանվել էին Հռիփսիմեն և նրա 32 ընկերուհիներն ու ընկերները, մյուսը՝ նրանից դեպի հարավ, ուր վկայել էին Գայիանեն և իր ընկերուհիները, իսկ երրորդը՝ այգու հնձանում, որտեղ նրանց վանքն էր գտնվում: Այնուհետև Գրիգորը բուժում է թագավորին ու այլևայլ հիվանդներին և իրավունք ստանում նոր վարդապետությունը քարոզելու: Պատմիչի խոսքերով «Որոց և ինքեանք իսկ ի կողմանց կողմանց և ի գաւառաց գաւառաց Հայաստան աշխարհին՝ յորդեալք և դրդեալք հասանէին ի բացեալ աղբիւրն շնորհաց գիտութեանն Քրիստոսի: Քանզի յԱյրարատեան գաւառին, ի թագաւորանիստ կայեանսն, բղխեցին Հայոց տանն Թորգոմայ շնորհք քարոզութեան Աւետարանին պատուիրանացն Աստծոյ»:[109]

Հիվանդացած է եղել թագավորը դիվահարությամբ թե՞ ոչ, դժվար է ասել: Հնարավոր է Գրիգոր Պարթևի բանտից ազատվելը թե՛ քաղաքական որոշակի նպատակներով և թե՛ հիվանդության պատճառով, սակայն աներկբա է, որ թագավորի հետ մի ինչ-որ հրաշագործություն պատահել է: Սակայն, ըստ էության, բնավ էլ դա չէ ամենակարևորը, որովհետև , ինչպես դժվար չէ եզրակացնել, ազատելով Խոր Վիրապից՝ ինչ-ինչ շարժառիթներով, Գրիգոր Պարթևին, ոչ թագավորը քրիստոնեություն ընդունեց և ո՛չ էլ քրիստոնեությունը պարտադրեց ժողովրդին: Չի բացառվում, որ արդեն Գրիգորին Խոր Վիրապից ազատելիս, Տրդատ Մեծը ծրագրեր էր մտմտում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու ուղղությամբ, սակայն նա որպես պետական գործիչ հիանալի հասկանում էր, որ դա պարզապես անհնար է Դիոկղետիանոսի կողմից Հռոմեական կայսրությունում քրիստոնյաների նկատմամբ իրականացվող լայնածավալ հալածանքների պայմաններում, ուստի քրիստոնեության պետական կրոն հռչակումը անորոշ ժամանակով օրակարգից հանվեց:

Թագավորի հրամանով և բոլորի հավանությամբ Գրիգորը իրավունք է ստանում իբր վերացնելու հեթանոսությունը: Իսկ ինքը թագավորը զորքով Վաղարշապատից գնում է Արտաշատ և ավերում է այնտեղ «...զբագինսն Անահտական դիցն, և որ յերազամոյն տեղիսն անուանեալ կայր: Նախ դիպեալ ի ճանապարհի երազացոյց երազահան պաշտաման Տրի դից, դպրի գիտութեան քրմաց, անուանեալ Դիւան գրչի Որմզդի, ուսման ճարտարութեան մեհեան. նախ ի նա ձեռն արկեալ՝ քակեալ այրեալ աւերեալ քանդեցին»:[110] Տիր աստծո սպասավորները փախչում են Անահտական մեհյան, փորձում դիմադրել, սակայն պարտվում են և փորձում փախչել «ի բնակիչս լերինն Կաւկասու, ի կողմանս հիւսիսոյ»:[111] Մեհյանի դաստակերտները, սպասավորներին քրմերով հանդերձ և նրանց ունեցած հողերով ու կալվածներով նվիրում են եկեղեցուն:[112] Գրիգոր Լուսավորիչը Հայաստանի բոլոր քաղաքներում, գյուղերում, ավաններում և ագարակներում որոշում է եկեղեցու կառուցման տեղերը: Սակայն պատմիչի ասելով նա եկեղեցիներ չէր հիմնում, որովհետև քահանայության պատիվ չուներ, այլ լոկ այդ վայրերը քարերով պարսպում էր և տերունական խաչի նշանն էր դնում: Այդ նշանը նա կանգնեցնում է նաև ճանապարհների ելքերում և մուտքերում, փողոցներում և հրապարակներում, ճանապարհներին կից ամրոցներում և այլուր:[113] Գրիգորն սկսում է քարոզել նոր վարդապետությունը թագավորին և Արշակունյաց տոհմի երևելիներին և իր հետ վերցնելով թագավորին, նա գնում է Դարանաղյաց գավառը, որտեղ Թորդան գյուղում կործանում է «մեհեան անուանեալ սպիտակափառ դիցն Բարշամինայ», ջարդում է աստծու արձանը, իսկ մեհյանի գանձերը բաժանում աղքատներին և գյուղն իր բոլոր դաստակերտներով ու

սահմաններով՝ նվիրում եկեղեցուն:[114] Քրմերը փախչում են Խաղտյաց կողմերը, իսկ իրենք ժամանում են Անի թագավորական կայանը, որտեղ արքունական հանգստարանն էր, և կործանում են Արամազդի կամ Զևսի բագինը՝ տերունական նշանը կանգնեցնելով:[115] Այնուհետև անցնում են հարևան Եկեղեաց գավառ և ավերում հայոց մեծ և բուն մեհյանը՝ Անահտական բագինը, Երէզ կոչված ավանում՝ կոտրելով քրմերի դիմադրությունը: Փշրում են Անահիտ աստծու ոսկե արձանը, կողոպտում մեհյանի ոսկին ու արծաթը և՝ անցնելով Գայլ գետը, Թիլ ավանում կործանում Արամազդի դստեր մեհյանը, որ Նանեական էր կոչվում:[116] Ամենուրեք թագավորը կարգադրում էր հավատալ Քրիստոսի վարդապետությանը: Այնուհետև Դերջան գավառում ավերում են Արամազդի որդուն նվիրված Մրհավան մեհյանը Բագայառիճ գյուղում: Մեհյանի գանձերը բաժանում են աղքատներին, իսկ կալվածքները նվիրում եկեղեցուն:[117]

Տրդատն այնուհետև միաբանությամբ կնոջ՝ Աշխենի և քրոջ՝ Խորովադուխտի, հրաման է տալիս Վաղարշապատում հավաքվել զորքին, մեծամեծերին և կուսակալներին, գավառակալներին, պատվավորներին, պատվականներին, զորավարներին, պետերին և իշխաններին, նախարարներին և ազատներին, դատավորներին ու զորագլուխներին և նրանց առաջարկում Գրիգորին եկեղեցու հովիվ կարգել:[118] Պատմիչի խոսքերով «Յայնժամ թագաւորն վաղվաղակի փութով և երկիւղիւ և մեծաւ խնդութեամբ հոգացեալ, գումարեաց զգլխաւորս նախարարացն և զկուսակալս աշխարհացն. առաջին՝ իշխանն Անգեղ տան, երկրորդ՝ իշխանն Աղձնեաց, որ է բդեաշխն մեծ. երրորդ՝ իշխանն մարդպետութեան իշխանութեանն, չորրորդ՝ իշխանն թագակապ իշխանութեան ասպետութեանն, հինգերորդ՝ իշխանն սպարապետութեան, զօրավար Հայոց աշխարհին. վեցերորդ՝ իշխանն Կորդովտաց աշխարհին, եօթներորդ՝ իշխանն Ծոփաց աշխարհին. ութերորդ՝ իշխանն Գուգարացւոց աշխարհին, որ միւս անուանեալ բդեաշխն. իններորդ՝ իշխանն Ռշտունեաց աշխարհին. տասներորդ՝ իշխանն Մոկաց աշխարհին. մետասաներորդ՝ իշխանն Սիւնեաց աշխարհին. երկոտասաներորդ՝ իշխանն Ծաւդէից աշխարհին. երեքտասաներորդ՝ իշխանն Ուտիացւոց աշխարհին. չորեքտասաներորդ՝ իշխանն շահապ Զարաւանդ և Հեր գաւառի. հնգետասաներորդ՝ իշխանն մաղխազութեան տանն. վեշտասաներորդ՝ իշխանն Արծրունեաց:

Այս իշխանք են ընտիրք, կուսակալք, կողմնակալք, հազարաւորք, բիւրաւորք ի մէջ Հայաստան աշխարհի տանն Թորգոմայ, զոր գումարեաց թագաւորն Տրդատ և առաքեաց զնոսա ի կողմանս Կապուտկացւոց, ի քաղաքն Կեսարացւոց, զոր ըստ հայերէն լեզուին Մաժաք կոչեն. զի տարեալ զԳրիգորն՝ քահանայապետ կացուսցեն իւրեանց աշխարհին. և հանդերձեցան դէտ ակն ունել ճանապարհացն»:[119]

Թագավորի հրովարտակով հայոց հիշյալ մեծամեծները ներկայանում են Կեսարիայի Ղևոնդիոս արքեպիսկոպոսին՝ հյուրընկալություն գտնելով ճանապարհին կայսրության իրենց երթուղու վրա գտնվող քաղաքներում:[120] Կեսարիայում նրանք ևս լավ ընդունելություն են գտնում և Ղևոնդիոսը «Սրբով Աւետարանիւն եդին ի վերայ նորա ձեռս ժողովք եպիսկոպոսացն»:[121] Ետ վերադառնալիս հայկական պատվիրակությունը կաթողիկոսի կամ եպիսկոպոսապետի հետ միասին ջերմ հյուրընկալություն է գտնում Սեբաստիայում, որտեղ Գրիգոր Լուսավորիչը կարողանում է բազմաթիվ հավատակիցների՝ ամենայն հավանականությամբ գերակշիռ մասով հայերի, համոզել իր հետ գալու Մեծ Հայք՝ խոստանալով նրանց քահանայացնել: Դրանից հետո նրանք վերադառնում են՝ այլևայլ վայրերում օթևանելուց հետո, «ի Հայաստան աշխարհ»:[122]

Պատմիչի հետագա շարադրանքից պարզվում է, որ Գրիգոր Լուսավորիչը՝ հասնելով Հայոց սահմանները, լսում է, որ երկրի ութերորդ նշանավոր մեհյանը, որ գտնվում էր Տարոնի երկրում ու Վահեվանյան անունն էր կրում կամ Վիշապաքաղ Վահագնի կոչվում և հայոց թագավորների զոհաբերության վայրերից էր Քարքե լեռան սնարին՝ Եփրատ գետի վրա, Տավրոս մեծ լեռանը հանդիման, շարունակում է պահպանվել: Պաշտամունքային այդ կենտրոնը, որ առավելապես Աշտիշատ էր կոչվում, բաղկացած էր երեք բագիններից. առաջինը Վահեվանյան մեհյանն էր, երկրորդը՝ Ոսկեմոր Ոսկեծին աստվածուհունը և բագինն էլ կոչվում էր Ոսկեհատ Ոսկեմոր աստվածուհու մեհյան և երրորդը՝ նվիրված Աստղիկ աստվածուհուն, կոչվում էր Սենյակ Վահագնի:[123] Գրիգոր Լուսավորիչն՝ իր հետ ունենալով Հովհաննես Մկրտչի և նահատակ Աթանագինեսի[124] նշխարքները, գալիս է ավերելու երկրի ութերորդ նշանավոր մեհյանը: Երբ հասնում են մեհյանին հանդիպակաց մի վայր Եփրատ գետի մոտ և Լուսավորիչը մտադիր էր բարձրանալ մեհյան՝ կործանելու բագինները և շինելու վկայատուն, սպիտակ ջորիները չեն կարողանում կառքը մի փոքրիկ ձորակի գետակով անցկացնել, իսկ աստծու հրեշտակը նրան հայտնում է, որ Տերը հաճեցավ բնակվել այս վայրում: Այստեղ մատուռ են շինում և այնուհետև Գրիգոր Լուսավորչի հրամանով կործանում են մեհյանը և կառուցում եկեղեցի: Անցկացնելով այստեղ 20 օր , Լուսավորիչը մկրտում է տասնինը բյուր մարդու, կարգում է տարբեր վայրերում քահանաներ և այնուհետև շարժվում դեպի Բագավան քաղաքագյուղ:[125]

Տրդատն էլ՝ լուր ստանալով Գրիգոր Լուսավորչի գալստյան մասին, վերցնելով իր հետ Աշխեն տիկնոջը, Խոսրովիդուխտ քրոջը և զորքը, գալիս է Բագավան և շուրջ մեկ ամիս սպասում նրան այնտեղ: Ընդառաջ գալով նրան, թագավորը հանդիպում է հայոց հայրապետին Եփրատի ափին և հայոց իշխանները նրան են հանձնում

«Ղևոնդէս արքեպիսկոպոս մետրոպոլիտ Մեգաղէ Կեսարու»-ի պատասխան նամակը:[126] Հավաքվածները կաթողիկոսի հրամանով մեկ ամիս պաս են պահում և աղոթում: Պասն ավարտվելուց հետո Գրիգոր Լուսավորիչը՝ վերցնելով զորքը, թագավորին, Աշխեն թագուհուն, Խոսրովիդուխտ քրոջը և բոլոր մեծամեծներին, մտնում է Եփրատ գետը և մկրտում նրանց:[127] Այդ օրը մկրտվում են տասնհինգ բյուր մարդ:[128]Եթե հավատանք պատմիչին, ապա հետագա յոթ օրերի ընթացքում մկրտվում են ևս չորս հարյուր բյուր մարդ:[129] Սահմանվում է եկեղեցական տոն և պատմիչի հաղորդմամբ «Եւ զյիշատակս վկայիցն բերելոց ժամադրեաց ի տօն մեծ հռչակել, սնոտեացն պաշտաման ի ժամանակի՝ դիցն Ամանորոյ ամենաբեր նոր պտղոց տօնին, Հիւրընկալ դիցն Վանատրի, զոր յառաջագոյն իսկ ի նմին տեղւոջ պաշտէին յուրախութեան նաւասարդ աւուր: Զի ժողովեալ ի յիշատակ մեծի ելանելւոյն Յովհաննու և սրբոյ վկային Աստուծոյ Աթանագինէի՝ յայնմ աւուր խմբեալ ի նմին յաւանին տօնեսցեն»:[130] Մինչ հայոց կաթողիկոսը եկեղեցիներ էր շինում թագավորության բոլոր աշխարհներում, գավառներում, քաղաքներում, ավաններում, շեներում, գյուղերում և ագարակներում, հայոց արքան կարգադրում է եկեղեցուն տալ «չորս չորս հողս երդոյ յամենայն ագարակ տեղիս, իսկ յաւանսն եօթն եօթն հող երդոյ՝ ի ծառայութիւն սպասաւորութեան քահանայութեանն, նուէր պտղոյ Տեառն մատուցանէր»:[131] Գրիգորը թագավորի հավանությամբ բազմաթիվ մանուկներ է հավաքում և վարժեցնում դպրության արվեստի մեջ՝ նրանցից վարդապետներ կարգելու համար: Մասնավորապես ժողովում են և քրիստոնեության ոգով դաստիարակում քրմերի զավակներին՝ մի մասին վարժեցնելով ասորական, իսկ մյուս ներին հունական դպրության մեջ:[132]

Հայոց կաթողիկոսը՝ ժամանելով Վաղարշապատ, ճանապարհին Արտաշատում և ամենուրեք եկեղեցիներ է շինում և քահանաներ կարգում: Եվ պատմիչի խոսքերով «Եւ այսպէս ընդ ամենայն երկիրն Հայոց, ի ծագաց մինչև ի ծագս, ձգտէր տարածանէր զմշակութիւն քարոզութեանն և աւետարանութեանն. ի Սատաղացւոց քաղաքէն մինչև առ աշխարհաւն Խաղտեաց, մինչև առ Կաղարջօք, մինչ ի սպառ ի սահմանս Մասքթաց, մինչև ի դրունս Ալանաց, մինչ ի սահմանս Կասպից, ի Փայտակարան քաղաք արքայութեանն Հայոց. և յԱմդացւոց քաղաքէն մինչև առ Մծբին քաղաքաւ, քերէր առ սահմանօքն Ասորւոց առ Նոր Շիրական երկրաւն և առ Կորդուօք մինչև յամուր աշխարհն Մարաց, մինչև առ տամբն Մահքր-Տան իշխանին մինչև յԱտրպատական ձգտէր տարածանէր զաւետարանութիւնն իւր»:[133] Քրմերի զավակներից շատերին հոգևորական է ձեռնադրում, իսկ տասներկուսին եպիսկոպոսության աստիճան շնորհում, որոնք էին՝ «Աղբիանոս անուն, որ ապա կողմանցն Եփրատական գետոյն լինէր վերակացու. երկրորդին՝ Եւտաղիոս, որ ի

կողմանս վայրացն Բասենոյ կացեալ լիներ հովիւ. երրորդն՝ Բասոս. չորրորդն՝ Մովսէս, հինգերորդն՝ Եւսեբիոս. վեցերորդն՝ Յովհաննէս. յօթներորդն՝ Ագապէս. ութերորդն՝ Արտիթէս. իններորդն՝ Արսուկէս. տասներորդն՝ Անտիոքէս. մետասաներորդն՝ Տիրիկէս. երկոտասաներորդն՝ Կիւրակոս: Այսք՝ որ յորդւոց քրմացն ընտրեցան լինել եպիսկոպոսք կողմանց կողմանց, աճեցուցանել զքարոզութիւնն: Եւ զայլոցն անուանս թէ և կամիցի ոք՝ ոչ կարասցէ շարել»:[134] Աղբիանոսը, որի տոհմը հետագայում հասավ կաթողիկոսական աստիճանի, վերակացու է թողնվում «արքունական դրան բանակին»:[135] Մեկ այլ հաղորդմամբ, Գրիգոր Լուսավորիչը «Եւ բազմացոյց կացոյց տեսուչս եպիսկոպոսս յամենայն գաւառս Հայոց իշխանութեան իւրոյ. և որ յաստիճան եպիսկոպոսութեան ձեռնադրեցան ի նմանէ՝ աւելի քան զչորեքարիւր եպիսկոպոս, որք կացին տեսուչք տեղեաց տեղեաց: Իսկ կարգք երիցանց կամ սարկաւագաց կամ անագնովսաց, և որ այլ ևս ի պաշտօն Տեառն կացին՝ անթիվք էին ի բազմութենէն»:[136]

Ագաթանգեղոսի պատմության հունական նորահայտ խմբագրությունը (Վարք), որ հրատարակեց Գ. Գարիտը[137] և հայերեն թարգմանեց Հ. Բարթիկյանը,[138] հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում վերը հիշյալ եպիսկոպոսների մասին. «(Գրիգորը) շտապում էր Մեծ Հայքի այլ շրջաններում ևս եպիսկոպոսներ նշանակել, Աղբիանոսին՝ Բագրևանդում և Արածանի գետի մոտ ապրող բնակիչների համար. սա նախկինում քուրմ էր, բայց անցնելով ճշմարիտ հավատքի և աստվածածանոթության կողմը, իր մեծ առաքինությամբ և համեստությամբ արժանացավ <u>առաքելական աթոռին</u>: (Գրիգորը) որպես եպիսկոպոս Բասեն ուղարկեց Եվթաղիոսին, Բասիոսին՝ Կոտայք, Մովսեսին՝ Եկեղյաց գավառը և Դերջան, Եվսեբիոսին՝ Դարանաղյաց գավառը, Հովհաննեսին՝ Կարնո գավառը, Ագապիոսին՝ Սպեր, նահանգի իշխան սպարապետի (ασπαραπέτη-ն Գ. Գարիտը իրավացիորեն սրբագրում է άσπέτη, ուստի սպարապետի փոխարեն պետք է լինի ասպետ – Հ. Բ.), Աղբիոսին՝ սպարապետական տունը, որը պատկանում էր Մամիկոնյանների տոհմին: Սրանք իրենց նախարարի՝ մեծ զորավարի և սպարապետի հետ միասին միշտ թագավորի հետ էին, դրա համար էլ Սուրբ Գրիգորը հրամայեց, որ Աղբիոսը միշտ թագավորի մոտ լինի և իր [Գրիգորի] տեղը գրավի մշտական քարոզչության և վարդապետության, ... կրթություն էր ստացել և քաջածանոթ էր Աստվածաշունչ գրքերին: Նա Տարոնի և Տայքի եպիսկոպոսն էր: Արտիթանին (Գրիգորը) եպիսկոպոս ձեռնադրեց և Խորխոռունյաց նախարարի հետ Մաղխազաց (գավառն) ուղարկեց, Արսուկանին՝ Շիրակ, Անտիոքոսին՝ Կորդվաց աշխարհը, Տիրիկիոսին՝ Վանանդացվոց, Աբեղյանց և Գաբեղյանց (երկիրը): Մի ուրիշին՝ Կիրակոսին, Արշամունյաց գավառը: Ահա այսպես ճշմարտության խոսքը քաջալերելու ընդունակ բազմաթիվ եպիսկոպոս և

քորեպիսկոպոս ձեռնադրելով ուղարկեց զանազան վայրեր և շրջաններ»:[139] Սույն տեղեկությունը լուսաբանելու համար նպատակահարմար ենք գտնում նաև նշելու, որ Ագաթանգեղոսի հունարեն Վարքում ասվում է, թե Գրիգորը «Անգեղտուն, Աղձնիք, Մեծ Ծոփք, Փոքր Ծոփք, Հաշտյանք, Սյունիք, Արծն, Մոկաց երկիր և Մարդպետական, բոլոր իշխանություններում և նահանգներում եպիսկոպոսներ նշանակեց և ուղարկեց այնտեղ իրենց իշխանների հետ»[140], իսկ Այրարատում՝ Վաղարշապատում, Արտաշատում և Դվինում մշտական եպիսկոպոսարաններ է կառուցում և հիշյալ քաղաքներն իր աթոռին ենթարկում:[141]

Բավական է թռուցիկ հայացք նետել հիշյալ տեղեկություններին համոզվելու համար, որ Ագաթանգեղոսի հունարեն թարգմանված Վարքն այնպիսի տեղեկություններ ունի, որ Ագաթանգեղոսը պարզապես գրել չէր կարողանա: Սկսենք այն հանգամանքից, որ Գրիգոր Լուսավորչի ժամանակակից Աղբիանոս եպիսկոպոսը շփոթված է Պապ թագավորի շրջանում հովվապետած Աղբիանոսի հետ, քանի որ առաջինը երբեք չէր կարող արժանանալ առաքելական աթոռին, այլ խոսքով՝ հայոց կաթողիկոսությանը: Ոչ պակաս տարօրինակ է, որ Գրիգոր Լուսավորչի առնչությամբ հիշատակվում է Դվինը, որը որպես քաղաք կարող էր հանդես գալ միայն Խոսրով Բ Կոտակի օրերում: Հունարեն Վարքը Ագաթանգեղոսի պատմության հայերեն տարբերակի համեմատությամբ ավել է հիշատակում Աղբիոս եպիսկոպոսի անունը, որը դարձավ Մամիկոնյանների տոհմի եպիսկոպոսը: Տարբերությունը բացատրել դժվարանում ենք, քանի որ հարցը լուսաբանող այլ տեղեկություններ չեն պահպանվել: Այսուհանդերձ, կամենում ենք ընդգծել, որ եթե հայկական Ագաթանգեղոսը Աղբիանոսին է վերագրում արքունական բանակի դրան վերակացությունը, ապա հունական Ագաթանգեղոսը այդ իրավունքը վերապահում է Աղբիոսին, հանգամանք, որ մի կողմից կարծես ցույց է տալիս ուշ ժամանակների ազդեցություն, իսկ մյուս կողմից կարծես մտածել է տալիս, թե Աղբիանոսի անունը պարզապես աղավաղվել է ու վերածվել Աղբիոսի և այնուհետև միացվել քրմական ընտանիքներից սերած 12 եպիսկոպոսների ցուցակին: Վերջինիս հետ կապված առավել քան կասկածելի է Բասիոսին Կոտայք ուղարկելը, երբ վերջինս կարող էր ձևավորվել միայն Հայաստանի՝ Բյուզանդական կայսրության և Պարսկաստանի միջև 591 թվի բաժանումից հետո, Մովսեսին՝ Եկեղյաց գավառ ու Դերջան, Եվսեբիոսին՝ Դարանաղյաց գավառ, Հովհաննեսին՝ Կարնո գավառ ուղարկելը, քանի որ, ինչպես Ստեփանոս Օրբելյանն է գրում[142], Գրիգոր Լուսավորչի կողնից ստեղծված եպիսկոպոսությունների թիվը 36 էր և հազիվ թե դրանցից 3-ը նշանակվեին Եփրատի վերին հոսանքի ավազանի ոչ մեծ տարածքում: Մի բան հստակ է, որ Ագաթանգեղոսի բնագիր Վարքում տեղեկություններ չեն եղել այն մասին, թե քրմական

ընտանիքներից սերող եպիսկոպոսները որ գավառներն են ուղարկվել և հունական Ագաթանգեղոսը իր վրա կրում է ուշ ժամանակների իրողությունների ազդեցությունը:

Որոշ ժամանակ հովվապետելուց հետո Գրիգոր Լուսավորիչը հեռանում է անապատ վայրեր, իսկ Տրդատ արքան զորքի սպարապետ Արտավազդին, Աշոցքի իշխան Տաճատին և արքունի Կարապետ Դատին ուղարկում է Կապադովկիա, որտեղից նրանք բերում են Գրիգորի զավակներ Վրթանեսին, որ աշխարհական էր, և Արիստակեսին, որը՝ հոգևորական ձեռնադրվելով, հաստատվել էր տեղի մենաստաններից մեկում:[143] Տրդատի հրամանով գալիս է նաև Գրիգորը, որը ճգնում էր Դարանաղյաց գավառում, Մանյա Այրք կոչվող լեռան քարանձավներից մեկում: Թագավորի խնդրանքով Գրիգոր Լուսավորիչն իր կրտսեր որդի Արիստակեսին ձեռնադրում է եպիսկոպոս:

Հայտնի է, որ Ագաթանգեղոսի երկը մեզ անաղարտ չի հասել, իսկ մեր տրամադրության տակ եղածը ընդամենը Ե դարի խմբագրություն է՝ դրանից բխող բոլոր հանգամանքներով, ուստի շատ դեպքերում պարզապես դժվար է ստուգել ասվածի ստուգությունը: Սակայն մի բան, մեր կարծիքով, անտարակույս է: Այդ ամենը հազիվ թե կարող էր տեղի ունենալ Տրդատի գահակալության 15-րդ տարում, երբ կայսրությունում հալածանքները գնալով ծավալվում էին քրիստոնյաների նկատմամբ: Նույնքան էլ անհավանական է, որ հենց այդ նույն տարում թագավորը կարգադրեր ավերել Արտաշատում Անահիտ աստծո բագինները, որոնք գտնվում էին Երազամոյն կոչվող վայրում, Տիրի մեհյանը և այլն, քանի որ՝ դատելով պատմիչի հետագա և Պատմահոր հաղորդումներից, Տրդատը թեև ազատեց բանտից Գրիգոր Պարթևին ինչ-ինչ մեզ անհայտ պատճառներով, սակայն մկրտվեց միայն երկու տարի անց, իր գահակալության 17-րդ տարում[144], այլ խոսքով միայն քրիստոնյաների նկատմամբ Դրոկղետիանոսի ձեռնարկած հալածանքների դադարից հետո:

Ուշադրություն է գրավում մի ոչ պակաս կարևոր տեղեկություն ևս: Թագավորը՝ Այրարատում մեհյաններն ավերելուց հետո, Վաղարշապատ քաղաքից գնում է Դարանաղյաց գավառ՝ կործանելու համար Բարշամինա սպիտակափառ աստծու մեհյանը Թորդանում: Հեթանոս քրմերին Խաղտյաց կողմերը քշելուց հետո ոչնչացնում են Անիի Արամազդ աստծո բագինը, հետո Անահիտ աստվածուհու մեհյանը Երեզն ավանում, Նանեական մեհյանը՝ Գայլ գետի ափին գտնվող Թիլ ավանում, Մրհական մեհյանը Դերջան գավառի Բագայասիճ գյուղում և այլն: Թվում է, թե պիտի հակառակը լիներ, և հայոց թագավորը պետք է, որ՝ մայրաքաղաքից սկսելով, մեհյանները ավերելով գնար մինչև երկրի սահմանը, սակայն կատարվում է հակառակը և թագավորը սկսում է ավերել մեհյանները աշխարհագրական հակառակ

հերթականությամբ և այն էլ իբր Գրիգոր Լուսավորչի հետ մեկտեղ: Կարծում ենք, որ այս իրողությունը անկասկած բացատրության կարիք ունի:

Այսպես՝ Ագաթանգեղոսի այն հաղորդումը, որ Գրիգոր Լուսավորիչը հայոց 16 մեծամեծ իշխանների հետ ուղարկվեց Կեսարիա քաղաքը ձեռնադրվելու, չի հստակեցնում, թե ե՞րբ է տեղի ունեցել այդ, սակայն առավել քան հստակ է Պատմահոր տեղեկությունը, որից օգտվել են հետագա շատ պատմիչներ:[145] Ինչպես արդեն ցույց ենք տվել, Մովսես Խորենացին այդ իրադարձությունը դնում է Տրդատի թագավորության 17-րդ դարում, այլ խոսքով՝ ըստ մեր քննության, 305 թվին՝ դիոկղետիանոսյան հալածանքների վերացումից հետո, որը տեղի ունեցավ նշված թվականի մայիսին: Եթե խորանանք դեպքերի մեջ, ապա կտեսնենք, որ հակառակ Ագաթանգեղոսի այն հաղորդման, թե Գրիգոր Պարթևը Խոր Վիրապից հանվեց բանտարկության 15-րդ տարում և Հռիփսիմյանց կույսերի գերեզմաններին երեք վկայարաններ կառուցելուց և հարգանքի տուրքը մատուցելուց հետո Տրդատը սկսեց Այրարատում ոչնչացնել հեթանոսական մեհյանները Գրիգորի հետ միասին, մեղմ ասած հեռու է ճշմարտությունից:[146] Թագավորը երախտապարտ եղավ Գրիգոր Պարթևին, սակայն միայն այդքանը: Եթե անգամ նա որոշել էր քրիստոնեությունը պետական կրոն հռչակել, ապա խոհեմորեն սպասեց ավելի հարմար ժամանակի, քանի որ նման ձեռնարկը կարող էր հանգեցնել պատերազմի Մեծ Հայքի թագավորության և հզոր Հռոմի միջև, որն այդ ժամանակ՝ հանձինս Դիոկղետիանոս կայսեր, Հռոմի ամբողջ տարածքում չլսված ու չտեսնված հալածանքներ էր իրականացնում քրիստոնյաների նկատմամբ, որոնց թվում էին, որքան էլ զարմանալի լինի, կայսեր կինը և դուստրը:

Հետևաբար, միայն 305 թվականի մայիսից հետո պետք է դնել Տրդատի և Գրիգոր Պարթևի կողմից մեհյանների ավերումը Այրարատում: Ելնելով այս հարցադրումից միանգամայն այլ բացատրություն կարող է ստանալ մեհյաններ իավերումը Մեծ Հայքի թագավորության արևմտյան սահմանագլխից սկսած դեպի արևելք ընկած շրջանում: Ճիշտ է Տրդատը Կեսարիա չգնաց, սակայն պետք է ենթադրել, որ նա Գրիգոր Պարթևին ուղեկցեց մինչև հայ-հռոմեական սահմանը: Եվ երբ հայ մեծամեծերի պատվիրակությունը Գրիգոր Պարթևի հետ մեկնեց Կեսարիա, թագավորը վերադարձավ Վաղարշապատ՝ ճանապարհին ոչնչացնելով Դարանաղի գավառից սկսած բոլոր մեհյանները: Միայն այսպիսի, քիչ թե շատ բանական բացատրություն կարող է ստանալ այդ անհիմաստ աշխարհագրական հերթականությունը: Ավելին, այս բացատրության լույսով կարելի է տեսնել, որ Գրիգոր Լուսավորիչը Կեսարիա մեկնեց Դարանաղիի վրայով, սակայն վերադարձավ Սեբաստիայի ճանապարհով և երկիր մուտք գործեց ոչ թե Դարանաղիի, այլ Գայլ

գետի (Ներկայումս Քելքիթ – Հ. Բ.) ավազանից Եկեղյաց գավառի վրայով:[147] Նման մեկնաբանության դեպքում հասկանալի է դառնում Ագաթանգեղոսի մեկ այլ հաղորդումն այն մասին, թե Գրիգոր Պարթևը՝ երկիր վերադառնալիս, իմանում է, որ դեռ գոյություն ունի Աշտիշատի նշանավոր ութերորդ մեհյանը, ուստի՝ փոխանակ վերադառնալու Վաղարշապատ, ինչը կարծես միանգամայն տրամաբանական կլիներ, երթուղին փոխելով՝ շարժվում է Տարոն և Աշտիշատի մեհյանը ավերելուց հետո միայն գնում է թագավորին ընդառաջ և հանդիպում Բագարանում:

Հետաքրքրական են Ագաթանգեղոսի տվյալները մկրտվողների թվի վերաբերյալ: Եթե Տարոնում Գրիգոր Լուսավորիչը կանգ առավ 20 օր և մկրտեց 19 բյուր մարդ, որոնց մի մասը իրեն Կեսարիա ուղեկցած մեծամեծ նախարարներն էին, ապա Բագավանում թագավորին հանդիպելուց հետո նա Եփրատի (իմա՛ Արածանիի- Հ. Բ.) ջրերում մկրտում է թագավորին, Աշխեն թագուհուն, Խոսրովիդուխտ քրոջը, երկրի մեծամեծերին ու բոլոր ազատներին և աշխարհաբանակ զորքը՝ ընդամենը 15 բյուրից ավելի մարդ: Անշուշտ չպետք է կարծել, որ Ագաթանգեղոսի հաջորդ հաղորդումը, թե նա այնուհետև հետագա յոթ օրերի ընթացքում մկրտեց «յարքունական բանակէ անտի՝ ընդ այր և ընդ կին և ընդ մանուկ աւելի քան զչորեքարիւր բյուր»,[148] կրկին վերաբերում է Բագավանյան մկրտությանը: Կատարյալ միամտություն է կարծել, թե երկրի ամբողջ բնակչությունը, իսկ այդ տվյալների համաձայն երկրի բնակչությունը կազմել է ավելի քան 4 միլիոն 340 հազար մարդ, հավաքել են Բագավան և մկրտել Եփրատի ջրերում: Մնացածներին անշուշտ մկրտեցին իրենց բնակավայրերում և ժողովուրդը բռնի կամ խաղաղ միջոցներով քրիստոնեացվեց, չնայած նրանցից շատերի համար նոր վարդապետությունը մնում էր անհայտ գաղափարախոսություն, քանի որ չնչին բացառությամբ, եթե հոգևորականը հայ էր և հունարենի կամ ասորորենի գիտակ, ու կարող էր Աստվածաշունչը բանավոր թարգմանել, քարոզը տարվում էր նրան անծանոթ հունարեն և ասորերեն լեզուներով:

Գրիգոր Լուսավորչի և Տրդատ թագավորի ջանքերով քրիստոնեությունը լայնորեն տարածվեց Հայաստանում, չնայած շատերը շարունակում էին գաղտնի երկրպագել հեթանոսական աստվածներին, սակայն Ագաթանգեղոսի մեզ հասած երկի այն տեղեկությունը, թե քրիստոնեությունը տարածվեց ոչ միայն ողջ Հայոց աշխարհում, Սատաղացվոց քաղաքից մինչև Խաղտյաց աշխարհը և Կաղարջքի սահմանները մինչև Կասպից աշխարհի սահմաններն ու Փայտակարան արքունի քաղաքը, Ամդացվոց քաղաքից մինչև Մծբին քաղաքը՝ քերելով Ասորվոց սահմանները Նոր Շիրական երկրի և Կորդուքի շրջանում, Մարաց Ամուր աշխարհում, մինչև Մահքր-տուն և Ատրպատական, այլև մինչև Մասքթաց սահմանների ավարտը, մինչև Ալանաց դռները:[149] Ամեն ինչից դատելով՝ քրիստոնեությունը հաստատվեց

Վիրքում, Աղվանքում, որ այդ ժամանակ նույնանում է Մասքթաց թագավորությանը, Հայաստանի համեմատությամբ անհամեմատ ուշ, հետևաբար այս հատվածը սրբագրվել է V դարի հայ խմբագիրների կողնից, որոնք արդեն արձանագրում էին իրենց ժամանակների կացությունը: Համենայն դեպս Փավստոս Բուզանդի և Պատմահոր տեղեկությունները Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսի այդ կողմերում կատարած անհաջող քարոզչության մասին այդ են ապացուցում:

Հունական Ագաթանգեղոսը, որ ստեղծվեց հայ քաղկեդոնիկների կողմից և որոշակի խնդիրներ էր հետապնդում, հարցն այնպես է մատուցում, որ հայ մեծամեծերի հետ Գրիգոր Լուսավորչին Կեսարիա ուղեկցեցին նաև Լազերի, Վրաց և Աղվանից թագավորները:[150] Սրա կեղծիք լինելը ոչ մի տարակույս չի ծնում: Նախ Տրդատը, եթե կամենար էլ չէր կարող հրավիրել Լազերի թագավորին, որ կայսեր հպատակն էր և չէր կամենա իր վրա հրավիրել վերջինիս զայրույթը: Սակայն դա խնդրի միայն մի կողմն է, քանի որ հետագա նկարագրությունից պարզվում է, որ այնուամենայնիվ, Գրիգոր Լուսավորչին ուղեկցեցին այն 16 հայ մեծամեծ իշխանները,[151] որոնք հիշատակվում են հայկական Ագաթանգեղոսում:[152] Կասկած չկա, որ սկզբնական բնագրում, որին հարազատ է մնացել հայկական Ագաթանգեղոսը, հիշատակություն չի եղել ո՛չ Վրաց և ո՛չ էլ Աղվանից թագավորների մասին և նրանց անունները հայտնվել են հունարեն թարգմանության մեջ քաղաքական և եկեղեցական նկատառումներով:

Այժմ, եթե այս ամենը քննության ենք առնում նոր տվյալների լույսով, ապա շարունակելն այլևս իմաստ չունի, քանի որ Հայոց դարձի ստույգ թվականը, որ 305 թվականի մայիսից հետո ընկած շրջանն է, կասկածներ չի հարուցում: Ի միջի այլոց, այս թվականը հաստատող տվյալ է պահպանել նաև “Narratio de rebus Armeniae” հունարեն թարգմանությամբ մեզ հասած երկը, որը հայ-քաղկեդոնական մի սկզբնաղբյուր է: Այն հունարենից հայերեն է թարգմանել ակադ. Հ. Բարթիկյանը, քանի որ “Narratio”–ի, «Ամենաաստվածասեր և սուրբ Կոստանդինի ժամանակ տեղի ունեցավ Նիկիայի ժողովը ուղղված Արիոսի դեմ, Տրդատի ԼԴ (34 տարին) և սուրբ Գրիգորի Խոր Վիրապից դուրս գալու 20-րդ տարին, սուրբ Արիստակեսի եպիսկոպոսության օրերին, նրա հոր կենդանության ժամանակ: Այդ ժողովին մասնակցեց նա (Արիստակեսը)»:[153] Նիկիայի ժողովը տեղի է ունեցել 325 թվին, հետևաբար “Narratio”-ն հայոց դարձը դնում է 305 թվին: Անշուշտ կարող է հարց ծագել, թե ինչո՞ւ է “Narratio”-ն Հայոց դարձը դնում Գրիգոր Լուսավորչի Խոր վիրապից դուրս գալու տարում, երբ ամեն ինչից դատելով այն տեղի ունեցավ երկու տարի անց: Կարծում ենք պատճառը Ագաթանգեղոսի երկի Հայոց դարձի մասին տարտամ շարադրանքն է, քանի որ այնտեղից պարզվում է, որ կարծես դարձը տեղի

ունեցավ Գրիգոր Լուսավորչի Խոր վիրապից դուրս գալուց անմիջապես հետո: “Narratio”-ի հեղինակը հստակ իմացել է քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու թվականի մասին և այդ պատճառով էլ Հայոց դարձը դրել է Նիկիայի ժողովից 20 տարի առաջ: Ավելի դժվար է բացատրել Նիկիայի ժողովը Տրդատ Մեծի թագավորության 34-րդ տարով թվագրելը: Այն չի համապատասխանում ո՛չ նրա առաջին թագադրության, ո՛չ երկրորդ և ո՛չ էլ երրորդ թագադրության թվականին: Մեր կարծիքով՝ թողնելով հարցի ամբողջական քննությունը ապագային, այստեղ խնդիրը վերաբերում է Տրդատ Մեծի կողմից Ներսեհ թագավորի հեռանալուց հետո, ամբողջ երկրում թագավորելու թվականին, որը 293 թիվն է: Անտարակույս է, որ “Narratio”-ն ունեցել է հայերեն բնագիր և Տրդատի թագավորության 34-րդ տարվա համընկնումը Նիկիայի ժողովին ծագում է նրանից: Սակայն այդ դեպքում էլ Տրդատի գահակալության սկզբի թվականը՝ ըստ “Narratio”-ի, ընկնում է 291 կամ 292 թվականին, որը, բնականաբար ճիշտ տարեթիվ չէ: Սակայն չմոռանանք, որ հայերենում «Գ» և «Դ» տառերի հաճախ հանդիպող շփոթի հետևանքով հունարենը կարող էր բնագրական իրոք 33 տարին վերածել 34-ի: Իսկ այդ դեպքում Տրդատի գահակալության սկիզբն ընկնում է 292/293 թվին: Հասկանալի է, որ 292-ը բացառվում է, հետևաբար “Narratio”-ի հեղինակը Տրդատի գահակալության սկիզբը հաշվում է 293 թվականից, երբ Ներսեհն ուղևորվեց Պարսկաստան՝ ժառանգելու սասանյան գահը և իր թիկունքը ամրապնդելու համար Տրդատ Մեծին հանձնեց իր տիրույթները Մեծ Հայքի արևելյան շրջաններում՝ իրեն պահելով Անդրտիգրիսյան 5 երկրամասերը, որոնք նա կորցրեց Մծբինի 298 թվականի պայմանագրով:

Այստեղ միանգամայն նպատակահարմար ենք համարում կրկին անդրադառնալ Ռ.Մանասերյանի տեսակետին: Աղբյուրների հիման վրա չկարողանալով բացահայտել քրիստոնեության պետական կրոն հռչակման որոշակի թվականը, նա եզրակացնում է, որ 260–298թթ. բացառվում է Մեծ Հայքի թագավորության քրիստոնեացումը: Շարունակելով իր միտքը զարգացնել, հեղինակը հակված է կարծելու, որ դա հնարավոր չէր 298 թվից անմիջապես հետո, երբ դեռ խախուտ էին Տրդատի դիրքերը Հայաստանում և առավել ևս, դրանից առաջ, օրինակ 287թ., եթե ենթադրենք, որ այդ ժամանակ Տրդատն ինչ որ իշխանություն պահպանեց Հայաստանի հյուսիս-արևմուտքում: Սակայն, հեղինակի կարծիքով, դա կհակասի Ագաթանգեղոսին, որի վավերական հաղորդումներում քրիստոնեությանն ուղղված առաջին միջոցառումներն ընդգրկեցին Վաղարշապատն ու Արտաշատը:[154] Հեղինակն ընդհանուր առմամբ ճիշտ է մեկնաբանում, սակայն միանգամայն անհիմն կարծում է, անշուշտ, հետևելով Ս.Երեմյանին, որ 287թվականից սկսած նա ինչ-ինչ իշխանություն է պահպանել միայն Հայաստանի հյուսիս-արևմտյան մասում: Վերը

մենք ցույց տվեցինք, որ արդեն 288 թվին Տրդատը հաստատվել էր Այրարատում և նրա շրջակայքում՝ թողնելով Ներսեհի իշխանության ներքո միայն Մեծ Հայքի արևելյան մի քանի աշխարհներ, հավանաբար, Ուտիքը, Արցախը, Կասպքը, Մարդպետավանը և թերևս նաև Պարսկահայքը:[155] Հետևաբար 288 թվից հետո Վաղարշապատն ու Արտաշատը կարող էին հանգիստ հիշատակվել՝ կապված Տրդատ Մեծի գործունեության հետ: Ռ. Մանասերյանի կարծիքով ջերմեռանդ հեթանոս և մոլի հակաքրիստոնյա Գալերիոսը 296-298 թթ. պատերազմում պաշտպանելով Տրդատի գահակալական իրավունքները, պետք է և վստահ է եղել իր հայ դաշնակցի հավատարմությանը Հռոմի կայսրին, հետևաբար բացառվում է նրա կողմից մինչև 298 թվականը քրիստոնեությունը պետական կրոն հռչակելը, ինչպես կատարում են Ս. Մալխասյանը (279թ.) կամ Ն. Ադոնցը:[156] Ասենք, որ նման ենթադրություններին անդրադառնալն անգամ անիմաստ է, քանի որ թեկուզ այն փաստը, որ Աթանագինեսը նահատակվեց 303 թ.-ի հուլիսի 17-ին,[157] իսկ Գրիգոր Լուսավորիչը նրա մասունքները բերեց Հայաստան, բացառում են դրանք:[158] Հեղինակն անդրադառնում է նաև Մովսես Խորենացու ժամանակագրական երկու ցուցումներին, որոնց համաձայն Տրդատը թագավորեց Դիոկղետիանոսի (284- 305) գահակալության երրորդ տարում, ըստ հեղինակի՝ 287 թվին, իսկ Գրիգոր Լուսավորիչը ձեռնադրվեց Տրդատի իշխանության 17-րդ տարում (մեկ այլ տարբերակում՝ 18-րդ տարում): Հարկ է նշել՝ հակառակ մեր վերը բերված փաստարկների, հեղինակն այդ թվերն ընդունում է քննադատաբար, քանի դեռ դրանց իսկությունը չի հաստատվել կոնկրետ փաստերի հետ համադրման միջոցով:[159] Մեր նախորդ ողջ քննությունը ցույց տվեց, որ Հայոց դարձը հնարավոր չէր Միլանի էդիկտի ընդունումից հետո, ուստի հեղինակը միանգամայն իրավացիորեն մերժում է Հ. Մանանդյանի և նրան հետևողների տեսակետը՝ 298 թվին դնելով Տրդատի գահակալությունը և դրան գումարելով 17 տարիներ ստանալու որպես դարձի թվական՝ 315-ը: Երիցս նա ճիշտ է, գտնելով, որ նման եզրակացության կարելի է գալ միայն Եվսեբիոս Կեսարացու պատմության մեջ հիշատակված Մաքսիմինոս Դայա կայսեր՝ քրիստոնեություն ընդունած հայերի դեմ ձեռնարկած արշավանքի անտեսման դեպքում:[160]

Հենվելով Պայկուլիի արձանագրության վկայությունների վրա՝ կապված 293թ. Հայաստանում Նարսեսի (իմա՛ Ներսեհ - Բ.Հ.) տիրակալման հետ, հեղինակը գտնում է, որ ըստ երևույթին, դրանք անհիմն են դարձնում Մովսես Խորենացու նշած 287 թվականը որպես Տրդատի գահակալման տարի:[161] Հեղինակի կարծիքով, Հայաստանի որևէ մասում Տրդատի իշխելու մասին տեսակետը պատկանում է չապացուցված վարկածների բնագավառին: Հետևաբար, եզրակացնում է նա, կարելի

է համաձայնել Մովսես Խորենացու այն հաղորդման հետ, որ Տրդատը թագավորեց 287թվին, եթե դրա տակ հասկանանք ոչ թե Հայաստանի վրա իշխանության իրագործում, այլ այդ տարում տեղի ունեցած թագադրությունը՝ նրան հայոց թագավորի տիտղոսի շնորհումը:[162] Որ Տրդատը կարող էր մի քանի անգամ թագադրվել, եղած փաստերի առկայության դեպքում ոչ մի կասկած չի հարուցում: Սակայն, ինչպես վերը ցույց տրվեց, իհարկե ոչ թե 287, այլ 288 թվից Տրդատ Մեծը իշխեց երկրի մեծ մասում, ուստի ոչ մի կերպ չի կարելի խոսել նրա ձևական իշխանության մասին: Հատկապես, եթե ի նկատի ունենանք, որ Մովսես Խորենացին օտարերկրյա տիրապետությունը կամ անտերունչ շրջանը համարում է 27 տարի, իսկ մեր հաշվարկներով այն համապատասխանում է 261 – 288 թվերի միջոցին, ապա 288 թվականից Տրդատ Մեծի՝ Մեծ Հայքի մեծագույն մասում թագավորելը ոչ մի կասկած չի կարող հարուցել: Դիոկղետիանոսը 288 թվին ոչ թե սոսկ վերահաստատեց Տրդատի դեռևս 274 թվին ստացած թագավորական տիտղոսը, այլև կարողացավ նրան վերահաստատել հայոց գահին, թեկուզ Մեծ Հայքի թագավորության ոչ ամբողջ տարածքում:

Ագաթանգեղոսի հաղորդումն այն մասին, որ Հռիփսիմեն և Հռիփսիմյանք Հայաստան են փախչում՝ փրկվելով Դիոկղետիանոսի սիրային հավակնությունից, հեղինակը համարում է՝ հենվելով Ժան-Պիեռ Մահեի ուսումնասիրության վրա,[163] իբրև Դիոկղետիանոսի հալածական քաղաքականության արտացոլում:[164] Անշուշտ դրանում Դիոկղետիանոսի հալածանքների քաղաքականության արտացոլումը պետք է տեսնել, որովհետև, ինչպես վերը ցույց տրվեց, Հռիփսիմյանց նկատմամբ հալածանքներ սկսվեցին ոչ թե գալու տարում՝ այսինքն 301թվին, այլ միայն 303 թվին և այն էլ փետրվարի 23-ից հետո նրանք ենթարկվեցին հալածանքների Տրդատի կողմից, անտարակույս Դիոկղետիանոսի ճնշման ներքո:

287թվին գումարելով 17 տարիներ հեղինակն ստանում է 304 թիվը, այսինքն՝ ստացված տարեթիվն ըստ նրա ընկնում է 303-ից 305թթ. Հռոմեական կայսրությունում քրիստոնյաների դեմ ծավալված զանգվածային հալածանքների ժամանակահատվածի ուղիղ մեջտեղը:[165] Սխալ հաշվարկները նրան բերում են այն մտքին, որ կայսրությունում քրիստոնյաների դեմ հալածանքների ավելի քան երկամյա շրջանում Տրդատի հնարավոր հակաքրիստոնյա միջոցառումները պետք է վկայեին իր հովանավորներ Դիոկղետիանոսից և Գալերիոսից այդ ժամանակ նրա կախվածության զգալի աստիճանի մասին և միաժամանակ ցույց տային՝ անուղղակիորեն, սասանյանամետ ավագանու ընդդիմության ուժը:[166] Ասենք, որ սկզբնաղբյուրների սխալ ընկալումը ծնել է սխալ եզրակացություն: 288 թվից երկրորդ անգամ թագավորած Տրդատի 17-րդ տարին ոչ թե 304 թվականն է, այլ 305-

ը: Հետևաբար, հալածանքների ողջ շրջանում Տրդատն ամբողջությամբ պաշտպանել էր Դիոկղետիանոսի քաղաքականությունը և առանձնապես տեղի չէր տվել սասանյանամետ ավագանուն, որը Մծբինի 298 թվականի 40-ամյա հաշտությունից հետո ըստ ամենայնի ընկճված էր: Արդեն այն հանգամանքը, որ 303 թվին՝ բանտից ազատելով Գրիգոր Պարթևին, Տրդատն անգամ մտքով չանցկացրեց քրիստոնեությունը պետական կրոն հռչակել, և դրան ձեռնամուխ եղավ միայն 305 թվականին, երբ մայիսից սկսած հալածանքները դադարեցին, ցույց է տալիս, որ հայոց թագավորը բոլորովին միտք չուներ ընդհարվել Դիոկղետիանոսի և կայսրության հետ: Հետևաբար, չի կարելի համաձայնել հեղինակի հետ այն հարցում, թե անկարելի է լիովին բացառել Տրդատի կողմից հակահռոմեական, հակակայսերական քայլի դիմելու հնարավորությունը հենց 304–305թթ. ժամանակահատվածում:[167] Կայսեր ճնշման ներքո քրիստոնյաների նկատմամբ հալածանքներ կիրառվեցին և այն էլ ոչ թե երկրի քրիստոնյաների, այլ Հռիփսիմյանց կույսերի և նրանց ընկերակցողների նկատմամբ, որի նպատակն առավելապես կայսերը սեփական հավատարմությունը ցույց տալն էր: Սակայն այն իրողությունը, որ հալածանքների զոհ գնացին ընդամենը 37 մարդ, ցույց է տալիս, որ այն չէր բարձրացված պետական քաղաքականության աստիճանի և ուներ ցուցադրական ու անցողիկ բնույթ:

Ռ. Մանասերյանի կարծիքով, 304 թվականը՝ տեղ թողնելով հարցերի և լրացուցիչ փաստարկումների համար, կարող է գիտության մեջ գոյություն ունենալ որպես դարձի ոչ բացառվող տարեթվերից մեկը:[168] Դրա հետ համաձայնվել չենք կարող, քանի որ նախորդ ամբողջ քննությունը ցույց տվեց, որ քրիստոնեությունը հռչակվել է Մեծ Հայքում պետական կրոն միայն ու միայն Դիոկղետիանոսի կողմից իշխանությունից հրաժարվելուց հետո: Մենք հաճախ մոռանում ենք մարդկային գործոնը պատմության մեջ: Անտարակույս է, որ քաղաքականության հարցում տասից առնվազն յոթը բարոյական ոչ մի նորմ չեն պահպանի, սակայն մնացած երեքի մոտ բացառել երախտագիտության զգացման առկայությունը ոչ մի կերպ չի կարելի: Տրդատը գահակալել էր Մեծ Հայքի մեծագույն մասում 288 թվից և ամբողջ երկրում 298 թվից կամ մի փոքր ուշ Դիոկղետիանոս կայսեր օժանդակությամբ, հետևաբար քանի դեռ կայսերական իշխանության գլուխ կանգնած էր Դիոկղետիանոսը, նա երբեք հանդես չէր գա նրա դեմ:[169] Ավելին, եթե Դիոկղետիանոսը չհրաժարվեր իշխանությունից, ապա քրիստոնեության պետական կրոն հռչակումն, անտարակույս, կհետաձգվեր անորոշ ժամանակով: Սակայն Դիոկղետիանոսը հրաժարվեց իշխանությունից, իսկ հայոց թագավորն էլ ազատվեց դրա շնորհիվ իր բարոյական կապանքներից:

Դիոկղետիանոս կայսեր իշխանությունից հրաժարվելուց հետո, երբ նրա ստեղծած կառույցն առաջին ճեղքերը տվեց, երբ իրենց իշխանությունը ամրապնդելու հոգսով կառավարչակիցներ՝ օգոստոսներ Գալերիոսը և Կոնստանդիանոսը մի պահ մոռացել էին քրիստոնյաների հալածանքների մասին, Տրդատն իրագործեց իր հեռուն գնացող ծրագիրը և քրիստոնեությունը հռչակեց պետական կրոն: Եվ ամեն ինչից դատելով 305 թվի ամռանը Գրիգոր Պարթևին ուղարկեց 16 մեծամեծ իշխանների հետ Կեսարիա ձեռնադրվելու համար: 305 թվականը, որ իրոք Տրդատի երկրորդ գահակալության 17-րդ տարին էր, բոլոր տեսակետներից ամենահարմար պահն էր հայոց թագավորի դարակազմիկ ձեռնարկման համար, որովհետև կայսրությունը փաստորեն երկփեղկված էր և օգոստոսներից յուրաքանչյուրը զբաղված էր իր իշխանության ամրապնդմամբ, ուստի ոչ ժամանակ, և ոչ էլ հնարավորություն ունեին պատժելու հայոց թագավորին և անգամ խոչընդոտեին նրա ուղարկած պատվիրակության ու Գրիգոր Պարթևի մուտքը կայսրություն և ձեռնադրությունը Կեսարիայում: Դրանից հետո ամեն ինչ խառնվեց: 306թ.՝ հակառակ ընդունված կարգի, Գալլիայում տեղակայված հռոմեական զորքերը, որոնց մեջ պատկառելի թիվ էին կազմում գերմանները, մահացած Կոստանդիոսի փոխարեն գահ բարձրացրին և օգոստոս հռչակեցին նրա որդի Կոստանդիանոսին՝ ապագա «քրիստոնյա կայսրին»: Գալերիոսը, որ իշխում էր Իտալիային, 306 թվի վերջերին կորցրեց կայսրության կենտրոնը: Գահակալական կռիվների շրջանում՝ 311 թվի ապրիլի 30-ին՝ իր մահից 5 օր առաջ, Գալերիոսը հատուկ հրովարտակով ազդարարեց քրիստոնյաների նկատմամբ հալածանքների դադարեցումը, սակայն Մաքսիմինոս Դայա կայսրը, որ հաստատվել էր փոքրասիական պրովինցիաներում, նույն թվականի հոկտեմբերից ամբողջ թափով վերսկսեց հալածանքները քրիստոնյաների նկատմամբ: Դրա վառ արտահայտություններից մեկը կայսեր 311 թվին Հայաստան կատարած արշավանքն էր քրիստոնեություն ընդունած հայերին պատժելու համար, սակայն արշավանքն ավարտվեց պարտությամբ: Հալածանքները դադարեցին 313 թվականի Միլանի էդիկտով, երբ Կոստանդիանոսը և Լիկինիոսը քրիստոնեությունը ճանաչեցին հավասարազոր կրոն: Նրանք համոզեցին Մաքսիմինոս Դայային, որ նա ևս պաշտպանի Միլանի էդիկտը, սակայն վերջինս այնպիսի հալածանքներ էր կիրառել քրիստոնյաների նկատմամբ, որ վերջիններս՝ վախեցած նրա նախկին խորամանկություններից, բոլորովին չէին շտապում իրենց բացահայտել:

Դիոկղետիանոսյան համակարգը, որ հիմնված էր ինքնահրաժարականի վրա, փաստորեն դադարեց գործելուց: Կոնստանդինը և Լիկինիոսը փորձեցին ազատվել նրանից՝ հրավիրելով Դիոկղետիանոսին Կոնստանտիայի հարսանիքին Միլան,

որտեղ նրան պատրաստվում էին կա՛մ սպանել կա՛մ ձերբակալել: Շատ լավ հասկանալով դրա շարժառիթները Դիոկղետիանոսը Միլան չգնաց՝ պատճառաբանելով այդ իր 68-ամյա հասակով: Այդ ժամանակ նրան սպառնալիքներով և մեղադրանքներով լի մի նամակ ուղարկեցին, թե նա պաշտպանում է Մաքսիմինոս Դայային, ինչպես իր ժամանակին՝ Մաքսենտիոսին: Դիոկղետիանոսը, որ հավանաբար կյանքից հոգնել էր և վախենում էր վաղ թե ուշ ընկնել Մաքսիմինոս Դայայի ձեռքը կամ էլ խեղդամահ լինել ինչ-որ մեկի կողմից, բոլորովին մտադիր չէր դրանով իր հակառակորդներին հաճույք պատճառել, ուստի 313 թվին ինքնասպանություն գործեց՝ իրեն սովամահ անելով կամ թույն ընդունելով: Քաղաքացիական պատերազմների հաջորդ զոհը դարձավ Մաքսիմինոս Դայան: 313 թվին նա գրավեց Լիկինիոսին պատկանող Բիզանտիումը (Բյուզանդիոնը) և Հերակլեան, սակայն ծանր պարտություն կրեց Հերակլեայի և Ադրիանուպոլսի միջև, իսկ նրա զորքի մի մասն անցավ հակառակորդի կողմը: Փախչելով արևելք նա նոր բանակ հավաքեց՝ փորձելով հակառակորդին կասեցնել Կիլիկյան Տավրոսի լեռնանցքներում, սակայն հանկարծամահ եղավ Կիլիկիայի Տարսոն քաղաքում:

Թե՛ Լիկինիոսը և թե՛ Մաքսիմինոս Դայան օրինական գահակալներ էին, ուստի Կոստանդիանոսը, որ բռնավոր էր (ուզուրպատոր), հաճույքով հետևում էր նրանց իրար արյունաքամ անող պայքարին: Բոլորովին էլ այդ չգիտակցելով Լիկինիոսը հերթով ոչնչացրեց Գալերիոսի, Սևերոսի և Մաքսիմինոս Դայայի ընտանիքները, անգամ փոքր երեխաներին, ինչպես նաև Դիոկղետիանոսի այրուն ու դստերը, որոնք գլխատվեցին Թեսալոնիկեում՝ դրանով իսկ ճանապարհ հարթելով Կոստանդինի համար, որն ուրախությամբ հետևում էր, թե ինչպես են հրապարակից անհետանում կայսերական գահի գործնականում բոլոր օրինական հավակնորդները:

Քրիստոնեության պետական կրոն հռչակումը Հայաստանում 314 կամ 315 - ով թվագրողները գտնում են, որ, երբ Դիոկղետիանոսը կայսրությունից հրաժարվեց և Արևելքը հայտնվեց Գալերիոսի ու Մաքսիմիանոսի իշխանության ներքո, որոնք երկուսն էլ քրիստոնեության կատաղի հալածողներ էին, հալածանքները շարունակվեցին մինչև 311թիվը, երբ ընդհանուր ներում շնորհվեց: Սակայն Մաքսիմինոս Դայա կայսրը Արևելքում շարունակում էր իր հալածիչ քաղաքականությունը, ուստի Պ. Անանյանի կարծիքով 304-312թթ. հնարավոր չէ պատկերացնել Գրիգոր Լուսավորչի ուղևորությունը Կեսարիա այն հանդիսավորությամբ, ինչպես նկարագրված է Ագաթանգեղոսի հունական Վարքի մեջ:[170] Նախ նշենք, որ վերջինիս հիշատակած հանդիսավոր ուղևորությունը մասնակիցների բերված թվով հազիվ թե հնարավոր էր անգամ 315 թվին: Միաժամանակ արձանագրենք, որ այս արտաքուստ կուռ կառույցը մի շատ կարևոր

խոցելի կողմ ունի: Այսպես թե այնպես Հռոմի դաշնակից հայերը քրոստոնեություն ընդունելու համար 311-ին հարձակման են ենթարկվել Մաքսիմինոս Դայա կայսեր զորքերի կողմից, որոնք չարաչար պարտություն են կրել:

Հ. Պ. Անանյանի կարծիքով Ս. Գրիգորի հունարեն նորագյուտ Վարքի մեջ կա մի կարևոր հիշատակություն, որն իբր կարող է վճռական դեր կատարել Գրիգոր Լուսավորչի ձեռնադրության թվականը հստակեցնելու հարցում: Հունական Ագաթանգեղոսում ասվում է, որ քսան եպիսկոպոսների ժողով է գումարվել Ս. Գրիգորի ձեռնադրության առիթով: «Արքեպիսկոպոս Ղևոնդիոսը ոմանց ուղարկեց մինչև Բյութանիայի Քաղկեդոն (քաղաքը) իրեն ենթակա եպիսկոպոսներին և մետրոպոլիտներին հրավիրելու, երբ եպիսկոպոսներն ու մետրոպոլիտները հավաքվեցին՝ թվով քսան հոգի, նրանց տրվեց Տրդատ թագավորի նամակը»:[171] Հեղինակի կարծիքով նման հանդիսավորությանը եպիսկոպոսական ձեռնադրության համար զարմանալի չպետք է դիտվի, քանի որ մի ամբողջ թագավորություն իր ողջ ժողովրդով դառնում էր քրիստոնյա, իսկ Կեսարիայից Հայաստան ուղարկված առաքյալ Գրիգոր Պարթևը վերադառնում էր հարազատ քաղաքը հայոց 16 իշխանների և 30 հազար հեծյալների ուղեկցությամբ՝ բազմած արքայական կառքի մեջ: Եվ որ այդպիսի հանդիսավորությունը կվայելեր նույնքան հանդիսավոր եկեղեցական արարողություն:[172]

Շարունակելով իր տեսակետը զարգացնել, Հ. Պ. Անանյանը գտնում է, որ հիշյալ 20 եպիսկոպոսները չհավաքվեցին լոկ ձեռնադրության համար: Հետևաբար, եզրակացնում է նա, պետք է որ Կեսարիայում եկեղեցական ժողով տեղի ունեցած լինի: Որպես ասվածի կռվան նա բերում է հունարեն վարքի մեջ պահպանված հիշատակությունը, թե Ս. Գրիգորը Սյունհոդոսի թուղթը տարավ Սեբաստիայի Պետրոս եպիսկոպոսին: Հետևում է հարցադրումը. եղել է արդյո՞ք կամ հիշվում է պատմության մեջ Կեսարիայում կայացած եկեղեցական ժողով և ե՞րբ է այն տեղի ունեցել:[173] Կեսարիայում, անշուշտ, եկեղեցական ժողով գումարվել է[174] և նրա կանոններում ասվում է, որ «ժողովեալ ի Կեսարիա եպիսկոպոսք քսան»:[175] «Կանոնագիրք Հայոց»-ում պահպանված Նեոկեսարիայի ժողովի կանոններում[176] էլ ասված է, որ այն տեղի է ունեցել Անկյուրայի և Կեսարիայի ժողովներից հետո, սակայն մինչև Նիկիայի նշանավոր ժողովը. «Այս կանոնք յետոյ եդան քան որ յԱնկիւրայն կամ ի Կեսարիայն, բայց քան զՆիկիայն յառաջագոյն»[177]: Կեսարիայի ժողովի կանոնները պահպանվել են միայն հայերեն և ասորերեն թարգմանություններով, ինչն ուսումնասիրողներին ենթադրել է տվել, թե դրանք կեղծ են:[178] Սակայն, դեռևս 1938 թվականին բելգիացի պատմաբան Լբոնը հիմնավոր կերպով ցույց տվեց, որ Անկյուրիայի և Նեոկեսարիայի ժողովների միջև ընկած

շրջանում իրոք գումարվել է Կեսարիայի եկեղեցական ժողովը: Ուշադրություն է գրավում այն փաստը, որ Նիկիայի ժողովի կանոնական որոշումների հայերեն թարգմանության մեջ միայն պահպանվել է Կեսարիայի ժողովին մասնակցած եպիսկոպոսների անվանացանկը հետևյալ «Եւ որք ի Կեսարիայն ժողովեցան» վերտառությամբ. «Եւստաղիոս, Սակտոս, Ղուպոս, Վաղենտինոս, Ղևոնդիոս, Նարկիսոս, Պասիղեւս, Դակասիոս, Գրիգորիոս, Աղփքրոս, Գոգիանոս, Գերմանոս Հերակլիոս, Գերանտիոս, Ամփիովն, Ստեփանոս, Սաեդոս, Սաղամինէոս, Էրիթրիոս, Ղեւոնտիոս, այս են ամենայն ՅԺԸ»:[179] Ինչպես իրավացիորեն նշում է Հ. Պ. Անանյանը, անվանացանկը տրված է առանց եպիսկոպոսների աթոռանիստ քաղաքների հիշատակության, իսկ Լբոնը եզրակացրել է, որ հիշյալ անվանացանկը վերաբերում է Կեսարիայի ժողովին մասնակցած եպիսկոպոսներին, ըստ որում այն հանված է իր տեղից և զետեղված Նիկիայի ժողովին մասնակցած եպիսկոպոսների անվանացանկում՝ նպատակ ունենալով եպիսկոպոսների թիվը հասցնել 318-ի, քանի որ Նիկիայի ժողովի մասնակիցների պաշտոնական թիվը 318 էր: Սակայն անգամ Կեսարիայի ժողովի մասնակիցների անունները ավելացնելուց հետո անվանացանկում անուններն ընդամենը 223 են: Անկախ ամեն ինչից և ինչ պատճառներով, հայ թարգմանիչը Կեսարիայի ժողովի մասնակիցների ցուցակը տվել է վերջում՝ հիշատակելով, որ դրանք հավաքվել են Կեսարիայում, ըստ որում չորոշակիացնելով նրանց աթոռանիստները: Նախ նշենք, որ այս ցուցակի մեջբերելը Նիկիայի ժողովի որոշումները ստորագրածների ցանկում պարզապես անիմաստ է, քանի որ Կեսարիայի ժողովի մասնակիցներից երկուսը կրում են Ղևոնտիոս անունը, հետևաբար նրանցից մեկը Կեսարիայի Ղևոնտիոսն է, որն արդեն հիշատակված է Գամիրքի հատվածում. «Ղեւոնտիոս ի Կեսարէ»:[180] Թվում է, թե Կեսարիայի ժողովը գումարողը Կեսարիայի Ղևոնտիոսն է, սակայն նրա անունը ցուցակում ընդամենը հինգերորդն է կամ ամենավերջինը: Թե ո՞վ է եղել Կեսարիայի ժողովի մասնակիցներից առաջինը հիշատակված Եվստաղիոսը, հայտնի չէ, սակայն ամեն ինչից դատելով, նա եղել է ժողովի ղեկավարը, հետևաբար բոլորովին էլ համոզիչ չեն հնչում Հ. Պ. Անանյանի այն խոսքերը, թե «Այդ ժողովքին կանոնները և անոր մասնակցող եպիսկոպոսներու անունները պահուած են հայ կանոնագրքերու մէջ. իսկ հոն տեղի ունեցած՝ Ս. Գրիգորի ձեռնադրութեան պատմութիւնն ալ պահուած է յունարեն նորագիւտ Վարքին մեջ, որ նախնական հայերէն Ագաթանգեղոսի թարգմանութիւնն է. ուստի բոլորն ալ հայկական աղբիւրներու մէջ մնացած»[181]: Որ Լբոնը Ս. Գրիգորի հունարեն վարքի հրատարակությունից տասնմեկ տարի առաջ կարողացել էր ցույց տալ, թե Կեսարիայում իրոք ժողով է գումարվել, այն էլ Անկյուրիայի (314) և Նեոկեսարիայի (319) ժողովների միջև ընկած շրջանում, ոչ մի

կասկած գոնե այսօր չի հարուցում, քանի որ այդ տեղեկությունները ժողովի կանոնների հետ միասին պահպանել է «Կանոնագիրք Հայոց»-ը: Ավելին, հեղինակը եկել է այն եզրակացության, որ Կեսարիայի ժողովը տեղի է ունեցել 314-ի ամառը:[182] Ս. Գրիգորի նորագյուտ վարքի հրատարակիչ պրոֆ. Գարիտը ծանոթագրությունների մեջ ցույց է տալիս, որ վարքում հիշատակված Կեսարիայի ժողովի փաստը հաստատում է Լբոնի ենթադրությունը: Հիմնավորումն էլ հետևյալն է, որ երկու տեղում էլ ժողովի պարագաները նույնն են: Ս. Գրիգորի վարքը հիշում է քսան եպիսկոպոսների մասին և 20 եպիսկոպոս են Կեսարիայի ժողովի մասնակիցները: Համաձայն հունարեն նորագյուտ վարքի Սեբաստիայի Պետրոս եպիսկոպոսը մնում է Սեբաստիայում և չի մասնակցում Կեսարիայի ժողովին, որն ապացուցվում է Կեսարիայի ժողովի մասնակիցների ցուցակում Պետրոս եպիսկոպոսի անվան բացակայությամբ: Հետևում է նոր եզրակացությունը, որ Լբոնը Կեսարիայի ժողովը դնում է Անկյուրիայի ժողովից անմիջապես հետո, 314-ի ամառը, և որ իբր Ս. Գրիգորը Կեսարիա է գնում Կոստանդիանոս կայսեր կողմից 313 թվին Միլանի էդիկտով քրիստոնեությունը հավասարազոր կրոն ճանաչելուց հետո:[183] Եվ քանի որ Կեսարիայի ժողովը հաջորդել է Անկյուրիայի 314 թվականի ժողովին, Լբոնը տրամաբանական է գտնում Կեսարիայի ժողովի հրավիրումը նույն թվականի ամռանը:

Բելգիացի հետազոտողը չի բավարարվում այսքանով, ուստի անցնում է Կեսարիայի ժողովի մասնակիցների անվանացանկի քննությանը, քանի որ Կեսարիայի ժողովի մասնակիցների անվանացանկը եպիսկոպոսների աթոռանիստները չի պահպանել: Նա ցույց է տալիս, որ՝ համադրելով այդ անվանացանկը Անկյուրիայի ժողովի մասնակիցների ցուցակին, Վիտաղիոսը Անտիոքի եպիսկոպոսն է, Ղուպոսը՝ Տարսոնի, Նարկիսոսը՝ Ներոնիատի, Բասիլիոսը՝ Ամասիայի և Հերակլեսը՝ Զելայի: Սրան հետևում է հաջորդ հետևությունը, որ Անկյուրիայի ժողովի մասնակիցները վերադարձին՝ անցնելով Կեսարիայով, որով անցնում էր գլխավոր ճանապարհը հարավ և արևելք, կանգ են առնում այնտեղ մի քանի կանոններ հաստատելու համար, հետևաբար այդ կարող էր լինել նույն 314 թվականի ամռանը: Հ. Պ. Անանյանին նման ենթադրությունը միանգամայն համոզիչ է թվում՝ ելնելով մյուս մասնակիցների սեփական քննությունից: Նրա հետազոտությամբ պարզվում է, որ Անկյուրիայի ժողովի մասնակիցներից 11-ը եղել են Կեսարիայի ժողովում և դրանք եղել են կայսրության արևելյան ու հարավային պրովինցիաների եպիսկոպոսներ: Սրան մենք դեռ կանդրադառնանք, իսկ այժմ շարունակենք հետևել Հ. Պ. Անանյանի քննությանը: Վերջինիս կարծիքով ավելի հավանական է, որ Կեսարիայի ժողովը տեղի ունեցած լինի 314-ի աշնանը:[184] Այս կապակցությամբ նա

հենվում է Հեֆելեի կողմից Անկյուրիայի ժողովի տարեթիվը ճշտելու հետ կապված այն մտքին, որ նույն ժողովի վեցերորդ կանոնի համաձայն ժողովը գումարվել է առաքելական կանոնների համաձայն, իսկ ըստ դրանցից մեկի եպիսկոպոսները պետք է ամեն տարի Զատիկի չորրորդ կիրակի օրը և աշնանը ժողով գումարեին:[185] Հեֆելեն եզրակացնում է, որ Անկյուրիայի ժողովը գումարվել է քրիստոնյաների հալածանքներն անմիջապես դադարեցնելուց հետո, 314թ. Զատկի չորրորդ կիրակի օրը, հետևաբար՝ ըստ Հ. Պ. Անանյանի, Կեսարիայի ժողովն էլ եղել է 314 թ. աշնանը:[186] Անտարակույս շահեկան է հեղինակի քննությունը՝ կապված Կեսարիայի ժողովի մասնակիցների աթոռանիստների ճշտման հետ՝ համաձայն Անկյուրիայի և Նիկիայի ժողովների տվյալների: Ըստ հեղինակի համադրական տվյալների Կեսարիայի ժողովի մասնակիցներից Եվտաղիոսն Անտիոքի եպիսկոպոսն էր (313 - 319), Սակտոսը (գուցե՞ Մարկեղոս - Հ. Պ. Ա.)՝ Անկյուրիայի, Ղուպոսը՝ Տարսոնի, Ղևոնտիոսը՝ Կեսարիայի, Նարկիսոսը՝ Ներոնիատայի (Կիլիկիա), Պասիղևսը՝ Ամասիայի, Գրիգորիոսը՝ Բյուրիտոնի՞ (Փյունիկիա), Դավասիոսը՝ Տավոսի (Գաղատիա), Աղփքրոսը՝ (իմա՛ Աղփիոս Ապամեայից – Հ. Պ. Ա.) Կոյլեսիրիայից, Գոգիանոսը (իմա՛ Գորգոնիոս ի Կինոնէ - Հ. Պ. Ա.)՝ Գաղատիայից, Գերմանոսը՝ Նեապոլսի (Պաղեստին), Հերակլեոսը՝ Զեւայի, Գերանտիոսը՝ Լարոսի (Կոյլեսիրիայից), Ամփիովնը՝ Եպիփանիայի (Կիլիկիա), Ստեփանոսը՝ Բարոտանիայի (Իսավրիայից), Սաետոսը՝ Եդեսիայի (313 - 324), Սաղամինեոսը՝ Գերմանիկեի (Կոյլեսիրիա), Երիթրիոսը՝ Կողովնայի (Կապադովկիայից), Ղևոնտինոսը (գուցե՞ Ղոնկինոս – Հ. Պ. Ա.)՝ Նեոկեսարիայի (Պողեմոնական Պոնտոսից): Սրանցից ցուցակում 1, 2, 3, 5, 6, 7, 12, 13, 15, 18, 20 տեղերն զբաղեցնողները[187] մասնակցել են Անկյուրիայի ժողովին և նրա անվանացանկից էլ քաղված են եպիսկոպոսների աթոռանիստ քաղաքների անունները: Մնացածները՝ հիշյալների հետ միասին մասնակցել են Նիկիայի ժողովին, որի անվանացանկի համաձայն էլ ստացվել են աթոռանիստները: Անտիոքի Վիտալիոս եպիսկոպոսը մասնակցել է միայն Անկյուրիայի ժողովին, իսկ Սաետոսը, որ Կեսարիայի ժողովի մասնակիցների ցուցակում 17-րդն է, չի մասնակցել ոչ Անկյուրիայի և ոչ էլ Նիկիայի ժողովներին (երկրորդի ժամանակ նա արդեն մահացած էր – Հ. Բ.), սակայն Հ. Պ. Անանյանի կարծիքով Կեսարիայի ժողովին վերջինս մասնակցել է, քանի որ Հայաստանի դարձը և կաթողիկոսի կամ հայրապետի ձեռնադրությունը նրան, անշուշտ, հետաքրքրել է:[188] Հեղինակի հաջորդ եզրակացությունն այն է, որ Կեսարիայի ժողովին մասնակցել են գլխավորապես այն պրովինցիաների կամ գավառների եպիսկոպոսները, որոնք շրջապատում են Կապադովկիան. Գաղատիա, Դիոսպոնտոս, Պողեմոնական Պոնտոս, Կիլիկիա, Իսավրիա, Սիրիա և Միջագետք, ինչպես նաև հեռավոր

Պաղեստին:[189] Տողատակում արդեն նշեցինք, որ Հ. Պ. Անանյանին չի հաջողվել պարզել Վաղենտինոսի աթոռանիստը, այժմ ավելացնենք, որ չի կարողանում վստահելի բացատրություն գտնել Գրիգորիոս եպիսկոպոսի ժողովին մասնակցելու համար, քանի որ հեղինակը հակված է նրան նույնացնելու Բյուրիտոնի կամ Բեյրութի եպիսկոպոսի հետ: Քննարկելով եպիսկոպոսների հիշատակության կամ ստորագրության հերթականությունը, հեղինակը գրում է, որ այն պատշաճում է նրանց աթոռների պատվի կարգին, որտեղ Անտիոքն առաջինն է, Անկյուրիան՝ երկրորդը, Տարսոնը՝ երրորդը, չորրորդն անծանոթ է, իսկ Կեսարիան՝ հինգերորդը, քանի որ նախորդների համեմատ Կեսարիայի աթոռն ավելի նոր էր: [190]

Հեղինակի հետագա քննությունն առանձին նորություն չի պարունակում, քանի որ հարուստ է, գուցե և հետաքրքիր, բայց Ագաթանգեղոսի երկին հակասող ենթադրություններով: Հեղինակը Կեսարիայի ժողովի հանդիսավորությունը բացատրում է Հայաստանի դարձի և նրա եպիսկոպոսի ձեռնադրության կարևորությամբ: Որ իբր Հայոց դարձով ոչ միայն Կեսարիայի աթոռն էր հետաքրքրված, այլև արևելյան պրովինցիաների եպիսկոպոսները և որ Գրիգոր Լուսավորիչն՝ իմանալով այդ մասին, հենց այդ ժամանակ կամեցավ Կեսարիա գնալ ձեռնադրություն ստանալու համար: Հեղինակը հակված է կարծելու, որ Կեսարիայի ժողովը, որտեղ հավաքվել էր Արևելքի (հռոմեական-Հ.Բ.) եպիսկոպոսների մեծ մասը, իբր ցույց է տալիս, թե նրանք Կեսարիա էին հավաքվել ոչ միայն լոկ ձեռնադրության արարողությունը կատարելու համար, այլ իբր նաև իրավական սահմաններ որոշելու նպատակով:[191] Անկախ հեղինակի հետագա շարադրանքից, անմիջապես նշենք, որ Կեսարիայի ժողովի կանոնները նման հեռուն գնացող եզրակացության համար ոչ մի փաստ չեն պարունակում: Կեսարիայի ժողովի մասնակիցները կանոններ են սահմանել կանանց կատարած ինչ-ինչ անօրենությունների համար:[192] Հետևաբար այն իրողությունը, որ հայոց հայրապետները, ինչպես հավաստում է Փավստոս Բուզանդը, ձեռնադրվել են Կեսարիայի միտրոպոլիտների կողմից, հազիվ թե կարելի է կապել Կեսարիայի ժողովի ընդունած որոշումների հետ: Ինչպես հայտնի է, մինչև Գրիգոր Լուսավորիչը Հայաստանում եղել են եպիսկոպոսներ, որոնցից Մերուժանին հիշատակում են նաև հունա-հռոմեական աղբյուրները: Պատմությունը ոչինչ չի ասում այն մասին, թե Մեծ Հայքում մեկ եպիսկոպոս է եղել, թե երկիրն ունեցել է մի քանի եպիսկոպոսներ: Սակայն առավել հավանականն այն է, որ երկիրն ունեցել է ընդամենը մի եպիսկոպոս, իսկ այդ դեպքում նոր եպիսկոպոսի ձեռնադրությունը Հայաստանում պարզապես հնարավոր չէր, քանի որ եպիսկոպոսի ձեռնադրությունը կարող էր կատարվել՝ որպես կանոն երեք, իսկ որոշ դեպքերում երկու եպիսկոպոսի մասնակցությամբ: Դրանից ինքնըստինքյան բխում է, որ Մեծ Հայքի եպիսկոպոսը

կամա թե ակամա, պետք է ձեռնադրվեր այլ երկրում և պատմականորեն այնպես ստացվեց, որ այդ երկիրը դարձավ Կապադովկիան իր Կեսարիայի միտրոպոլիտով: Այսինքն սրբագործվել էր մի կարգ, անկախ այն հանգամանքից, թե այդ ինչքանով էր համապատասխանում Մեծ Հայքի թագավորության քաղաքական շահերին, երբ արդեն երկար ժամանակ հայոց եպիսկոպոսները ձեռնադրություն էին ստանում Կեսարիայի եպիսկոպոսների կամ միտրոպոլիտների կողմից: Հայտնի է, որ քրիստոնեական եկեղեցին պահպանողական ավանդույթների հիանալի կրող է, ուստի՝ հաշվի առնելով, որ Մեծ Հայքում, եթե անգամ մեկ եպիսկոպոս էլ կար, Գրիգոր Պարթևի ձեռնադրությունը հնարավոր չէր և ավանդույթի ուժով նա պետք է մյուսների պես գնար ձեռնադրվելու Կեսարիա:

Ճիշտ է արդյո՞ք Հ. Պ. Անանյանն իր եզրակացությունների մեջ: Խորապես հարգելով հայագիտության անխոնջ երախտավորին, այնուամենայնիվ, ստիպված ենք արձանագրելու, որ նրա, ըստ էության Հ. Մանանդյանից ժառանգած տեսությունը ընդունելի չէ մի շարք պատճառներով: Կասկածի ենթակա չէ, որ հայկական Ագաթանգեղոսը մեզ է հասել բավականին փոփոխություններով, հետևաբար դժվար է շատ լուրջ դատողություններ անել նրա սկզբնական, անշուշտ հունարենով գրված, բնագրի մասին: Սակայն հայկական և հունական Ագաթանգեղոսները ծագում են ոչ թե միևնույն բնագրից, ինչպես կարծում են որոշ ուսումնասիրողներ, այլ հունական Ագաթանգեղոսը սերում է մեզ հասած հայկական Ագաթանգեղոսից և հունարեն թարգմանության մեջ, ինչպես վերն արդեն մասնակիորեն ցույց տվեցինք, տեղ են գտել լուրջ խմբագրական փոփոխություններ, որոնք ավելի են աղավաղել բնագիրը, քան մեզ հասած հայկական Ագաթանգեղոսը: Նախ և առաջ, մեզ զարմացնում է այն հանգամանքը, որ հեղինակը հեշտությամբ մոռանում է այն իրողությունը, որ Ագաթանգեղոսը Գրիգոր Պարթևի բանտարկության գոնե 13-րդ տարին դնում է Դիոկղետիանոս կայսեր օրոք, բայց բավական է հայոց հայրապետի ձեռնադրությունը թվագրել 314-ով և այդ կառույցը խաղաթղթե տնակի պես փուլ է գալիս: Հարց է ծագում, իսկ ի՞նչն էր խանգարում Ագաթանգեղոսին, եթե իրականությունն այլ էր, Դիոկղետիանոս կայսեր փոխարեն հիշատակելու քրիստոնյաներին հալածող մեկ այլ կայսեր անունը: Անշուշտ, ոչինչ: Եվ վերջապես չմոռանանք, որ անգամ հունական Ագաթանգեղոսը՝ Գրիգոր Պարթևի ձերբակալության տարիների խնդրում, ինչպես նաև Հռիփսիմյանց կույսերի նահատակության հետ կապված Դիոկղետիանոսի հարցում, ոչնչով չի հակասում հայկական Ագաթանգեղոսին: Հունական նորագյուտ վարքի հավաստիության մեծ ջատագով Հ. Պ. Անանյանը, չգիտես ինչո՞ւ, մոռանում է, որ այդ վարքի տվյալներով «Արքեպիսկոպոս Ղևոնդիոսը ոմանց ուղարկեց մինչև Բյութանիայի Քաղկեդոն (քաղաքը) իրեն ենթակա եպիսկոպոսներին և մետրոպոլիտներին

հրավիրելու, երբ եպիսկոպոսներն ու մետրոպոլիտները հավաքվեցին՝ թվով քսան հոգի, նրանց տրվեց Տրդատ թագավորի նամակը, որն ուներ հետևյալ բովանդակությունը.

«Տրդատ թագավորը Հայոց Մեծաց, իմ կենակից Աշխեն թագուհի, քույր Խոսրովիդուխտ և համայն Հայաստան առ Կապադովկիայի հովվապետ արքեպիսկոպոսն, ամբողջ սուրբ կղերն, մեծափառ իշխանները և համայն քրիստոնյաներին: Դիմում եմ մեծ սիրով ու խոնարհամտությամբ, ով երևելագույններ, դուք, որ կենդանի Աստուծո միջոցով բուժում եք հիվանդներին, պետք է քարոզեք, վարդապետեք և հանգամանորեն շարադրեք Աստուծո մարդասիրական ուսմունքը, որ մեզ է հասել»:[193]

Բավական է նայել հայկական Ագաթանգեղոսի մեզ հասած բնագիրը, համոզվելու համար, որ Տրդատ թագավորի «Պատճէն հրովարտակին»-ը սկսվում է ոչ թե Տրդատ թագավորի և նրա կնոջ ու քրոջ հիշատակությամբ, այլ «Ի վաղնջուց հետէ կորուսեալք, տգիտութեամբ մեղացն պաշարեալք, մառախլապատք, միգապատք, ափշեալք, ոչ կարացեալ հայել իմանալ նկատել, զարեգակն արդարութեան տեսանել. վասն այսորիկ խաւարեալք էաք, ի մութ թաթաւէաք» արտահայտությամբ, որը կարելի է համադրել ինչ-որ չափով հունական Ագաթանգեղոսի «Անցյալում մեզ պատել էր մթին և խավար մշուշը և ի վիճակի չէինք ճանաչել Աստծուն, հայացքը հառել արեգակին արդարութեան... » արտահայտության հետ:[194] Հետագա շարադրանքը հայերեն և հունարեն տարբերակներում շատ է տարբերվում, իսկ հայկական Ագաթանգեղոսի ԵԺԲ գլխի §800-ում ասված է. «Վասն այսորիկ և մեր ապաստան եղեալ յօգնականութիւն ընդունելութեան աղօթից ձերոց և սրբութեանդ, Ղևոնդիոս արքեպիսկոպոս Կեսարու և ամենայն ուխտ քահանայութեանդ սրբոյ եկեղեցւոյ, որ այդր էք, մեք յողորմութենէ Տեառն աղօթիւք ձերովք առցուք ողջոյն, Տրդատիոս թագաւոր, ամենայն զօրօք երկրիս Հայոց Մեծաց, և Աշխէն տիկին, և օրիորդ մեծ Խոսրովիդուխտ: Վասն այսորիկ առաքեցաք մեք առ ձեզ արս գլխաւորս՝ իշխանս պատուականս զաշխարհիս մերոյ մեծի, զի պատմեսցեն ձեզ զամենայն սքանչելիս Աստուծոյ, որ աստ յայսմ աշխարհիս գործեցաւ ընդ մեզ»:[195]

Հայկական Ագաթանգեղոսը՝ անդրադառնալով Կեսարիայում Գրիգոր Պարթևի ձեռնադրությանը, գրում է, թե «Եւ եղեալ ժողով բազմութեան եպիսկոպոսաց ի քաղաքն Կեսարացւոց, զի ձեռնադրեսցեն զսուրբն Գրիգորիոս և աւանդեալ ի նա զպատիւ խոնարհութեան քահանայութեանն Քրիստոսի, և զբարձրութիւն եպիսկոպոսութեան փառաւորութեանն Աստուծոյ, զպատիւն և զփառսն մեծ: Սրբով Աւետարանաւն եդին ի վերայ նորա ձեռս ժողովք եպիսկոպոսացն, որոց գլխաւորն Ղևոնդիոս, զի առցէ նա իշխանութիւն յերկինս և յերկրի, առնուլ զփականս

արքայութեանն երկնից, կապել և լուծանել յերկրի»:[196] Կարելի է արդյո՞ք սրանից եզրակացնել, թե Գրիգոր Պարթևի ձեռնադրությունը կատարվել է Կեսարիայի 314 թվի ամռանը կամ աշնանը հրավիրված ժողովում: Կարծում ենք, որ անվերապահորեն ոչ: Խնդիրն այն է, որ հայկական Ագաթանգեղոսը բոլորովին տեղեկություն չունի Կեսարիայում հատկապես 20 եպիսկոպոսների հավաքվելու մասին: Կեսարիայի ժողովի մասնակիցների ցուցակի քննությունը, որ, պետք է խոստովանել հաջողությամբ կատարել է Հ. Պ. Անանյանը, ինչպես վերը տեսանք, ցույց է տալիս, որ դրան մասնակցել են կայսրության արևելյան և Փոքր Ասիայից դեպի հարավ և հարավ-արևելք ընկած պրովինցիաների եպիսկոպոսները, սակայն հունական Ագաթանգեղոսը հայտնում է և, կարծում ենք, որ դա պետք է հավաստի լինի, թե արքեպիսկոպոս Ղևոնդիոսը մարդիկ է ուղարկել անգամ մինչև Բյութանիայի Քաղկեդոն քաղաքը, այլ խոսքով հրավիրել է փոքրասիական ողջ թերակղզու եպիսկոպոսներին ու միտրոպոլիտներին: Անշուշտ ճիշտ չէ հունական Ագաթանգեղոսի խմբագիրը, թե Ղևոնդիոսը մարդիկ էր ուղարկել իրեն ենթակա եպիսկոպոսներին ու միտրոպոլիտներին, քանի որ նրա իշխանությունը երբեք չի տարածվել մինչև Քաղկեդոն, սակայն այն հանգամանքը, որ Գրիգոր Պարթևի ձեռնադրությանը մասնակցել են մեծ թվով եպիսկոպոսներ ամբողջ Փոքր Ասիայից, կայսրության վերը հիշված այլ պրովինցիաներից, ցույց է տալիս, որ Կեսարիայի ժողովը ոչ մի առնչություն չունի դրա հետ: Մեծ Հայքի թագավորությունում քրիստոնեության պետական կրոն դառնալը և Գրիգոր Պարթևի ձեռնադրությունը Դիոկղետիանոսյան հալածանքներից հետո այնքան կարևոր իրադարձություն էր, որ կայսրության շատ եպիսկոպոսներ, հատկապես արևելյան պրովինցիաներից, կուզենային դրան անձամբ մասնակցել:

Հայկական և հունական Ագաթանգեղոսներում պահպանված Տրդատի նամակի բովանդակությունների քննությունը ցույց է տալիս, որ գործ ունենք հայոց թագավորի երկու նամակների հետ, որոնցից մեկը ուղարկվել է Ղևոնդիոս արքեպիսկոպոսին 305թ. ձեռնադրության առիթով, իսկ երկրորդ անգամ՝ Կեսարիայի ժողովի կապակցությամբ: Հունական Ագաթանգեղոսի խմբագիրը՝ շփոթելով Գրիգոր Պարթևի ձեռնադրության առնչությամբ Կեսարիայում եպիսկոպոսների հավաքը Կեսարիայի 314թ. ժողովի հետ և ձեռքի տակ ունենալով երկու նամակները, ձեռնադրությունը դնում է Կեսարիայի ժողովի ժամանակ՝ հայտարարելով, որ Ղևոնդիոսի հրավերով հավաքվեցին 20 եպիսկոպոսներ Գրիգոր Պարթևին ձեռնադրելու համար, ինչը և Հ. Պ. Անանյանին մտածել է տվել, թե հայոց հայրապետի ձեռնադրությունն իրոք տեղի է ունեցել 314 թվականի աշնանը: Համաձայն մեր քննության, հունական Ագաթանգեղոսում միահյուսվել են հայոց թագավորի 305 և 314թթ. գրված

նամակները և նրանում առավելապես արտացոլված է 314թ. նամակի բովանդակությունը, որը տեղ-տեղ միջնորդավորված է 305թ. նամակի որոշ հատվածներով: Համենայն դեպս, հունական Ագաթանգեղոսում թագավորի նամակի սկսվելը «Տրդատ թագավորը Հայոց Մեծաց, իմ կենակից Աշխեն թագուհի, քույր Խոսրովիդուխտ և համայն Հայաստան առ Կապադովկիայի հովվապետ արքեպիսկոպոսն, ամբողջ սուրբ կղերն, մեծափառ իշխանները և համայն քրիստոնյաներն» արտահայտությունը պետք է վերաբերի թագավորի 314թ. գրած նամակին, որովհետև այն բոլորովին չի համապատասխանում հայկական Ագաթանգեղոսում պահպանված «Պատճէն հրովարտակին»-ի համապատասխան բաժնին: Չանդրադառնալով այլևս Տրդատի ուղարկած նամակի բովանդակության քննությանը, որ առանձին ուսումնասիրության նյութ է, նշենք մի կարևոր հանգամանք ևս: Եթե իրոք Գրիգոր Պարթևի ձեռնադրությունը տեղի ունեցավ Կեսարիայի 314թ. ժողովում, ապա արդյո՞ք չէր հիշատակվի նրա մասնակիցների թվում հայոց եպիսկոպոսապետ դարձած Գրիգոր Լուսավորիչը: Կարծում ենք, որ նա այդ դեպքում անպայման կհիշատակվեր: Իհարկե, Կեսարիայի ժողովի մասնակիցների թվում հիշատակվում է ոմն Գրիգորիոս եպիսկոպոս, որին, ինչպես տեսանք, Հ. Պ. Անանյանը համարում է Բյուրիտոնի կամ Բեյրութի եպիսկոպոս: Անշուշտ, կարելի է գայթակղվել և հայտարարել, թե հիշյալ Գրիգորիոսը ոչ այլ ոք է, բայց եթե Գրիգոր Լուսավորիչը: Սակայն նման եզրակացությանը խանգարում են մի շարք հանգամանքներ: Նախ, եթե Գրիգորիոսը իրոք Գրիգոր Լուսավորիչն է, ապա Ղևոնդիոս արքեպիսկոպոսի կողմից հրավիրված եպիսկոպոսների թիվը մեկով կպակասի, քանի որ 20-րդը դառնում է Գրիգոր հայրապետը, որը հակասում է հունարեն Ագաթանգեղոսի տեղեկությանը: Սակայն կա մեկ այլ հանգամանք ևս, որն անտեսել մենք պարզապես չենք կարող: Ոչ մի տեղեկություն չկա այն մասին, թե Գրիգոր Լուսավորիչը մասնակցել է Կեսարիայի ժողովին: Եթե վերջինս գումարվել է Անկյուրիայի ժողովից անմիջապես հետո, ապա ենթադրելի է, որ Գրիգոր Լուսավորիչը եղել է Անկյուրիայի ժողովի մասնակից, սակայն ոչ մի սկզբնաղբյուր նման կարևոր փաստի մասին տեղեկություն չի պահպանել, ինչն ավելի շուտ վկայում է նրա չմասնակցելու, քան մասնակցելու մասին: Չմոռանանք, որ Ագաթանգեղոսը հատուկ արձանագրում է, որ Տրդատ Մեծը և Գրիգոր Լուսավորիչը հրավեր ստացան մասնակցելու Նիկիայի 325թ. ժողովին և՝ չկարողանալով գնալ, Նիկիա ուղարկեցին Գրիգորի որդի Արիստակեսին, որն այդ ժամանակ Ծոփքի եպիսկոպոսն էր: Ինչպես տեսնում ենք, եկեղեցական ժողովներին մասնակցությունը խիստ պատվաբեր էր և մեր պատմիչները, որ որպես կանոն եկեղեցականներ էին, հազիվ թե այդ կարևոր իրադարձությունը, ինչպիսին Գրիգոր Լուսավորչի մասնակցությունն էր Կեսարիայի ժողովին, անտեսեին: Այսուհանդերձ,

կարծում ենք, որ Գրիգոր Լուսավորիչը Կեսարիայի ժողովին մասնակցելու հրավեր է ստացել և՝ չկարողանալով մասնակցել ինչ-ինչ պատճառներով, խնդրել է հայոց թագավորին նամակ գրել, որտեղ մանրամասն նկարագրվում էր Հայոց դարձի ողջ ընթացքը:

Ղևոնդիոս արքեպիսկոպոսը հիշատակվում է Անկյուրիայի, Կեսարիայի և Նիկիայի ժողովների մասնակիցների թվում, սակայն այդ բոլորովին չի նշանակում, որ նա չէր կարող լինել Կեսարիայի արքեպիսկոպոս դրանից առաջ, եթե անգամ դրանից առաջ հունա-հռոմեական աղբյուրներում չի հիշատակվում: Արդեն միայն նրա հիշատակությունը հայկական սկզբնաղբյուրներում միանգամայն վավերական է դարձնում նրա հոգևոր իշխանությունը 305 թվականին, ինչպես նաև դրանից ինչ-որ ժամանակով առաջ: Հազիվ թե ավելի քան երկու տասնամյակը շատ մեծ տևողություն է նրա հովվապետության համար, ուստի ոչինչ չի խանգարում պնդելու, որ նա 305թ. ձեռնադրել է Գրիգոր Լուսավորչին:

Այս առնչությամբ հարկ ենք համարում անդրադառնալ նաև Սեբաստիայի Պետրոս եպիսկոպոսի խնդրին: Վերջինս սուրբ Սթանագինեսի հայերեն վկայաբանության մեջ հիշատակվում է որպես «Պետրոս Սեբաստիոյ եպիսկոպոս բարեկամ Աթանագինէսի»:[197] Այն հանգամանքը, որ Աթանագինեսը նահատակվել է 303թ., ցույց է տալիս, որ նա 305թ. հաստատ եպիսկոպոս էր, սակայն Նիկիայի ժողովի ժամանակ կենդանի չէր: Հ. Պ. Անանյանը՝ հենվելով հունարեն վարքի վրա, որտեղ Պետրոս եպիսկոպոսը համարվում է 320 թվին Սեբաստիայի քառասուն մանկանց նշխարների ամփոփողը, գտնում է, որ նա Սեբաստիայի եպիսկոպոս է եղել առնվազն 303-320թթ., հետևաբար 314 թվին կարող էր Ղևոնդիոս արքեպիսկոպոսի հանձնարարությունը, որին շուտով կանդրադառնանք, կատարել: Տեսականորեն ամեն ինչ ճիշտ է, սակայն չմոռանանք, որ Պետրոս եպիսկոպոսը կարող էր այդ կատարել նաև 305 թվին: Հեղինակի եզրակացության օգտին կարող է միայն մի փաստ խոսել, որ Պետրոս եպիսկոպոսը չի հիշատակվում Կեսարիայի 314թ. եկեղեցական ժողովի մասնակիցների մեջ: Սակայն դա էլ շատ ուժեղ կռվան չի, քանի որ նա ինչ-ինչ պատճառներով (ծեր հասակ, առողջություն և այլն) կարող էր և չմասնակցել Գրիգոր Պարթևի ձեռնադրությանը, ինչն արձանագրում է Ագաթանգեղոսը: Սակայն հունարեն Ագաթանգեղոսում կա մի տեղեկություն, որն արժանի է հետազոտողի ուշադրությանը: Այնտեղ ասված է, որ Գրիգոր Լուսավորիչն ու նրա ուղեկիցները՝ դուրս գալով Կեսարիայից, հասնում են Սեբաստիայի գավառի Տրիոդիա կոչված վայրը, վրաններ են խփում և հանգստանում՝ չկամենալով որևէ մեկին հոգս պատճառել, իսկ սեբաստացիները իրենց եպիսկոպոս Պետրոսի և իշխանի հետ դիմավորում են նրանց ու մեծ ուրախությամբ տանում քաղաք:[198]

Հետագա շարադրանքից պարզվում է, որ «Քաղաքացիների խնդրանքով նրանք այնտեղ մնացին վեց օր և ապա շարժվեցին դեպի իրենց երկիրը: Սուրբ Գրիգորն իր հետ վերցրեց երեցներ և մենակյացներ, որպեսզի վիճակեցուցանե նրանց հայոց եկեղեցում: Նա հայրապետ Ղևոնդիոսի կողմից ուներ նաև ընդհանրական թղթեր, հասցեագրված սրբազան եպիսկոպոս Պետրոսին, որպեսզի սուրբ կանոնների համաձայն իրեն աթոռակալ նշանակէ»:[199] Հ. Պ. Անանյանը հիշյալ տեղեկությունը հակված է ընկալել որպես հանձնարարություն, որ Պետրոս եպիսկոպոսը պետք է Ս. Գրիգորին պաշտոնապես Հայաստանի հայրապետական աթոռին բազմեցներ:[200] Հարկ ենք համարում նշել, որ հունարեն Ագաթանգեղոսի այդ տեղեկությունը, գոնե այդ նշանակությամբ, ինչպես հասկանում է Հ. Պ. Անանյանը, բոլորովին չի համապատասխանում ճշմարտությանը: Եթե Պետրոս եպիսկոպոսն, իրոք, նման հանձնարարություն էր ստացել, ապա նա անպայման պետք է ուղեկցեր հայոց հայրապետին Հայաստան, հանգամանք, որի մասին ոչինչ չեն հայտնում ո՛չ հայկական, ո՛չ էլ հունական Ագաթանգեղոսները: Համենայն դեպս հայկական Ագաթանգեղոսը ոչինչ չգիտի ոչ հանձնարարության և ոչ էլ ինչ-ինչ թղթեր Պետրոս եպիսկոպոսին հանձնելու մասին. «Մեծաւ պատուով և թղթով և ժողովով զսուրբն Գրիգորիոս անդուստ (Կեսարիայից - Հ. Բ) յուղարկեցին իշխանօքն հանդերձ: Ետուն ողջոյն, և յուղի անկեալ անտի ի շնորհս տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ գային հասանէին ի քաղաքն Սեբաստացւոց, և անդ յեցան յերեկօթս աւուրս ոչ սակաւս: Եւ անդ գտանէր բազմութիւն եղբարց, զորս հաւանեցուցանէր ընդ իւր գալ, զի վիճակեցուսցէ զնոսա ի քահանայութիւն յիւրում աշխարհին, և բազում գունդս գունդս յաճախեալ առնոյր ընդ իւր, «և մեծարանօք մեծացեալ յեպիսկոպոսաց աշխարհին և յիշխանաց և ի ժողովրդոց»:[201] Այս տեղեկությունը ցույց է տալիս, որ Գրիգոր Լուսավորիչը Ղևոնդիոս արքեպիսկոպոսից նամակ, իհարկե, ստացել է, սակայն ոչ թե Պետրոս եպիսկոպոսի, այլ, ինչպես դժվար չէ կռահել, հայոց թագավորի համար: Նա Սեբաստիայի եպիսկոպոսին ոչինչ չի տվել, իսկ Սեբաստիայում էլ կանգ են առել ոչ թե վեց օր, այլ «աւուրս ոչ սակաւս»: Սեբաստիան Փոքր Հայք պրովինցիայի կարևոր քաղաքներից մեկն էր, բնականաբար բնակիչներն էլ հայեր էին, ուստի միանգամայն տրամաբանական է, որ Գրիգոր Լուսավորիչն աշխատեր նրանցից շատերին բերել Մեծ Հայք և վերցնել հոգևոր ծառայության: Ըստ որում նշված կացությունը ավելի սազական է 305, քան 314 թվին, քանի որ 305-ին , երբ հալածանքները դեռ նոր էին դադարել և այն էլ կարճ ժամանակով, շատ ավելի հեշտ էր մարդկանց համոզել թողնելու իրենց տները և տեղափոխվել Մեծ Հայք, որտեղ քրիստոնեությունը պետական կրոնի էր վերածվում, քան 314 թվին, երբ կայսրության մեջ քրիստոնեությունը դարձված էր հավասարազոր կրոն: Որ հունական

Ագաթանգեղոսում փաստական աղավաղում կա, տարակուսանքի տեղիք չի տալիս: Սակայն որո՞նք են շարժառիթները: Հետագա տեղեկություններից մեզ հայտնի է, որ հայոց հայրապետը Կեսարիայում ձեռնադրվելու համար պետք է ունենար Փոքր Հայքի եպիսկոպոսների երաշխավորական նամակները:[202] Հունական վարքի խմբագիրը, որն անտարակույս հայ քաղկեդոնական է, թերևս փորձել է այդ հանգամանքն արտացոլել հիշյալ հատվածում:

Հ. Պ. Անանյանն անդրադարձել է նաև Հռիփսիմյանց կույսերի Հայաստան գալու թվականին, որը նա համարում է 313 թվականը, և հակված է կարծելու, որ իր առաջարկած թվականը մեծ նպաստ է բերելու հարցի լուսաբանությանը:[203] Այս հարցին մենք, այնուամենայնիվ, մտադիր չենք անդրադառնալ, քանի որ Հռիփսիմե եկեղեցու հարևանությամբ կատարված պեղումները հայտնաբերեցին, այսպես կոչված, քույրական գերեզմանոց, որը ոչ մի կասկած չի թողնում, որ Հռիփսիմյանց կույսերի նահատակությունը ոչ թե առասպել է, այլ իրականություն, ուստի հազիվ թե կարելի է լուրջ ընդունել Մ. Աբեղյանի այն տեսակետը, թե «Դժուար է թե որևէ իրական պատմական բան լինի, բայց եթե այն, որ իրոք Վաղարշապատում նահատակված են եղել կոյսեր»:[204] Մեր կարծիքով, չի կարելի սկզբնաղբյուրների մեջ միայն ու միայն պատմության աղավաղում տեսնել, անհրաժեշտ է նաև ի նկատի ունենալ, որ աղավաղումն անգամ շահագրգռություններով է պայմանավորված, իսկ Հռիփսիմյանց կույսերի խնդրում շահագրգռություն փնտրելը ոչնչով հիմավորված չէ, ուստի և այդ պատմությունը դնել կասկածի տակ ոչ մի կերպ չի կարելի:

Վերջերս մենք պատեհություն ունեցանք ծանոթանալու ֆրանսիայի քաղաքացի, մեր հայրենակից Մաքսիմ Եվադյանի «Տրդատի դարձը հույն պատմիչների քննության լույսով» աշխատությանը, որտեղ նա կարողացել է ցույց տալ, որ Հայոց դարձը տեղի չի ունեցել Կոստանդինի գահակալության օրոք և որ հին հույն հեղինակների համար ակնհայտ էր, որ 305թ. Հայաստանն արդեն քրիստոնեական պետություն էր:[205] Հեղինակը՝ քննության առնելով Եվսեբիոս Կեսարացու, Սոկրատեսի, Թեոդորետոս Տյուրացու, Սոզոմենոսի, Աթանաս Աղեքսանդրացու աշխատությունները, հիմնավոր կերպով ցույց է տալիս, որ համաձայն IV և V դարերի հույն հեղինակների Հայաստանը անառարկելիորեն քրիստոնյա երկիր է Կոստանդինից (իմա՛ Կոստանդիանոս – Հ. Բ.) առաջ: Սակայն՝ շատ ոգևորվելով, հայտարարում է, որ իբր Հայաստանի և հայերի քրիստոնեացումը նախորդել է Դիոկղետիանոսի հալածանքների սկզբնավորմանը և որ «թվում է, թե հարկ է այս իրադարձությունը տեղափոխել «եկեղեցու փոքր խաղաղության» ժամանակաշրջան (260-303)»: Ինչ վերաբերում է հայերի և Հայաստանի քրիստոնեացման Դիոկղետիանոսի կողմից քրիստոնյաների դեմ հալածանքների սկզբնավորմանը նախորդելուն և անգամ

«եկեղեցու փոքր խաղաղության» շրջան տեղափոխելուն, ապա այդ տեսակետը ոչ մի քննադատության չի դիմանում հատկապես Ագաթանգեղոսի և Պատմահոր հաղորդումների լույսով: Միաժամանակ ավելացնենք, որ հունական պատմիչները Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման խնդրում ոչ թե հիմնական են, այլ օժանդակ, քանի որ միայն օգնում են հայկական սկզբնաղբյուրների տեղեկությունների ճիշտ ընկալմանն ու մեկնաբանությանը:

Ագաթանգեղոսի խոսքերով Գրիգոր Լուսավորչի օրոք Հայաստանում ծաղկեց քրիստոնեությունը: Նրա հաղորդումներից մեկի համաձայն Գրիգոր Լուսավորիչը «Եւ բազմացոյց կացոյց տեսուչս եպիսկոպոսս յամենայն գաւառս Հայոց իշխանութեան իւրոց, և որ յաստիճան եպիսկոպոսութեան ձեռնադրեցան ի նմանէ՝ աւելի քան զչորեքարիւր եպիսկոպոս, որք կային տեսուչք տեղեաց տեղեաց: Իսկ կարգք երիցանց կամ սարկաւագաց կամ անագնովսաց, և որ այլևս ի պաշտօն Տեառն կային՝ անթիւք էին ի բազմութենէն»:[206] Ամեն ինչ խոսում է այն մասին, որ Գրիգոր Լուսավորիչը ոչ մի դեպքում 400 եպիսկոպոս չէր ձեռնադրի, սակայն բացատրել այս թվի առաջացման պատճառները դժվարանում ենք: Այն հանգամանքը, որ հունական Ագաթանգեղոսը տեղեկություն չունի Գրիգոր Լուսավորչի կողմից 400 եպիսկոպոս ձեռնադրելու մասին, ցույց է տալիս, որ նման տեղեկություն Ագաթանգեղոսի սկզբնական բնագրում չի եղել:

Համոզվելով, որ քրիստոնեությունը ամուր արմատներ է արձակել երկրում, Գրիգոր Լուսավորիչը հեռանում է անապատ վայրեր՝ չհամաձայնելով թագավորի՝ մշտապես նրա մոտ մնալու և շրջագայելու հորդորներին:[207] Գրիգորի հեռանալուց հետո թագավորը՝ իմանալով հայոց հայրապետի որդիների Կեսարիայում գտնվելու մասին, կարգադրում է զորքի սպարապետ Արտավազդին, Աշոցքի իշխան Տաճատին և արքունի Կարապետ Դատին ուղևորվել Կապադովկիա, որտեղից նրանք բերում են Գրիգորի զավակներ Վրթանեսին, որն աշխարհական էր, և Արիստակեսին, որը հոգևորական ձեռնադրվելով, հաստատվել էր տեղի մենաստաններից մեկում:[208] Տրդատի հրամանով գալիս է նաև Գրիգոր Լուսավորիչը, որ ճգնում էր Դարանաղյաց գավառի Մանյա Այրք կոչվող լեռան քարանձավներից մեկում: Գրիգորը թագավորի խնդրանքով նա եպիսկոպոս է ձեռնադրում Արիստակեսին: [209]

Ագաթանգեղոսի հաղորդմամբ այդ ժամանակներում թագավորում էր Կոստանդիոսի որդի Կոստանդիանոսը «Սպանացւոց և Գաղիացվոց երկրում», որ հավատում է Քրիստոսին: Հեթանոս թագավորները՝ (իմա՛ կայսրերը – Հ. Բ.) Դիոկղետիանոսը, Մարկիանոսը, Մաքսիմիանոսը, Լիկիանոսը և Մաքսենտոսը դուրս են մղվում քաղաքական ասպարեզից, իսկ Կոստանդիանոսը պայծառացնում էր քրիստոնեական կարգերը, վերականգնում էր ավերված եկեղեցիները և ի վերջո

տիրում կայսրությանը[210], որը տեղի ունեցավ 324 թվականին: Դատելով ամեն ինչից, մինչև այդ էլ բարեկամական հարաբերություններ էին հաստատվել Կոստանդիանոսի և հայոց Տրդատ Մեծ թագավորի միջև: Եվ այժմ, երբ Կոստանդիանոսն իր իշխանության տակ առավ ողջ կայսրությունը՝ հաղթելով Լիկինիոսին, Մեծ Հայքի թագավորությունը կրկին սահմանակից դարձավ կայսրությանը:

Տրդատ Մեծը հրավեր է ստանում այցելել կայսրություն: Իր հետ վերցնելով Գրիգոր Լուսավորչին ու նրա որդի Արիստակեսին և Աղբիանոս եպիսկոպոսին, ինչպես նաև զինվորական կողմից իր պալատի չորս գահերեցներ՝ Նոր Շիրականի, Ասորեստանյայց, Արվաստան և Մասքթաց կողմերի բդեշխներին, Անգեղտան իշխանին, թագադիր ասպետին, մեծ սպարապետին, Մոկաց իշխանին, Սյունյաց, Ռշտունյաց, մաղխազության տան իշխաններին, Շահապիվանի շահապին սպասկապետության իշխանին, բազմաթիվ այլ մեծամեծերի և 70 հազար զինվորների,[211] նա ուղևորվում է Հունաց կողմերը՝ այսինքն՝ կայսրություն: Հայ պատվիրակությունը, որի թիվն, անշուշտ, շատ ավելի համեստ էր, ամենուրեք հանդիպելով փայլուն ընդունելության, ընթանալով ցամաքով և ծովով, հասնում է Իտալիացվոց աշխարհի Դաղմատացվոց երկիրը՝ հռոմեացիների թագավորանիստ քաղաքը:[212]

Հյուրերին ընդունում են Կոստանդիանոսը և «հայրապետն մեծ, արքեպիսկոպոսն աշխարհամուտ դրանն» Եվսեբիոսը: Այս ամենը կատարվում է, ինչպես բխում է բնագրից, մինչև Նիկիայի ժողովը, որը կայսրը գումարում է հայոց պատվիրակության վերադարձից հետո: Հայկական աղբյուրները հավաստում են, որ երկու պետությունների միջև կնքվում է դաշինք, որը հայտնի է «Դաշանց թուղթ» անունով: Հայոց թագավորը և հայրապետը, ինչպես արդեն նշվեց, ըստ երևույթին, հրավեր են ստանում մասնակցելու Նիկիայի ժողովին, սակայն ինչ-ինչ պատճառներով չկարողանալով գնալ, Նիկիա են ուղարկում Արիստակես եպիսկոպոսին, որը Գրիգոր Լուսավորչի որդին էր: Վերջինս՝ գալով Հայաստան, իր հետ բերում է Նիկիական կանոնները և մատուցում թագավորին ու կաթողիկոսին, որոնք դրվում են Հայոց առաքելական եկեղեցու գաղափարախոսության հիմքում:[213] Ագաթանգեղոսը հասցնում է իր պատմությունը մինչև Գրիգոր Լուսավորչի մահը և նշում, որ ինքը գրել է այն Տրդատ թագավորի հրամանով «ըստ օրինակի յունական ճարտարութեանն արկեալ ի շար զամենայն»:[214] Իր ասելով, նա «Ոչ սուտապատում ճարտարախօս եղեալ առ ի մերոց բանից, այլ զյաճախագոյնսն թողեալ և ի նշանավոր գիտակաց քաղելով՝ զհամառօտսն կարգեցաք. որք ոչ մեզ միայն, ո՛վ թագաւոր, այլ յորժամ քո առաջի զմատեանդ ընթեռնուցուն՝ յայտնի է»:[215] Աշխատության վերջում հեղինակը գրում է. «Եւ արդ՝ քանզի ըստ օրինակի գրելոցս

առ ի մէնջ՝ ի կատարումն դարձուցաք, ոչ եթէ ի հին համբաւուց տեղեկացեալ և մատենագրեալ զայս կարգեցաք, այլ որոց մեզէն, իսկ ականատեսք եղեալ կերպարանացն և առընթերակաց հոգևորական գործոցն և լսողք շնորհապատում վարդապետութեանն, և նոցին արբանեակք ըստ աւետարանական հրամանացն»:[216]

Գրիգոր Լուսավորչի և Տրդատ թագավորի վերջին տարիների մասին հետաքրքիր տեղեկություններ է պահպանել Պատմահայրը: Մովսես Խորենացին անդրադառնում է Կոստանդիանոս կայսեր և Լիկինիոսի հակամարտությանը և նշում, որ նա «նախ առ ի հաւատսն գտանի դրժող, և երկրորդ առ բարեգործն իւր ապստամբ: Յարոյց հալածանս եկեղեցւոյ, և նենգութիւն գաղտնի ընդդէմ Կոստանդիանոսի. նա և չարիս բազմազանս հասոյց ամենեցուն, որ ընդ իւրով իշխանութեամբ էին, ցանկասէրս այս և գարշելի ալևոր, ներկածոյ ունելով զհերս. որ զկին իւր ի մեծ նեղութիւն արգել, սակս տարփութեան ելանելւոյն Գլափիւռայ, վասն որոյ սպան զսուրբն Բասիլիոս Ամասիոյ Պոնտացւոց եպիսկոպոս»:[217] Պարզվում է, որ նա՝ պատրաստվելով պատերազմի Կոստանդիանոսի դեմ, «... ցրտացեալ ի սիրոյն Տրդատայ մեր թագաւորի, ակնածէր որպէս արդարև ի թշնամւոյ. քանզի գիտէր եթէ ատելի է արդարոյ ամենայն ամբարիշտ»:[218] Այս տեղեկությունից դժվար չէ եզրակացնել, որ Լիկինիոսը թշնամացել էր Տրդատի հետ, ամենայն հավանականությամբ, վերջինիս և Կոստանդիանոս կայսեր միջև հաստատված բարեկամության համար, որը շատ բանով պայմանավորված էր Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակմամբ և կայսեր դեպի քրիստոնյաներն ունեցած վերաբերմունքով: Խորենացու հավաստմամբ Կոստանդիանոսն իր որդիների հետ նշել է Նիկոմեդացվոց քաղաքի քսանամյակը՝ թագավորելով հալածանքների չորրորդ տարուց մինչև կայսրության 13-րդ տարին:[219] Խորենացու ժամանակագրական տվյալները զարմանալիորեն գերճիշտ են, քանի որ Կոստանդիանոսն իշխել է 306 – 337 թվականներին: 306 թիվն, իրոք, հալածանքների 4-րդ տարին է (303 - 306) և 337-ը՝ խաղաղության 13-րդ տարին (324+13 = 337): Կոստանդիանոսը ՝ հաղթելով Լիկիանոսին, այլևս Հռոմ չվերադարձավ և արքունիքը հաստատեց Բյուզանդիոն քաղաքում, որը նա կոչեց Նոր Հռոմ, սակայն ժամանակակիցները այն կոչեցին «Կոստանդիանու քաղաք»:[220] Ինչպես վերն արդեն նշել ենք, Կոստանդիանոսը հրավիրեց Նիկիայի ժողովը, որին մասնակցելու համար Կոստանդիանոսը հրավիրում է Տրդատ արքային և Գրիգոր Լուսավորչին:[221] Սակայն պարսկական վտանգը, որ առաջացել էր Շապուհ Բ-ի գահ բարձրանալով, ստիպում է հայոց թագավորին հրաժարվել այդ ուղևորությունից: Ինչպես արդեն նշեցինք, չկարողացավ գնալ նաև Գրիգորը, ուստի Նիկիա են ուղարկում Արիստակեսին, որը Կեսարիայի արքեպիսկոպոս Ղևոնդիոսի հետ մասնակցում է Նիկիայի ժողովին, որին ներկա գտնվեցին եկեղեցու 318 հայրեր:

Արիստակեսը Հայաստան է բերում Նիկիայի ժողովի կանոնները, որոնք ուղղված էին մասնավորապես արիոսականության դեմ, և մատուցում դրանք հայոց թագավորին ու իր հորը Վաղարշապատ քաղաքում: Մոտավորապես այդ ժամանակներում Տրդատ Մեծը վերանորոգում է Գառնու ամրոցը, իսկ Գրիգոր Լուսավորիչը մահանում է Մանյա Այրքում:[222] Համաձայն Պատմահոր հաղորդման, քարանձավը, որտեղ ճգնում էր Գրիգոր Լուսավորիչը, իր անունն ստացել էր Հռիփսիմյանց կույսերից Մանիի անունից, որը բնակվել էր մինչ այդ նույն քարայրում: Նիկիայի ժողովից հետո, երբ Արիստակեսը վերադարձավ, Գրիգոր Լուսավորիչն այլևս որևէ մեկին չերևաց: Պատմահոր խոսքերով «Վասն որոյ յիսկզբան քահանայանալոյ նորա, յեօթն և ի տասներորդ ամէ թագաւորութեանն Տրդատայ մինչև ցքառասուն և վեցերորդ ամն նորին, յորմէ հետէ ոչ ևս յաւել ումեք երևել՝ համարեալ թուին ամք երեսուն»:[223] Եթե Տրդատի իշխանության 17-րդ տարին ոչ մի կասկած չի հարուցում, ապա մյուս թվերը հատուկ քննության կարիք ունեն: Տրդատի իշանության 46-րդ տարին, անշուշտ, պետք է հաշվել ոչ թե 288-ից ինչպես 17-րդը, այլ հայոց թագավորի առաջին թագադրությունից՝ այսինքն՝ 274 թվից, որը 320 թվականն է: Ինչ վերաբեում է դրանից հետո 30 տարի մարդկանց չերևալուն, ապա ոչ մի կասկած չկա, որ «Է» և «Լ» տառերի շփոթի հետևանքով 7-ը վերածվել է 30-ի: Եվ իրոք այդ ընթացքում Գրիգոր Լուսավորիչը միայն Տրդատի հետ 324-ին այցելել է կայսրություն և ուղարկել ու դիմավորել է Նիկիա մեկնած իր Արիստակես որդուն: Եթե մեր ենթադրությունը ճիշտ է, ապա Գրիգոր Լուսավորչի մահը պետք է դնել 327 թվին: Նրան հաջորդեց առաքելական աթոռին նրա որդի Արիստակեսը «ամս եօթն, ի քառասուն և յեօթներորդ ամէն Տրդատայ մինչև ցյիսուն և երրորդ ամն նորին, յորում եղև կատարումն Արիստակեայ»[224]: Համաձայն այս տվյալների, Արիստակեսը աթոռակալել է 321 թվից մինչև 327 թիվը, քանի որ Տրդատի 47-րդ տարին 321 թիվն է, իսկ 53-րդը 327-ը: Արիստակեսն իր հոգևոր պահանջկոտության համար, սպանվեց 327 թվին Չորրորդ Հայքի վերակացու Արքեղայոսի կողմից Ծոփաց գավառի ճանապարհին: Նա թաղվեց Եկեղյաց գավառի Թիլ ավանում, իսկ նրան հաջորդեց նրա եղբայր Վրթանեսը՝ Տրդատի 54-րդ տարուց,[225] այսինքն՝ 328 թվից: Գրիգոր Լուսավորիչը մահացավ Մանյա Այրքում և հովիվները՝ նրա մարմինը գտնելով հողին հանձնեցին նույն տեղում՝ չիմանալով անգամ, թե ո՞վ է նա: Շատ ավելի ուշ Գառնիկ անունով մի ճգնավոր հայտնաբերեց նրա գերեզմանը, և Գրիգոր Լուսավորչի մասունքները բերեց ու հողին հանձնեց Թորդան գյուղում:[226]

Բավական դաժան եղավ Տրդատ Մեծի ճակատագիրը: Նա՝ հանդես բերելով մեծ սկզբունքայնություն քրիստոնեության հարցերում առաջ բերեց իրենց կանանց ու հարճերի կամքին հնազանդ նախարարների դիմադրությունը կրոնի խնդրում: Այդ

չհանդուրժելով թագավորը հրաժարվեց աշխարհիկ իշխանությունից և քաշվելով լեռները՝ ճգնավոր դարձավ:[227] Նախարարները նրան ետ կանչեցին՝ խնդրելով վերցնել թագավորության ղեկը և, որ իրենք կշարժվեն նրա կամքով: Դժվար է ասել, թե դրանից հետո ինչ հակասություններ ծագեցին վերադարձած հայոց թագավորի ու նախարարների միջև, որոնց չանդրադառնալով՝ Պատմահայրը լոկ գրում է. «Աստանօր ամաչեմ ասել զճշմարտութիւնն, մանաւանդ թէ զանօրէնութիւն և զամբարշտութիւն ազգիս մերոյ, և մեծի ողբոց և արտասուաց արժանի զսոցա գործս»:[228] Հավանաբար դա մեծապես կապված էր Պարսկաստանում Շապուհ Բ Երկարակյացի (309-379) իշխանության գլուխ գալու հետ, որի համար քրիստոնեություն ընդունած Հայաստանը թշնամի թագավորություն էր: Տրդատը թունավորվեց նախարարների կողմից իր առաջին թագադրության 56-րդ տարում, այսինքն՝ 330 թվին:[229]

[1] **Ստեփանոսի Տարօնեցւոց Ասողկան** Պատմութիւն տիեզերական, երկրորդ տպագրություն, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 82 – 83:

[2] Անդ, էջ 343 – 345: **Dulaurier E.,**Recherches sur la Chronlogie armenicane technigae et historique J. 1, Paris, 1859, էջ 49 – 50, 173 -174, 282:

[3] **Ասողիկ**, ծան. 71, էջ 345:

[4] **Մովսիսի Խորենացւոց** Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ.Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, գիրք Բ, գլ. ՁԲ:

[5] Անդ, գիրք Բ, գլ. ՁԱ:

[6] **Միքայել Չամչյանց**, Պատմութիւն Հայոց, հատոր Ա, Վենետիկ, 1784, էջ 373, 384, 386 – 387, 393 – 394, 395: Հ. Պ. Անանյանը մեզ համար բոլորովին անհասկանալի ձևով, գրում է, թե իբր Մ. Չամչյանը Հայոց դարձը թվագրել է 304-ով (**Հ. Պ. Անանյան**, Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը եւ պարագաները, Վենետիկ, 1960, էջ 5):

[7] **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան**, Ազգապատում, հատոր Ա, էջմիածին, 2001, էջ 75, 78, 84, 99:

[8] N. Adontz, Les vestiges d`un aucien cuete en Arménie, տե՛ս, Mélanges Franz Cumont, 1936, էջ 513:

[9] "Èñòî ðèÿ Äðåâí åãî ì èðà" , ï î ä ðåäàêöèåé È ì Äüÿêî í î âà , Â Ä Í åðî í î âî é, È Ñ Ñâåí öèöêî é, èçä òðåòüå, Ì î ñêâà, 1989, ò III, էջ 229: Մյուս աշխատությունները չենք նշում, քանի որ դրանց անդրադառնալու ենք:

[10] Ինչպես շուտով կհամոզվենք, սկզբնաղբյուրների տեղեկություններն առավել քան բավարար են:

[11] **Հ. Պ. Անանյան,** Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը եւ պարագաները, էջ 10-12:

[12] **M. L. Ghaumont, S**ur I`origine de Saint Gregoire d`Arménie,տե՛ս "Le Muséon", 1989, հատ. 102, f. 1-2, էջ 129:

[13] **Ռուբեն Մանասերյան**, Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, Երևան, 1997, էջ 196 – 201:

[14] **Գրիգոր Բրուտյան,** Հայոց դարձի թուականի մասին, տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 2001, 1-12, էջ 181 – 228, որոշակիացված՝ էջ 217 – 218:

[15] **Ռ. Մանասերյան**, Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, էջ 13:

[16] **Ստ. Մալխասյան**, Ե՞րբ են հայերը ընդունել քրիստոնեությունը, տե՛ս «էջմիածին», 1944, Ա, էջ 22– 28:

[17] **Ուխտանես եպիսկոպոս,** Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 111:

[18] **Հ. Պ. Անանյան**, Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը եւ պարագաները, էջ 14:

[19] **Ե. Քասունի**, ժամանակագրական ճշտումներ հեթանոս հայ Արշակունեաց պատմութեան, տե՛ս «Ակօս», ԺԳ (1953), թիվ 3-7:

[20] **Մ. Օրմանյան**, Ազգապատում, հատոր Ա, էջ 74-75:

[21] «Հայ ժողովրդի պատմության», ՀՍՍՀ ԳԱ հրատ., հատ. Բ, Երևան, 1984, էջ 60:

[22] **Մովսես Խորենացի**, գիրք Բ, գլ.ՂԲ:

[23] «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատ., հատ. Բ, էջ 60:

[24] «Պատմութիւն Սեբէոսի», աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 58 (այսուհետև՝ **Սեբեոս**):

[25] **Հ. Պ. Անանյան**, Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը եւ պարագաները, էջ 20-73:

[26] Այս հաշվարկին մենք դեռ կանդրադառնանք (Հ. Բ.):

[27] **Հ. Պ. Անանյան,** Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը եւ պարագաները, էջ 22-23:

[28] **Սեբեոս,** էջ 157:

[29] **Հ. Պ. Անանյան**, Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը եւ պարագաները, էջ 23:

[30] Անդ, էջ 24 – 25:

[31] Sanctum Concilium Nicaenum Primum Genarale, տե՛ս, **Joannes Dominicus Mansi,** Sacrorum Conciliarum Nova et Amplissima Collectio, vol, 2, Graz, 1960, էջ 694:

[32] **Մովսես Խորենացի,** թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, էջ 383 – 396:

[33] Անդ:

[34] **Ե. Քասունի**, ժամանակագրական ճշտումներ հեթանոս հայ Արշակունեաց պատմութեան, տե՛ս, «Ակօս», ԺԳ (1953), թիվ 3-7:

[35] **Հ. Պ. Անանյան**, Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը եւ պարագաները, էջ 27:

[36] Անդ:

[37] Անդ, էջ 27-28:

[38] **Հ. Յովսեփ Վ. Գաթըրճյանց**, Տիեզերական պատմութիւն ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցմեր ժամանակս, հատ. Բ, Վիեննա, 1852, էջ 447:

[39] **Հ. Ն. Ակինյան,** Ս. Գրիգոր Լուսաւորիչ, տե՛ս «Հանդէս ամսօրեայ», ՇԳ (1949), էջ 3-58:

[40] **Փաւստոսի Բուզանդացւոյ** Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1832, դպր. Գ, գլ. ԻԱ:

[41] **Հ. Պ. Անանյան,** Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը եւ պարագաները, էջ 29-52:

[42] **Հ. Յ. Աստուրյան,** Քաղաքական վերաբերութիւններ ընդ մէջ Հայաստանի եւ Հռովմայ 190 - էն ն. Ք. մինչեւ 428 յ. Ք., Վենետիկ, Ս. Ղազար, 1912, էջ 281, Ծան. 1:

[43] **Հ. Պ. Անանյան**, Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը եւ պարագաները, էջ 42-43:

[44] Անդ, էջ 44:

[45] Անդ, էջ 44-45:

[46] **À í í èí ñêèé**, Äðåâí èå àðì ÿí ñêèå èñòî ðèêè êàê èñòî ðè÷åñêèå èñòî ÷í èêè, Î äåññà, 1899 Ա. Աննինսկին Հռիփսիմյանց գալուստը դնում է 315-316թթ., Տրդատի գահակալության սկիզբը՝ 302-ին, իսկ հայերի դարձը 315-ից հետո, 325թվից ոչ շատ առաջ (էջ 52, 72., 86): Աննինսկու կառույցը խախուտ է, քանի որ Դիոկղետիանոս կայսրը ինքնասպանություն է գործել դեռևս 313-ին:

[47] **Սեբեոս,** էջ 58:

[48] **Հ. Մանանդյան**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 127:

[49] **Հ. Պ. Անանյան,** Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը եւ պարագաները, էջ 56:

[50] Գ. Բրուտյանի աշխատությանը, որ ժամանակագրորեն ավելի ուշ է հրատարակվել, մենք այլևս չենք անդրադառնում, որովհետև, ինչպես արդեն նշել ենք, հարցիս քննության համար առանձին հետաքրքրություն չի ներկայացնում (Հ. Բ.):

[51] **Ռուբեն Մանասերյան**, Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, էջ 177:

[52] Անդ, էջ 178:
[53] Անդ, էջ 178-179:

[54] Անդ, էջ 179:

[55] Անդ.: Տե՛ս նաև **A. Chastagnol,** L՛e՛volution politique, sociale et e՛qonomique du monde romain de Dioclêtien a՛ Julian, P. 1982, էջ 122-124:

[56] **Ռուբեն Մանասերյան**, Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, էջ 179-180:

[57] Անդ, էջ 180:

[58] Անդ, էջ 180:

[59] Անդ, էջ 180-181:

[60] Անդ, էջ 196-197:
[61] Անդ, էջ 197:

[62] Անդ, էջ 198:
[63] Անդ, էջ 198-199:

[64] Անդ, էջ 199:

[65] Անդ:

[66] Անդ, էջ 201:

[67] Անդ:

[68] **Մովսես Խորենացի**, գիրք Բ, գլ. ՁԲ:

[69] **Ուխտանես եպիսկոպոս,** Պատմութիւն Հայոց, էջ 95:

[70] Անդ, էջ 111-112:

[71] **Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն,** Բաղդադութեամբ ձեռագրաց հանդերձ առաջանաբանիւ եւ ծանօթութեամբք ի ձեռն Ստ. Մալխասեանց, Երևան, 1939, գլ. Գ, էջ 17(այսուհետև՝ Սեբեոս եպիսկոպոս): Տե՛ս նաև **Սեբեոս**, գլ. Ե, էջ 59:

[72] **Սեբեոս եպիսկոպոս**, գլ. Գ, էջ 17: Տե՛ս նաև **Սեբեոս**, գլ. Ե, էջ 60:

[73] **Սեբեոս եպիսկոպոս**, գլ. Գ, էջ 17: Տե՛ս նաև **Սեբեոս**, գլ. Ե, էջ 60:

[74] Փավստոս Բուզանդը՝ սխալվելով, Ոսխայի ճակատամարտը դնում է Խոսրով Կոտակի որդի Տիրան արքայի ձեռնադրությունից հետո, սակայն հունա-հռոմեական աղբյուրներն այն հստակ դնում են 297 թվին, այլ խոսքով Մծբինի հաշտությանը նախորդող տարում: Տե՛ս այդ կապակցությամբ **Eutropius,** Breviarium, IX, 24-25; **Rufus Festus,** Breviarium, XXV; **Aurelius Victor**, Caesares, XXXIX:

[75] **Սեբեոս եպիսկոպոս,** գլ. Գ, էջ 15: **Սեբեոս**, գլ. Ե, էջ 58:
[76] **Սեբեոս եպիսկոպոս**, գլ. Գ, էջ 15: **Սեբեոս**, գլ. Ե, էջ 58:

[77] **Փավստոս Բուզանդ,** դպր. Գ, գլ. ԻԱ:

[78] **Հ.Մանանդյան**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, մասն Ա, էջ 104:

[79] **Ուխտանես,** գլ. ՀՁ, էջ 111:

[80] **Մովսես Խորենացի**, գիրք Բ, գլ. ՂԲ:

[81] Ñî âåòñêàÿ èñòî ðè÷åñêàÿ ýí öèêëî ï åäèÿ, հատ. 11, ì î ñêâà, 1968, էջ 574:

[82] Մեծ Հայքի թագավորության արևելյան շրջաններում մինչև 293 թվականը շարունակեց իշխել Ներսեհ Սասանյանը, որը 293-ից գահակալեց Պարսկաստանում որպես արքայից արքա:

[83] **Ագաթանգեղայ** Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909, գլուխ Բ, §23. «Եւ ամս մետասան ստեպ ստեպ զայս օրինակ աւար առեալ՝ աւերէին զամենայն երկիր սահմանացն, որ ընդ Պարսից թագաւորութեամբն և ընդ իշխանութեամբն էր»:

[84] **Ագաթանգեղոս**, գլ. Ե, § 48:

[85] Անդ, գլ. Ե, §49:

[86] Անդ, գլ. Ը, §102-121:

[87] Անդ, գլ. ԺԱ, §122:

[88] Անդ, գլ. Ե, §51: Ագաթանգեղոսը՝ մինչև Տրդատի գահակալությունը, նշում է, որ «իբրև զգացեալ Տրդատիոս վասն Գրիգորի, թե Քրիստոնեական պաշտամանն հաղորդ է՝ սկսեալ այնուհետև պատուհասակոծ առնէր զնա և ազգի ազգի արհավիրս արկանէր ի վերայ նորա.

բազում անգամ ի բանդս և ի կապունս տանջանօք նեղեր զնա՝ թողուլ ի բաց լինել նմա յերկրպագութենէն Քրիստոսի...» (գլ. Գ, §38):

[89] Անդ, գլ. Ե, §52:

[90] Անդ, գլ. ԺԱ, §123:

[91] Որոշ ուսումնասիրողներ այս բանահյուսական հատվածը հակված են վերագրելու Տրդատ
Ա-ին, սակայն այն իրողությունը, որ Տրդատ Ա-ն հայ իրականությանը ծանոթ է միայն Արտաշես անունով, խիստ կասկածելի է դարձնում այդ տեսակետը:

[92] Անդ, գլ. ԺԱ, §124, գլ. ԺԲ, §125-130: Հարկ է նշել, որ §127-ում հանդիպում է «իմաստութիւն Յունաց հասցէ դաստակերտիդ կայսերաց» արտահայտությունը, որը Ս. Երեմյանը փորձում է բացատրել որպես Մեծ Հայքի հռոմեական հատվածի կայսերական դաստակերտ լինելով, սակայն Հ. Բարթիկյանը միանգամայն հիմնավորված ցույց է տվել, որ այս հատվածում իրականում եղել է «դաստակերտիդ ի կայսերաց», իսկ «ի» նախդիրը հետագայում ընկել է տե՛ս («Դաստակերտ կայսերաց»-ը ֆանտասմագորիա, տե՛ս ՊԲՀ, 1988, թիվ 4, էջ 104-107):

[93] Անդ, գլ. ԺԲ, § 132-135:

[94] Անդ, գլ. ԺԲ, § 136:

[95] Անդ, գլ. ԺԳ, § 137-150:

[96] Անդ, Գլ. ԺԴ, § 151-156, գլ. ԺԵ, §157-164: Տե՛ս գլ. ԺԴ, §152. «Ինքնակալ կայսր Դիոկղետիանոս, առ սիրելի եղբայր աթոռակից մեր Տրդատ, ողջոյն»:

[97] Անդ, Գլ. ԺԵ, §161:

[98] Այն իրողությունը, որ կայսրը պատրաստ է զիջել Հռիփսիմեին հայոց թագավորին, շատ կասկածելի է դարձնում այն տեղեկությունը, թե կայսրը կամենում է նրա հետ ամուսնանալ:

[99] **Ագաթանգեղոս,** գլ. ԺԵ, §164-172, գլ. ԺԶ, §173-179, գլ. ԺԷ, §180-192:

[100] Անդ, Գլ. ԺԷ, §197-201, գլ. ԺԹ, §202:

[101] Անդ, Գլ. ԺԹ, §205-206:

[102] Անդ, Գլ. ԺԹ, §209:

[103] Անդ, Գլ. ԺԹ, §210:

[104] Անդ, Գլ. Ի, §211:

[105] Անդ, Գլ. Ի, §212. «...եւեալ ըստ մարդկային բնութիւնս արտաքս՝ ի նմանութիւն վայրենի խոզաց, իբրև զնոսա ընդ նոսա ի մէջ նոցա երթեալ բնակէր»:

[106] Անդ, գլ. Ի, §215-216:

[107] Անդ, գլ. Ի, §216-222:

[108] Անդ, գլ. ՂԹ, §716-759:

[109] Անդ, գլ. ճԷ, §773-776:

[110] Անդ, գլ. ճԸ, §778:

[111] Անդ, գլ. ճԸ, §779-780:

[112] Անդ, գլ. ճԸ, §781:

[113] Անդ, գլ. ՂԸ, §712:

[114] Անդ, գլ. ճԸ, §783, գլ.ճԹ, §784:

[115] Անդ, գլ. ճԹ, §785:

[116] Անդ, գլ. ճԹ, §786:
[117] Անդ, գլ. ճԺ, §789-790:

[118] Անդ, գլ. ճԺԱ, §791-792:

[119] Անդ, գլ. ճԺԲ, §795-796:

[120] Անդ, գլ. ճԺԲ, տե՛ս Պատճէն հրովարտակին, § 797-801, գլ. ճԺԳ, § 802-804:

[121] Անդ, գլ. ճԺԳ, § 805:

[122] Անդ, գլ. ճԺԳ, § 806-808:

[123] Անդ, գլ. ճԺԴ, § 809:

[124] Մեզ է հասել ճշտորեն Աթանագենեսի նահատակության օրը: Նա ողջակիզվել է 303 թվականի հուլիսի 17-ին, հետևաբար Գրիգոր Լուսավորչի ուղևորությունը Կեսարիա և ձեռնադրությունը, պարզապես հնարավոր չէին մինչև այդ թվականը:

[125] **Ագաթանգեղոս**, գլ. ճԺԴ, §810-811, գլ. ճԺԵ, § 812-816:

[126] Անդ, գլ. ճԺԶ, § 817-819:

[127] Անդ, գլ. ճԺԷ, §828-831, գլ. ճԺԸ, §832:

[128] Անդ, գլ. ճԺԸ, §833:

[129] Անդ, գլ. ճԺԹ, §835

[130] Անդ, գլ. ճԺԹ, §836:

[131] Անդ, գլ. ճԺԹ, §837:

[132] Անդ, գլ. ճԺԹ, §838, գլ. ճԻ, §839-840:

[133] Անդ, գլ. ճԻ, §841 – 842:

[134] Անդ, գլ. ճԻԱ, §845:

[135] Անդ, գլ. ճԻԱ, §846:

[136] Անդ, գլ. ճԻԳ, §856:

[137] **G. Garitte**, Documents pour l`étude du livre d`Agathange, Citta del Vaticano, MCMXLVI:

[138] **«Ագաթանգեղոսի** պատմության հունական, նորահայտ խմբագրությունը (Վարք)», թարգմանություն հունարեն բնագրից՝ Հ. Բարթիկյանի, առաջաբան ու ծանոթագրություններ՝ Ա. Տեր – Ղևոնդյանի, տե՛ս «Էջմիածին», 1966, թիվ 7, էջ 46 – 51, թիվ 8, էջ 79 – 87:

[139] Ագաթանգեղոսի պատմության հունական նորահայտ խմբագրությունը (Վարք), տե՛ս «Էջմիածին», 1966, թիվ 8, էջ 85:

[140] Անդ:

[141] Անդ:

[142] **Ստեփանոս Օրբելյան**, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 25. «... ապա կարգէ և սուրբն Գրիգոր զեկեղեցական դասս, զգահ և պատիւ. եպիսկոպոսացն. և հրամայէ բազմել ընդ ինքեան աթոռով և ոսկենկար բարձու 36 եպիսկոպոսաց՝ 18 յաջմէ և 18 յահեկէ. յաջմէ առաջինն Հարքայ եպիսկոպոսն. և յահեկէ առաջինն Բասենոյն, իսկ զՍիւնին յաջ կողմանն յեօթներորդ գահուն նստուցանէ. և ցուցանէ զայս Սամուէլ Կամրջաձորեցի»:
Այս հարցի մասին մանրամասն տե՛ս Babken Harutyunyan, Die Diözesan – Gliederung dei Armeniens im IV. Th., տե՛ս ''Die Christranisierung des Kaukasus", Wien, 2002, էջ 81-94: Տե՛ս նաև Н.Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб,1908, էջ 328-329:

[143] **Ագաթանգեղոս**, գլ. ճԻԳ, § 858 – 860, գլ. ճԻԴ, § 861:

[144] **Մովսես Խորենացի**, գիրք Բ, գլ. ՂԱ:

[145] Անունները գիտակցաբար չենք նշում, որովհետև նրանք բոլորն էլ կրկնել են հանճարեղ Պատմահորը:

[146] Եթե դա իրոք այդպես լիներ, ապա ստացվում է, որ քրիստոնեությունը պետական կրոն է հռչակվել արդեն 303 թվին, ինչն ամենայն հավանականությամբ, մեր կարծիքով անհնարին էր դիոկղետիանոսյան հալածանքների շրջանում: Ուստի հիվանդության կամ ինչ-ինչ այլ պատճառով Գրիգոր Պարթևին բանտից ազատած և դրա համար երախտապարտ Տրդատ թագավորի մտքով անգամ չանցավ մկրտվել կամ ժողովրդին մկրտել: Նրա մեջ առաջինը խոսեց քաղաքական գործիչը:

[147] Մենք ժամանակին կարծում էինք, որ հայոց մեծամեծերի պատվիրակությունը Գրիգոր Պարթևին ձեռնադրելու համար մեկնել է Կեսարիա Երիզա - Նիկոպոլիս – Սեբաստիա - Կեսարիա երթուղով (տե՛ս «Հայաստանի պատմության ատլաս», Ա մաս, Երևան, 2004, էջ 44 - 45): Սակայն այժմ գտնում ենք, որ այն իրականացվեց Դարանաղի գավառ – Սեբաստիա - Կեսարիա երթուղով, իսկ վերադարձը՝ Կեսարիա - Սեբաստիա - Նիկոպոլիս - Երիզա երթուղով: Այս դեպքում է հնարավոր միայն, որ թագավորը Դարանաղիից սկսած ավերեր բոլոր մեհյանները և վերադառնար Վաղարշապատ:

[148] **Ագաթանգեղոս**, գլ. ՃԺԹ, § 835:

[149] Անդ, գլ. ՃԻ, § 842:

[150] **«Ագաթանգեղոսի** պատմության հունական նորահայտ խմբագրությունը (Վարք)», տե՛ս **Հրաչ Բարթիկյան**, Հայ - բյուզանդական հետազոտություններ, հատ. Ա, հայերեն հոդվածներ, Երևան, 2002, էջ 172:

[151] Անդ:

[152] **Ագաթանգեղոս**, գլ. ՃԺԲ, § 785 – 790:

[153] **Հ. Բարթիկյան**, “Narratio de rebus Armeniae” հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ քաղկեդոնական սկզբնաղբյուր, տե՛ս «Բանբեր Մատենադարանի», թիվ 6, 1962, էջ 100: Տե՛ս նաև **Հ. Բարթիկյան**, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հատ. Ա, էջ 460:

[154] **Ռուբեն Մանասերյան**, Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, էջ 197:

[155] **Բ. Հ. Հարությունյան**, Հայաստանի պատմության ատլաս, Ա մաս, քարտեզ 38 – 39:

[156] **Ռուբեն Մանասերյան** , Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, էջ 197: Տե՛ս նաև N. Adontz, Les vestiges d`un aucien culte en Arménie – “Mélanges Franz Cumont”, 1936, էջ 513:

[157] **Հ. Պ. Անանյան,** Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը և պարագաները, էջ 147 -148:

[158] Անդ, էջ 148:

[159] **Ռ. Մանասերյան**, Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, էջ 197 – 198:

[160] Անդ, էջ 198:

[161] Անդ:

[162] Անդ:

[163] **Ժան-Պիեռ Մահե,** Ագաթանգեղոսի «Պատմությունը» և հունա-հռոմեական վեպը, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1997, թիվ 1, էջ 163 – 164:

[164] **Ռ. Մանասերյան**, Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, էջ 199:

[165] Անդ:

[166] Անդ:

[167] Անդ:

[168] Անդ:

[169] Նման օրինակներ պատմության մեջ կարելի է շատ բերել: Բավարարվենք միայն հայոց Տիգրան Մեծ (մ.թ.ա 95 - 55) թագավորի օրինակով: Քանի դեռ պարթևական գահի վրա էր Միհրդատ Բ-ն, որի արքունիքում նա մեծացել և դաստիարակվել էր, նա պատերազմ չսկսեց Պարթևական թագավորության դեմ, սակայն իրեն լրիվ ազատ զգաց նրա մահից հետո:

[170] **Հ. Պ. Անանյան**, Ս. Գրիգոր Լուսասորչի ձեռնադրութեան թուականը եւ պարագաները, էջ 150:

[171] **«Ագաթանգեղոսի** պատմության հունական նորահայտ խմբագրությունը (Վարք)», տե՛ս Հ. Բարթիկյան, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հատ. Ա, 133, էջ 175:

[172] **Հ. Պ. Անանյան**, Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը եւ պարագաները, էջ 151:

[173] Անդ, էջ 152:

[174] «Կանոնագիրք Հայոց», հատ. Ա, աշխատասիրությամբ՝ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1964, էջ 168 – 176:

[175] Անդ, էջ 169:

[176] Անդ, էջ 179:

[177] **Հ. Պ. Անանյան**, Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը եւ պարագաները, էջ 152 – 153:

[178] **Lebon,** Sur un concile de Césarée, տե՛ս "Muséon", 51 (1938) էջ 89 – 132:

[179] «Կանոնագիրք Հայոց», հատ. Ա, էջ 150:

[180] Անդ, էջ 140:

[181] **Հ. Պ. Անանյան**, Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը եւ պարագաները, էջ 155:

[182] **Lebon**, Sur un concile de Césarée, էջ 128:

[183] **Gérard Garitte**, Documents pour I` étude du Livre d`Agathange, տե՛ս Studi e testi, 127, citta dee Vaticano, 1946, էջ 131:

[184] **Հ. Պ. Անանյան,** Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը եւ պարագաները, էջ 157:

[185] «Կանոնագիրք Հայաստանեայց Եկեղեցւոյ», հատ. Ա, Կանոնք Առաքելականք, Հրատ. Հ. Հ. Կետիկեան, Վենետիկ, 1941, Կանոն ԼԵ, էջ 57: Վ. Հակոբյանի հրատարակած «Կանոնագիրք Հայոց»-ի մեջ «Առաքելական Կանոնք»-ում ԼԵ կանոնը չկա:

[186] **Հ. Պ. Անանյան**, Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը եւ պարագաները, էջ 157 – 158:

[187] Կեսարիայի ժողովի մասնակիցներից չորրորդի՝ Վաղենտինոսի անունը մենք պարզապես մեջ չբերեցինք, քանի որ Հ. Պ. Անանյանը չի կարողացել պարզել նրա աթոռանիստը:

[188] **Հ.Պ. Անանյան**, Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրության թուականը եւ պարագաները, էջ 158-160:

[189] Պաղեստինի եպիսկոպոսի մասնակցությունը Կեսարիայի ժողովին Հ. Պ. Անանյանը հակված է բացատրելու նրա Անկյուրիայի ժողովին մասնակցությամբ, որը հազիվ թե ուժեղ կռվան է, քանի որ այդ սկզբունքով տեսականորեն ուրիշներն էլ կարող էին մասնակցել:

[190] **Հ. Պ. Անանյան,** Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը և պարագաները, էջ 160-161:

[191] Անդ, էջ 162 – 163:

[192] «Կանոնագիրք Հայոց», հատ. Ա, էջ 169-176:

[193] **«Ագաթանգեղոսի** պատմության հունական նորագյուտ խմբագրությունը (Վարքը)» , էջ 175:

[194] Անդ, էջ 175: **Ագաթանգեղոս**, գլ. ճԺԲ, §797:

[195] **Ագաթանգեղոս**, գլ. ճԺԲ, §800:

[196] **Ագաթանգեղոս,** գլ. ճԺԳ, §805:

[197] **Հ. Պ. Անանյան,** Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը եւ պարագաները, էջ 166:

[198] **«Ագաթանգեղոսի** պատմության հունական նորահայտ խմբագրությունը (Վարք)», էջ 176:

[199] Անդ:

[200] **Հ. Պ Անանյան**, Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը և պարագաները, էջ 166:

[201] **Ագաթանգեղոս**, գլ. ճԺԴ, 806

[202] Կասկած չկա, որ որոշակի շարժառիթներով Փոքր Հայքի եպիսկոպոսներին նման իրավունք վերապահել էր Կեսարիայի միտրոպոլիտը, քանի որ այն մի կողմից օրինականություն էր հաղորդում ձեռնադրությանը, իսկ մյուս կողմից միտրոպոլտի և կայսեր անհամաձայնության դեպքում Փոքր Հայքի ոչ մի եպիսկոպոս կաթողիկոսական թեկնածուին երբեք երաշխավորական նամակ չէր տա:

[203] **Հ. Պ. Անանյան**, Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռնադրութեան թուականը և պարագաները, էջ 175:

[204] **Մ. Աբեղյան**, Հայոց հին գրականության պատմություն, հատ. Ա, Երևան, էջ 172

[205] Մենք օգտագործել ենք սույն աշխատության թարգմանությունը, որը կատարել է և մեզ է տրամադրել Վ. Պողոսյանը, որի համար հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը: Եվ քանի որ հայերեն թարգմանությունը ոչ մի տեղ հրատարակված չէ, մենք ստիպված ենք հրաժարվել տողատակերից:

[206] **Ագաթանգեղոս,** գլ. ճԻԳ, §856:

[207] **Ագաթանգեղոս,** գլ. ճԻԳ, §856 – 858:

[208] Անդ, գլ. ճԻԳ, § 859 – 860, ճԻԴ, §861:

[209] Անդ, գլ. ճԻԴ, § 261-862:

[210] Անդ, գլ. ճԻԵ, §867 – 871:

[211] Պատմիչը գրում է «Եօթանասուն հազարաւ ընտիր ընտիր զօրու հանդերձ», ինչը շատ կասկածելի է դարձնում 70 հազարի ճշտությունը: Կարելի է ենթադրել, որ ընտիր ընտիր զորքերը շատ ավելի համեստ թիվ էին կազմում, թերևս ընդամենը հազար մարդ: Էլ չենք ասում այն մասին, որ կայսրությունն էլ այդքան մեծ թվով մարդիկ չէր ընդունի: Ըստ երևույթին «զհազար»-ը վերածվել է Կ հազարի և դարձել 70 000: Հունական Ագաթանգեղոսն անհամեմատ ավելի ընդարձակ է տալիս Տրդատի և Գրիգոր Լուսավորչի կողմից կայսրություն գնալը և դաշինք կնքելը: Պարզվում է, որ հայոց թագավորը՝ ստանալով կայսերական նամակը, և մեծ պատվով ու թափորով ընդունելով կայսեր դեսպաններին, երկրում թողնում է սպարապետին և ուղևորվում Դարանաղի, որտեղ՝ քարայրում Գրիգորին ներկայացնելով կայսեր նամակը առաջարկում է նրան իր հետ ուղևորվել կայսրություն: Եվ նրանք՝ պարզելով թագավորական և կուսակալների ու մեծամեծերի դրոշակները և հնչեցնելով փողերը, զորաշարք են կազմում և մեկնում կայսրություն: Հունական Ագաթանգեղոսը գնացողների ընդհանուր թիվը համարում է 10 հազար, քանի որ թագավորը չի կամենում իր հետ ավելի շատ մարդ վերցնել, որովհետև մեծ կայսեր մոտ էր գնում, բայց ոչ էլ պակաս՝ իր թագավոր լինելու հանգամանքով: Նրանց ընդունում են յուրաքանչյուր քաղաքում և գյուղում: Ճանապարհին մտնում են Կեսարիա և հանդիպում սուրբ հայրապետ Ղևոնդիոսին և երեք օր անց մեկնում կայսրության խորքերը: Հակառակ հայկական Ագաթանգեղոսի, որ հանդիպումը դնում է Դաղմատացվոց երկրում, հունական Ագաթանգեղոսը, մի բան որ անշուշտ չի համապատասխանում ճշմարտությանը, հանդիպումը դնում է Հռոմում: Սա անշուշտ խմբագրի մեղքով է աղավաղվել: Եվ հազիվ թե Պետրոս առաքյալի եկեղեցում աղոթք է եղել: Հայոց թագավորը և հայրապետը կայսրին նվերներ են մատուցում՝ երիվարներ, մարգարիտներ, սպասներ, թանկագին քարեր և մետաքսաթել բազմաթիվ հանդերձներ, ըստ որում ոչ միայն կայսերը. այլև բոլոր պատրիկներին և մեծ իշխաններին: Հայերը վերադառնում են՝ անցնելով մեծ ծովը (իմա՛ Միջերկրական ծովը – Հ. Բ.), Պոնտացվոց երկիրը, Հայաստան: Այս ամենից հետո Գրիգոր Լուսավորիչը նորից գնում է ճգնելու Մանյա Այրք (**«Ագաթանգեղոսի** պատմության հունական նորահայտ խմբագրությունը (Վարք)», էջ 178 – 192): Եղել են, թե ոչ այս մանրամասնությունները նախնական բնագրում, դժվար է ասել: Մենք հակված ենք կարծելու, որ ավելի շուտ չեն եղել և մանրամասները ավելի շատ խմբագրի երևակայության արդյունքն են, որի վկայությունն է հանդիպումը Հռոմում դնելը և ոչ Դաղմատացվոց աշխարհում: Ուշադրություն է գրավում նաև այն հանգամանքը, որ հունական Ագաթանգեղոսը հայկական Ագաթանգեղոսի 70 հազարի դիմաց ունի 10 հազար, որն ուղղակի հավաստում է, որ սկզբնական բնագրում խոսք է գնացել երևի միայն մեկ հազարի մասին: Կա մի մանրամասն ևս, որ արժանի է ուշադրության: Հայկական Ագաթանգեղոսում հեղինակը համարվում է բոլոր դեպքերի ականատես, իսկ հունական և ասորական Ագաթանգեղոսում հեղինակը համարվում է դեպքերի մի մասի մասնակից և ականատես:

[212] **Ագաթանգեղոս**, գլ. ճԺԶ, §873 – 874:

[213] Անդ., գլ. ճԻԷ, §884 - 885:

[214] Անդ., գլ. ՃԻԷ, §890 - 892:

[215] Անդ., գլ. ՃԻԷ, §897:

[216] Անդ:

[217] **Մովսես Խորենացի**, գիրք Բ, գլ. ՁԸ:

[218] Անդ:

[219] Անդ:

[220] Անդ:

[221] Անդ., գիրք Բ, գլ. ՁԹ:

[222] Անդ., գիրք Բ, գլ. Ղ:

[223] Անդ., գիրք Բ, գլ. ՂԱ:

[224] Անդ.:

[225] Անդ.:

[226] Անդ.:

[227] Անդ., գիրք Բ, գլ. ՂԲ:

[228] Անդ.:

[229] Անդ.: